ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ՊՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ISSN 1829-0108

4 (114). 2022

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ–125

ИВАН БАГРАМЯН–125

HOVHANNES BAGHRAMYAN–125

ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

СОВЕРШЕНСТВОВАНИЕ СИСТЕМЫ ВОЕННОГО ОБРАЗОВАНИЯ

IMPROVEMENT OF MILITARY EDUCATION SYSTEM

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Ռուսաստանի Դաշնություն կատարած աշխատանքային այցի շրջանակում Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար *Սուրեն Պապիկյանի* և Ռուսաստանի Դաշնության Պաշտպանության նախարար, բանակի գեներալ *Սերգեյ Շոյգուի* հանդիպումը, որի ժամանակ ստորագրվել է ՀՀ և ՌԴ պաշտպանության նախարարությունների միջև ռազմական համագործակցության 2023 թ. ծրագիրը:

Ռուսաստանի Դաշնություն, 2022 թ. դեկտեմբերի 9

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

4 (114). **2022**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Տավարածյան Գ. Վ.
(նախագահ)
Չիլինգարյան Դ. Ս.
(գլխավոր խմբագիր)
Այդինյան Ռ. Ա.
Այվազյան Լ. Գ.
Ասատրյան Զ. Դ.
(գլխ. խմբագրի տեղակալ)
Մարտիրոսով Լ. Ա.
Շահնազարյան Թ. Ն.
Պողոսյան Ա. Մ.
Սարգսյան Ա. Գ.
Սիմոնյան Ս. Վ.
Ստեփանյան Հ. Լ.
Տեր-Գրիգորյանց Ն. Գ.
Քոչարյան Տ. Տ.
Քոչունց Կ. Գ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ–125

Հովհաննես Բաղրամյան–125 7
Ֆ. Տ. Սարգսյան, Մարշալ Հովհաննես Բաղրամյան 11
Հ. Ա. Բաղրամյան, Չարդախլուի ֆենոմենը 29

ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

Վ. Վ. Մելքոնյան, Հայաստանի Հանրապետությունում ռազմական կրթության նոր հայեցակարգի մշակման նկատմամբ որոշ մեթոդաբանական մոտեցումներ՝ պատերազմների փոփոխվող բնույթի հաշվառմամբ 45
Տ. Ս. Հարությունյան, Միջազգային ռազմական համագործակցության շրջանակներում ՀՀ ռազմական կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների հիմնական ուղղությունները և դրանց բովանդակությունը 58
Զ. Դ. Ասատրյան, Ռազմական ոլորտում մասնագիտական գիտելիքների և անձնային հատկությունների համալիր գնահատման հարցի շուրջ 68
Բ. Լ. Երիցյան, Ռազմակիրառական հմտությունների զարգացման որոշ հարցեր հրետանավոր կուրսանտների ֆիզիկական մարզումների օրինակով 79

ՌԱԶՄԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա. Հ. Մելիքյան, Էյնշտեյնը և որոշ ժամանակակից տեխնոլոգիաներ 87

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա. Մ. Կյուրեղյան, Լ. Մ. Պետրոսյան, Տնտեսության՝ որպես պաշտպանունակության հիմքի զարգացման միտումները Հարավային Կորեայի օրինակով 100

ՌԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

Ս. Ա. Պարզյան, Ա. Ռ. Համբարձումյան, Լ. Գ. Հովհաննիսյան, Լեռնային պայմաններում զինծառայությանը անձնակազմի պատրաստման որոշ առանձնահատկություններ 114

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. Ռ. Մարտիրոսյան, «Սպարապետ» և «հազարապետ» բառույթների իմաստային կառուցվածքի զարգացումը հայերենում 123

ԳԻՏԱԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ա. Գ. Ավագյան*, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Լ. Ս. Արզումանյան,* բանասիրական գիտությունների դոկտոր, *Ս. Գ. Գալստյան,* բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Հ. Ա. Գևորգյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ա. Ա. Հախումյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Հ. Հ. Մաթևոսյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, *Մ. Մ. Մարգարյան,* քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Մ. Վ. Մարկոսյան,* տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ա. Հ. Մելիքյան,* ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Է. Գ. Մինասյան,* պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Վ. Գ. Սահակյան,* ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, *Հ. Յ. Սայադյան,* աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ռ. Ա. Սաֆրաստյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Վ. Վ. Սելիվանով* (ՌԴ), տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Յու. Մ. Սուվարյան,* ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Հ. Ս. Քոթանջյան,* քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), պրոֆեսոր, ՌԴ ՌԳԱ իսկական անդամ, *Տ. Տ. Քոչարյան,* քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Գ. Վ. Տավարածյան, գեներալ-մայոր (նախագահ), *Տ. Տ. Քոչարյան,* գնդապետ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (նախագահի տեղակալ), *Ա. Ս. Բաղդանյան,* գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու, *Ա. Վ. Հայրապետյան,* գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու, *Հ. Հ. Հովհաննիսյան,* գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու, դոցենտ, *Դ. Մ. Մանասյան,* պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, *Մ. Ա. Պետրոսյան,* քաղաքական գիտությունների թեկնածու, դոցենտ, *Ս. Ա. Սուջյան,* աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, պահեստազորի գնդապետ

«АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)
ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОГО
ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО УНИВЕРСИТЕТА ОБОРОНЫ
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
№ 4 (114)**. 2022**
Издается 4 раза в год

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Таварацян Г. В. (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор), *Айвазян Л. Г.*, *Айдинян Р. А.*, *Асатрян З. Д.* (зам. гл. редактора), *Кочарян Т. Т.*, *Кочунц К. Г.*, *Мартиросов Л. А.*, *Погосян А. М.*, *Саргсян А. Г.*, *Симонян С. В.*, *Степанян Г. Л.*, *Тер-Григорьянц Н. Г.*, *Шахназарян Т. Н.*

СОДЕРЖАНИЕ

ИВАН БАГРАМЯН – 125

Иван Баграмян – 125 7
Ф. Т. Саргсян. Маршал Иван Баграмян . . . . . 11 (26)*
Г. А. Баграмян. Чардахлинский феномен 29 (40)

СОВЕРШЕНСТВОВАНИЕ СИСТЕМЫ ВОЕННОГО ОБРАЗОВАНИЯ

В. В. Мелконян. Некоторые методологические подходы к разработке новой концепции военного образования в Республике Армения с учетом меняющегося характера войн 45 (55)
Т. С. Арутюнян. Основные направления и содержание реформ, осуществляемых в сфере военного образования РА в рамках международного военного сотрудничества 58 (66)
З. Д. Асатрян. К вопросу комплексной оценки в военной сфере профессиональных знаний и личностных качеств 68 (77)
Б. Л. Ерицян. Некоторые вопросы развития военно-прикладных навыков на примере физических тренировок курсантов-артиллеристов 79 (85)

ВОЕННАЯ ИНЖЕНЕРИЯ

А. О. Меликян. Эйнштейн и некоторые современные технологии 87 (97)

ОБОРОННАЯ ЭКОНОМИКА

А. М. Кюрегян, Л. М. Петросян. Тенденции развития экономики как основы обороноспособности: на примере Южной Кореи 100 (112)

---

* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

ВОЕННАЯ МЕДИЦИНА

С. А. Парзян, А. Р. Амбарцумян, Л. Г. Оганнисян. Некоторые особенности подготовки личного состава к прохождению службы в горных условиях 114 (120)

ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ

А. Р. Мартиросян. Развитие семантической структуры лексем «спарапет» и «азарапет» в армянском языке 123

НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:

А. Г. Авагян, доктор исторических наук, профессор;
Н. У. Аракелян, академик НАН РА; *Л. С. Арзуманян,* доктор филологических наук;
А. А. Ахумян, член-корреспондент НАН РА, доктор физико-математических наук, профессор; *С. Г. Галстян,* доктор медицинских наук, профессор;
Г. А. Геворкян, академик НАН РА; *Г. С. Котанджян,* доктор политических наук (РФ), профессор, действительный член АВН РФ; *Т. Т. Кочарян,* доктор политических наук, профессор; *М. М. Маргарян,* доктор политических наук, профессор;
М. В. Маркосян, доктор технических наук, профессор;
Г. Г. Матевосян, член-корреспондент НАН РА; *А. О. Меликян,* член-корреспондент НАН РА, доктор физико-математических наук, профессор; *Э. Г. Минасян,* доктор исторических наук, профессор; *В. Г. Саакян,* кандидат физико-математических наук; *Р. А. Сафрастян,* академик НАН РА; *О. Я. Саядян,* доктор географических наук, профессор; *В. В. Селиванов (РФ),* доктор технических наук, профессор;
Ю. М. Суварян, академик НАН РА

ВОЕННО-НАУЧНЫЙ СОВЕТ:

Г. В. Таварацян, генерал-майор (председатель); *Т. Т. Кочарян,* полковник, доктор политических наук, профессор (заместитель председателя);
А. В. Айрапетян, полковник, кандидат военных наук; *А. С. Багданян,* полковник, кандидат военных наук; *Д. М. Манасян,* кандидат исторических наук, доцент;
Г. О. Оганисян, полковник, кандидат военных наук, доцент;
М. А. Петросян, кандидат политических наук, доцент;
С. А. Суджян, кандидат географических наук, доцент, полковник запаса

«HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)
DEFENSE-ACADEMIC JOURNAL,
NATIONAL DEFENSE RESEARCH UNIVERSITY,
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 4 (114)**. 2022**
Is published 4 times a year

EDITORIAL BOARD

Tavaratsyan G. V. (Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Asatryan Z. D.* (Deputy Editor-in-Chief), *Ayvazyan L. G., Idinyan R. A., Kocharyan T. T., Kochunts K. G., Martirossov L. A., Poghosyan A. M., Sargsyan A. G., Shahnazaryan T. N., Simonyan S. V., Stepanyan H. L., Ter-Grigoryants N. G.*

CONTENTS

HOVHANNES BAGHRAMYAN-125

Hovhannes Baghramyan-125 7
F. T. Sargsyan. Marshal Hovhannes Baghramyan . . . . . 11 (27)*
H. A. Baghramyan. The phenomenon of Chardakhlu 29 (41)

IMPROVEMENT OF MILITARY EDUCATION SYSTEM

V. V. Melkonyan. Some methodological approaches to developing the new concept of military education in the Republic of Armenia with a view on the changing nature of war 45 (57)
T. S. Harutyunyan. The main directions and content of the reforms being implemented in the RA military education sphere in the framework of international military cooperation 58 (67)
Z. D. Asatryan. On the issue of complex assessment of professional knowledge and personality traits in the military sphere 68 (78)
B. L. Yeritsyan. Some issues of developing military-applied skills: case study of physical training of cadet artillerists 79 (86)

MILITARY ENGINEERING

A. H. Melikyan. Einstein and some of the modern technologies 87 (98)

DEFENSE ECONOMICS

A. M. Kyureghyan, L. M. Petrosyan. Tendencies of developing the economy as a basis for the defense capability: South Korea case study 100 (113)

* Numbers in brackets mean the page of the text in English.

MILITARY MEDICINE

S. A. Parzyan, A. R. Hambardzumyan, L. G. Hovhannisyan. Some peculiarities of personnel training for military service in mountainous conditions 114 (121)

MILITARY TERMINOLOGY

A. R. Martirosyan. The development of the semantic structure of lexemes «Sparapet» and «Hazarapet» in the Armenian language . 123

ACADEMIC-ADVISORY COUNCIL:

A. G. Avagyan, Doctor of History, Professor; *N. H. Arakelian,* Full Member, NAS, RA; *L. S. Arzumanyan,* Doctor of Philology; *S. G. Galstyan,* Doctor of Medical Sciences, Professor; *H. A. Gevorkian,* Full Member, NAS, RA; *A. A. Hakhumyan,* Corresponding Member, NAS, RA, Doctor of Physical and Mathematical Sciences, Professor; *T. T. Kocharyan,* Doctor of Political Sciences, Professor; *H. S. Kotanjian,* Doctor of Political Sciences (RF), Professor, Full Member, Academy of Military Science, RF; *M. M. Margaryan,* Doctor of Political Sciences, Professor; *M. V. Markosyan,* Doctor of Technical Sciences, Professor; *H. H. Matevosyan,* Corresponding Member, NAS, RA; *A. H. Melikyan,* Corresponding Member, NAS, RA, Doctor of Physical and Mathematical Sciences, Professor; *E. G. Minasyan,* Doctor of Historical Sciences, Professor; *R. A. Safrastyan,* Full Member, NAS, RA; *V. G. Sahakyan,* PhD in Physical and Mathematical Sciences; *H. Y. Sayadyan,* Doctor of Geography, Professor; *V. V. Selivanov (RF),* Doctor of Technical Sciences, Professor; *Yu. M. Suvaryan,* Full Member, NAS, RA

DEFENSE-ACADEMIC COUNCIL:

G. V. Tavaratsyan, MG (Chairman); *T. T. Kocharyan,* Colonel, Doctor of Political Sciences, Professor (Deputy Chairman); *A. S. Baghdanyan,* Colonel, PhD in Military Sciences; *A. V. Hayrapetyan,* Colonel, PhD in Military Sciences; *H. H. Hovhannisyan,* Colonel, PhD in Military Sciences, Associate Professor; *D. M. Manasyan,* PhD in History, Associate Professor; *M. A. Petrosyan,* PhD in Political Sciences, Associate Professor; *S. A. Sujyan,* PhD in Geography, Associate Professor, Colonel (Ret.)

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ – 125

Հազարամյակներ տևող իր պատմության մեջ հայ ժողովուրդը հաճախ է ստիպված եղել սուր մերկացնելու հանուն իր կյանքի և ազատության, իր ստեղծած հոգևոր-մշակութային արժեքների և մտավոր նվաճումների պաշտպանության: Եվ հաճախ են քաջարի հայ զինվորին ռազմի դաշտում առաջնորդել տաղանդավոր զորավարներն ու հմուտ զորապետները: Այդ փառապանծ և ամեն ազնիվ հայի համար թանկագին աստղաբույլում իր պատվավոր տեղն ունի Հովհաննես Քրիստափորի (Իվան Խաչատուրի) Բաղրամյանը:

Պատերազմներն, իհարկե, անասելի ցավ ու տառապանք են պատճառում ազգերին ու ժողովուրդներին, սակայն դրանք անխուսափելի են եղել և անխուսափելի կլինեն մարդկության պատմության ամբողջ ընթացքում, քանի որ ժամանակ առ ժամանակ թվապես աճող մարդկության առաջ ծառանում է

մոլորակի կենսական ռեսուրսների բաշխման ու վերաբաշխման խնդիրը, որը, թերևս, պատերազմների ծագման բազմատարր պատճառներից հիմնականն է:

Պատերազմների պատմությունը չթվագրվող հնություն ունի, ուստի դարերի ու հազարամյակների ընթացքում պարսատիկային պարզ կռիվը զարգացել է ընդհուպ մինչև ռազմական արվեստի մակարդակի: Ինչպես նշվեց վերը, բովանդակ հայ Ազգն ու ժողովուրդը ևս բոլոր ժամանակների պատերազմական թատերաբեմերում իր հերոսական պայքարն է տվել և ռազմաբեմերում ծնել իրեն առաջնորդող հանճարեղ զորավարներ ու զորապետներ:

Իր ապրած կյանքի 85 բեղուն տարիներից 67-ը ռազմական գործին ու արվեստին նվիրած զորահրամանատար Հովհաննես Բաղրամյանը հիրավի այն գործիչներից է, որի համբավն ու հեղինակությունը արդեն իր կենդանության օրոք դուրս էին եկել մի կյանքի տիրույթից և համակել ամբողջ հայ ժողովրդին: Եվ հենց իր ժողովրդի համար բախտորոշ ու ողբերգական ժամանակներում էլ՝ 1915 թվականին, սկսվեց Հովհաննես Բաղրամյանի հաղթական ռազմերթը՝ որպես շարքային զինվորի: Սակայն ռազմական գործում նա իր փառքի գագաթնակետին հասավ երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ հետևում թողնելով ժամանակավոր սակավ անհաջողություններով և բազում սրընթաց վերելքներով լի կյանք, հասնելով Խորհրդային Միության մարշալի կոչման ու Խորհրդային Միության կրկնակի հերոսի փառքի, Հայրենական մեծ պատերազմի հրամատարի պաշտոնի:

Մեծ ու անգնահատելի է մարշալ Բաղրամյանի ավանդը գերմանա-ֆաշիստական ուժերի դեմ ԽՍՀՄ տարած դժվարին, բայց հիմնավոր հաղթանակում:

Նրա ազգօգուտ կերպարը, նրա վառ հիշատակը այսօր և առմիշտ խոնարհումով ու երախտիքով են խնկարկում ոչ միայն հայ, այլև բոլոր այն խորհրդային ժողովուրդները, որոնք նախորդ դարի կեսերին կենաց ու մահու պայքար էին մղում գերմանա-ֆաշիստական խունտայի դեմ: Ու թեև խորհրդային բոլոր ազգերի համար էր 1941–1945 թթ. Հայրենական մեծ պատերազմում հաղթանակը էթնոտեսակի պահպանման գոյութենաբանական (էկզիստենցիալիստական) օրախնդիր, բայց «հայ ժողովրդի համար այս հաղթանակն ուներ ևս մի՝ բախտորոշ նշանակություն, քանի որ կանխեց երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին հայերի 1915 թ. եղեռնի կրկնության հնարավորությունը»[1]:

Բազում ճակատամարտերում ու պատերազմներում հնարավոր բոլոր փորձություններով անցած այս ոգեղեն հսկան, մինչև իր փառահեղ կյանքի ավարտը մնաց անասելի բարի, զուսպ, խոհեմ ու շրջահայաց մի հայ, որն անքակտելի կապով էր կապված իր հարազատ ազգի ու ժողովրդի հետ:

[1] *Կ. Ա. Մուրադյան,* Մարշալ Բաղրամյանը մարշալ Ժուկովի մասին: Ե., «ՀԲ», 1997, հ. 1–2:

լինելով մոսկվաբնակ և, առհասարակ, Խորհրդային պետության քաղաքացի՝ նա երբեք դիմադարձ չկանգնեց Մայր հայրենիքի ու հայրենակիցների հոգս ու խնդիրներին: Ժամանակակիցները վկայում են, որ հետագայում Խորհրդային Հայաստանից բոլոր ծանրակշիռ քաղաքական, պետական գործիչներն ու պատվիրակություններն աշխատանքային այցով Կրեմլ գնալուց առաջ այցելում էին մեր առասպելական զորապետ մարշալ Բաղրամյանին՝ բազում հարցերի վերաբերյալ խորհրդակցելու նպատակով: Թերևս նա իր անքննարկելի և անսահման հեղինակությամբ կարողանում էր արժեքավոր տեղեկություններ հաղորդել կամ գուցեև ազդել ոչ հայանպաստ որոշումների վրա[2]:

Ինչևէ, բազմաթիվ են զորահրամանատարի արժանիքներն ու տաղանդները, որոնց մասին կարելի է անվերջ խոսել: Բայց այստեղ ուզում ենք նշել նրա՝ որպես ԽՍՀՄ պաշտպանության նախարարի՝ թիկունքի գծով տեղակալի ու հմուտ կազմակերպչի մեծ ներդրումը ԽՍՀՄ-ում ռազմական գիտության ու կրթության համակարգերի զարգացման գործում: Հանճարեղ զորավարն օժտված էր նաև ռազմամանկավարժական հիանալի տաղանդով: Ռազմագիտական խոր տեսական և գործնական գիտելիքներով զինված՝ նա լուրջ ավանդ է ներդրել բանակի համար բարձր հրամանատարական կադրեր պատրաստելու գործում՝ դասախոսելով ռազմարվեստի պատմություն առարկան: Այդ մասին ինքը՝ Բաղրամյանը, գրում է. «Գնդի հրամանատար լինելուց, Ֆրունզեի անվան ակադեմիայում սովորելուց և Բլինովի անվան 5-րդ հեծյալ դիվիզիայի շտաբի պետի պաշտոնում աշխատելուց հետո ինձ ուղարկեցին Գերագույն շտաբի ակադեմիա, որն ավարտելուց հետո ինձ թողեցին ակադեմիայում՝ որպես ավագ դասախոսի»[3]:

Այսպես. Հովհաննես Բաղրամյան ռազմական մեծ գործիչը, ռազմագետն ու ռազմագիտական վավերագիրը հմուտ էր թե՛ իբրև մարտական հրամանատար, թե՛ իբրև թիկունքային, այդ թվում՝ ռազմակրթական գործի կազմակերպիչ:

«Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսը մեծ զորավարի 125-րդ տարեդարձին անդրադառնում է նրա կյանքին ու գործունեությանը՝ վերատպելով 1997 թվականին նրա հոբելյանական 100-ամյակին նվիրված համարում զետեղված երկու հոդված: Առաջինը այն ժամանակ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ, Ռուսաստանյան ռազմագիտական ակադեմիայի ակադեմիկոս, պաշտոնաթող գեներալ-մայոր Ֆադեյ Տաճատի Սարգսյանի (1923–2010) «Մարշալ Հովհաննես Բաղրամյան» հոդ-

[2] Տես, օրինակ, *Հայկ Հայրապետյան,* Պատի՛վ ունեմ, պարոնա՛յք սպաներ (անտիպ): Թարգմանիչ՝ Դ. Ս. Չիլինգարյան:

[3] Маршалы, генералы и адмиралы армянского происхождения в Санкт-Петербурге. Биографический справочник, составил Армен Меружанян, Санкт-Петербург, изд-во «Роза ветров», 2013, стр. 76.

վածն է, երկրորդը՝ մարշալի Աբգար եղբոր որդու, զինվորական իրավաբան, պահեստազորի գնդապետ Հրանտ Բաղրամյանի (1922–1999) «Չարդախ-լուի ֆենոմենը»: Հարկ է նշել, որ հոդվածների հեղինակները ոչ միայն անձամբ էին ճանաչում մարշալ Բաղրամյանին, այլև բավական ջերմ ու մտերմիկ հարաբերություններ ունեին նրա հետ:

Խմբագրությունը, հակված լինելով այն մտքին, որ մարշալ Բաղրամյանի կյանքի ու գործի հիմնական դրվագների մասին հիմնարար կերպով խոսվել է ցայժմ (գրվել են տասնյակ գիտական աշխատություններ, հուշեր, կենսագրականներ, մենագրություններ և այլն), զերծ է մնում հայտնի փաստերի վերաշարադրանքից և հարկ է համարում վերատպել ժամանակին նորույթ պարունակող սույն ուսումնասիրությունները, որոնք մեկ անգամ ևս կարժեքավորեն ոչ միայն միութենական, այլև համաշխարհային փառք ու ճանաչում վայելած մեծանուն հայ զորավարի կենսագործունեությունը:

ՄԱՐՇԱԼ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ

Ֆ. Տ. ՍԱՐԳՍՅԱՆ, պաշտոնաթող գեներալ-մայոր,
ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ,
Ռուսաստանյան ռազմագիտական ակադեմիայի ակադեմիկոս

Դարերի ընթացքում հայ ժողովուրդը տվել է բազմաթիվ զորահրամանատարներ, որոնք, անմնացորդ ծառայելով ժողովրդին ու պետությանը, պաշտպանել են հայրենիքը, բարձրացրել են նրա ռազմական փառքը և նոր մակարդակի հասցրել ռազմական արվեստը:

Հայ ժողովրդի ծոցից դուրս եկած տաղանդավոր զորահրամանատարների համաստեղության մեջ ամենապայծառը Խորհրդային Միության մարշալ, Խորհրդային Միության կրկնակի հերոս Հովհաննես Քրիստափորի (Իվան Խաչատուրի) Բաղրամյանն է, որի ծննդյան 100-ամյակը նշվում է այս օրերին: Բաղրամյանի անունը ոսկե տառերով է գրված Խորհրդային Միության ժողովուրդների Հայրենական մեծ պատերազմի տարեգրության մեջ և իր պատվավոր տեղն է գրավում այնպիսի ականավոր զորահրամանատարների շարքում, ինչպիսիք են Խորհրդային Միության մարշալներ Խորհրդային Միության քառակի հերոս Գեորգի Կոնստանտինովիչ ժուկովը, Խորհրդային Միության կրկնակի հերոսներ Ալեքսանդր Միխայլովիչ Վասիլևսկին, Կոնստանտին Կոնստանտինովիչ Ռոկոսովսկին, Իվան Ստեպանովիչ Կոնևը, Ռոդիոն Յակովլևիչ Մալինովսկին, Խորհրդային Միության հերոսներ Անդրեյ Իվանովիչ Երյոմենկոն, Լեոնիդ Ալեքսանդրովիչ Գովորովը, Ֆյոդոր Իվանովիչ Տոլբուխինը, որոնք պատերազմի եզրափակիչ շրջանում ռազմաճակատների հրամանատարներ էին և պատմության մեջ մնացել են «Հաղթանակի մարշալներ» անունով:

Հովհաննես Բաղրամյանն անցել է կյանքի դժվարին ու լարված ուղի: Նա շարքային զինվորից հասել է մարշալի բարձր աստիճանի: Մարշալի ռազմագիտական հարուստ ժառանգությունը, ռազմական արվեստի և պատմության վերաբերյալ նրա կարդացած դասախոսություններն ու հրատարակած գործերն արժանի են համակողմանի խոր ուսումնասիրության, նրա կյանքի հարուստ փորձը և մարդկային նկարագիրը պետք է ընդօրինակվեն նորաստեղծ հայկական բանակի գեներալների, սպաների ու զինվորների կողմից: Դա վիթխարի դեր կխաղա հատկապես Հայաստանի Հանրապետության մատաղ սերնդի և երիտասարդության՝ պետական կարևոր նշանակություն ունեցող ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպման խնդրում:

Հովհաննես Բաղրամյանը ծնվել է 1897 թ. դեկտեմբերի 2-ին Ռուսաստանյան Կայսրության Ելիզավետպոլի նահանգի Ելիզավետպոլ (Գանձակ)

քաղաքի երկաթուղային կայարանի բանվորական ավանում: Ելիզավետպոլի նահանգի Չարդախլու գյուղի ծնունդ էին ապագա մարշալի հայրը՝ Խաչատուր Բաղրամյանը, և մայրը՝ Մարիամ Մարտիրոսյանը: Բայց կարիքը ստիպել էր Խաչատուրին տեղափոխվել Ելիզավետպոլ և աշխատանքի անցնել երկաթուղում:

1907–1912 թվականներին Հովհաննես Բաղրամյանը սովորում և գերազանցությամբ ավարտում է Ելիզավետպոլի երկաթուղային ուսումնարանը: Նույն թվականին, գերազանց հանձնելով ընդունելության քննությունները, ընդունվում է Թիֆլիսի երկաթուղային տեխնիկական ուսումնարան: 1915 թվականի մայիսին, դարձյալ գերազանցությամբ, ավարտում է ուսումը և որպես երկաթգծի տեխնիկ աշխատանքի նշանակվում Անդրկովկասյան երկաթուղու Ելիզավետպոլի 9-րդ գծամասում: Սակայն առաջին համաշխարհային պատերազմի իրադարձությունները և թուրքերի կատարած հայոց Մեծ եղեռնը դրդեցին 18-ամյա Հովհաննես Բաղրամյանին կամավոր մեկնելու ռազմաճակատ՝ չնայած որպես երկաթուղու աշխատող զինծառայությունից ազատվելու իրավունք ուներ:

«Ես այլևս չէի կարող հեռու կանգնել իմ հարազատ ժողովրդի ատելի թշնամու դեմ պայքարից,– հետագայում իր հուշերում գրել է Բաղրամյանը:– Ես արդեն համարյա 18 տարեկան էի և բավականաչափ պարզ հասկանում էի Կովկասյան ռազմաճակատում ստեղծված իրավիճակի, ռազմական գործողությունների և Թուրքիայում արյունալի իրադարձությունների էությունը... Դրա հետ մեկտեղ լավ էի հասկանում, որ միայն ռուս զինվորի հետ ուս ուսի իմ ուժերը կպատեին մարտնչելու թուրք դահիճների դեմ: Այդ զգացմունքներից մղված, հաղթահարելով ծնողներիս դիմադրությունը՝ 1915 թ. հոկտեմբերի 9-ին ես կամավոր ծառայության անցա ռուսական բանակում» [1]:

Ախալցխայի 116-րդ պահեստային գումարտակում որոշ ժամանակ զինվորական պատրաստություն ստանալուց հետո նույն թվականի դեկտեմբերի վերջին Բաղրամյանը մեկնում է ռազմաճակատ և Պարսկաստանի տարածքում գտնվող գեներալ Բարաթովի էքսպեդիցիոն կորպուսի 2-րդ կովկասյան գնդի կազմում որպես 4-րդ գումարտակի 15-րդ հարյուրյակի շարքային զինվոր մասնակցում է մարտերին: Կասրի-Շիրինի գրավման մարտերում դրսևորած քաջության համար հրամանատարությունը նրան ուղարկում է Թիֆլիս՝ ենթասպաների դպրոցում սովորելու:

Այսպես սկսվում է Բաղրամյանի զինվորական ծառայությունը, որը տևում է 67 տարի:

1917 թ. աշնանը ենթասպա Բաղրամյանը թուրքերի դեմ մարտնչում է Ուրմիա լճի շրջանում Հայկական 3-րդ գումարտակի կազմում որպես 8-րդ վաշտի դասակի հրամանատար:

Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասն անջատվում է Խորհրդային Ռուսաստանից, ինչը աղետալի հետևանքներ է ունենում հատ-

[1] *И. Х. Баграмян.* Мои воспоминания. Е., 1979, сс. 25–26.

կապես հայերի համար: Օգտվելով նրանից, որ ռուսական զորքերը զանգվածաբար լքում են Կովկասյան ռազմաճակատը, թուրքերը հարձակման են անցնում և կարճ ժամանակամիջոցում գրավում Արևմտյան Հայաստանի այն տարածքները, որոնք ազատագրվել էին ռուսական զորքերի կողմից:

Թուրքերի արշավանքը կանգնեցնելու համար ստեղծվում է 20-հազարանոց Հայկական կորպուսը՝ գեներալ-մայոր Թովմաս Նազարբեկյանի գլխավորությամբ: Այդ կորպուսի հատուկ կամավորական դիվիզիայի շարքերում, որպես հեծյալ դասակի հրամանատար, մարտնչում է ենթասպա Բաղրամյանը: Դիվիզիայի հրամանատարը ժողովրդական հերոս Անդրանիկն էր: Հետագայում Փարիզում մարշալ Բաղրամյանը այցելել է Պեր-Լաշեզի գերեզմանոցը և ժողովրդական հերոսի հուշարձանին դրել ծաղկեպսակ հետևյալ մակագրությամբ. «Հավերժ հիշատակ Հայաստանի լեգենդար հերոս Անդրանիկին, որի զինվորը լինելու բախտն եմ ունեցել Հայրենիքի համար ծանրագույն 1918 թվականին» [2]:

Չնայած հայկական զորքերի հերոսական դիմադրությանը՝ թուրքական 60-հազարանոց զորքը շարունակում է առաջխաղացումը և, գրավելով Կարսն ու Ալեքսանդրապոլը, շարժվում է Ղարաքիլիսա–Երևան ուղղությամբ:

Հայ ժողովրդի համար այդ օրհասական պահին Հայկական կորպուսի զորամասերը և նրանց օգնության հասած աշխարհազորայինները կարողանում են Սարդարապատում ոչ միայն կանգնեցնել թուրքերին, այլև նրանց հետ շպրտել գրաված դիրքերից: Սարդարապատի ճակատամարտին սկզբից մինչև վերջ ակտիվորեն մասնակցում է առաջին հատուկ հայկական հեծյալ գնդի դասակի հրամանատար Բաղրամյանը[*]: Հետագայում, անդրադառնալով այդ օրերին, Բաղրամյանն իր «Իմ հուշերը» աշխատության մեջ նշել է. «Սարդարապատի ճակատամարտի շնորհիվ Արարատյան դաշտավայրը փրկվեց թուրք զավթիչների նոր ջարդերից, և այդ տարածքում էր, որ հայ ժողովուրդը վերականգնեց իր պետականությունը»[3]:

Եվ հիրավի, Սարդարապատի, Բաշ-Ապարանի, Ղարաքիլիսայի ճակատամարտերը բախտորոշ նշանակություն ունեցան հայ ժողովրդի համար. 1918 թ. մայիսի 28-ին, շուրջ հինգուկես դար ընդմիջումից հետո վերականգնվում է հայկական պետականությունը՝ հանձին Հայաստանի Հանրապետության:

Բաղրամյանը ծառայության է անցնում հանրապետության զինված ուժերում որպես հեծյալ գնդի հեծելավաշտի հրամանատար, մասնակցում 1920 թ. սեպտեմբերին սկսված հայ-թուրքական պատերազմին:

---

[2] Տես *Ա. Ն. Մնացականյան,* Մարշալ Բաղրամյան: Ե., 1978, էջ 26:

[*] Սարդարապատի ճակատամարտի քարտեզը, որը ակադեմիկոս Գևորգ Ղարիբջանյանի խնդրանքով կազմել է Մարշալ Բաղրամյանը, զետեղված է սույն համարի շապիկի 3-րդ էջում:

[3] *И. Х. Баграмян.* Мои воспоминания. Е., 1979, с. 94.

Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Բաղրամյանը ծառայում է հայկական Կարմիր բանակի շարքերում որպես առաջին հեծյալ գնդի հեծելավաշտի հրամանատար: 1921 թ. փետրվարի 18–22-ը նա ակտիվորեն մասնակցում է վրացական մենշևիկյան զորքերից Լոռու ազատագրմանը, ապա նշանակվում է Խորհրդային Վրաստանում Խորհրդային Հայաստանի լիազոր ներկայացուցչության զինվորական կցորդ Անդրեյ Մելիք-Շահնազարյանի օգնական[4]: Բաղրամյանը Երևան է վերադառնում մայիսի սկզբներին և նշանակվում Խորհրդային Հայաստանի ռազմական ժողկոմատի շտաբում որպես շտաբի պետի օգնական օպերատիվ հարցերի գծով: Հայկական Կարմիր բանակի վերակազմավորման հետևանքով 1922 թ. սեպտեմբերի 5-ին ստեղծվում է Հայկական հրաձգային դիվիզիան՝ Անդրեյ Մելիք-Շահնազարյանի հրամանատարությամբ: Բաղրամյանը նշանակվում է դիվիզիայի հեծյալ գնդի գնդացրային հեծելավաշտի, ապա՝ գնդի հրամանատար: 1921–1923 թվականներին Խորհրդային Հայաստանի ռազմական ժողովրդական կոմիսարիատը գլխավորում էին Ալեքսանդր Մյասնիկյանը, ապա՝ Հայկ Բժշկյանը՝ Գայը, որոնց ենթակայության տակ ծառայությունը բարերար ազդեցություն է գործում ապագա մարշալի վրա: 1924 թվականի աշնանը դիվիզիայի հրամանատարությունը նրան գործուղում է սովորելու Լենինգրադի բարձրագույն հեծելազորային դպրոցում: Այստեղ հրամանատարական անհրաժեշտ առաջին գիտելիքների ձեռքբերման հետ մեկտեղ Բաղրամյանը մտերմիկ հարաբերություններ է ստեղծում իր համակուրսեցիների հետ, որոնք Հայրենական մեծ պատերազմի տարիներին դառնում են ճանաչված զորապետներ: Նրանց թվում էին ապագա մարշալներ Գ. Կ. Ժուկովը, Կ. Կ. Ռոկոսովսկին, Ա. Ի. Երյոմենկոն և ուրիշներ:

1925 թ. աշնան սկզբներին Բաղրամյանն ուսումն ավարտելուց հետո վերադառնում է Հայաստան, կրկին ստանձնում հեծյալ գնդի հրամանատարությունը և այն վարում մինչև 1931 թվականը: 1931–1934 թվականներին Բաղրամյանը կրկին Մոսկվայում է որպես Մ. Վ. Ֆրունզեի անվան ռազմական ակադեմիայի ունկնդիր: Գերազանցությամբ ավարտելով ակադեմիայի հիմնական՝ օպերատիվ, ֆակուլտետը՝ նա 1934 թ. ամռանը նշանակվում է ուկրաինական Ժիտոմիր քաղաքում գտնվող 5-րդ հեծյալ դիվիզիայի շտաբի պետ: Այստեղ Բաղրամյանը ծառայում է երկուսուկես տարի՝ գործնական աշխատանքում ավելի խորացնելով իր գիտելիքները: 1936 թ. աշնանը Բաղրամյանն ընդունվում է Գլխավոր շտաբի նոր բացված ակադեմիան: Ակադեմիայի առաջին ունկնդիրների թվում էին ապագա մարշալներ Ալեքսանդր Միխայլովիչ Վասիլևսկին, Մատվեյ Վասիլևիչ Զախարովը, Լեոնիդ Ալեքսանդրովիչ Գովորովը, հետագայում բանակի գեներալներ Ալեքսեյ Իննոկենտիևիչ Անտոնովը, Նիկոլայ Ֆյոդորովիչ Վատուտինը և ուրիշներ, որոնք

[4] Հենց այդ օրերին էր, որ Բաղրամյանը Թիֆլիսում հանդիպում է Հովհաննես Թումանյանին և օգնում նրան 11-րդ բանակի շտաբում Երևան մեկնելու անցաթուղթ ձեռք բերելու գործում (տես նույն տեղում, էջ 113–114):

Հայրենական մեծ պատերազմի տարիներին գլխավորեցին ռազմաճակատներ, բանակներ, շտաբներ, վարեցին այլ պատասխանատու պաշտոններ: Գլխավոր շտաբի ակադեմիան Բաղրամյանն ավարտում է 1938 թ. և մինչև 1940 թ. աշուն աշխատում է նույն տեղում որպես ընդհանուր մարտավարության ամբիոնի ավագ դասախոս:

Այդ տարիներին կոփվեց Բաղրամյանի փայլուն զինվորական տաղանդը: Նա ձեռք բերեց գիտելիքների այն տեսական պաշարը և օպերատիվ մտքի հասունությունը, որոնք հետագայում թույլ տվեցին նրան իր անկրկնելի ձեռագիրը դնել ֆաշիզմի դեմ տարած մեծ հաղթանակի պատմության մեջ: Կրկին զորք վերադառնալու Բաղրամյանի ցանկությունը իրականացավ միայն 1940 թվականի աշնանը վաղեմի ընկերոջ՝ այդ ժամանակ արդեն Կիևի հատուկ զինվորական օկրուգի հրամանատար, բանակի գեներալ ժուկովի միջնորդությամբ: ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմի 1940 թ. սեպտեմբերի 2-ի հրամանով գնդապետ Բաղրամյանը նշանակվում է Կիևի հատուկ ռազմական օկրուգի 12-րդ բանակի շտաբի օպերատիվ բաժնի պետ: 1941 թվականի նոր տարին գնդապետ Բաղրամյանը դիմավորում է Կիևում՝ օկրուգի շտաբի պետի տեղակալ–շտաբի օպերատիվ բաժնի պետի նոր պաշտոնում:

Հունիսի 22-ին՝ պատերազմի առաջին օրը, Բաղրամյանին վստահվում է Կիևի ռազմական օկրուդի վերակազմման հետևանքով ստեղծված Հարավարևմտյան ռազմաճակատի շտաբի պետի տեղակալ – օպերատիվ բաժնի պետի պաշտոնը: Այս պաշտոնում, ռազմաճակատի համար պատերազմի առաջին օրվանից ստեղծված ծայրահեղ բարդ և անբարենպաստ պայմաններում նա երբեք խուճապի չի մատնվում և ամենաճգնաժամային պայմաններում անգամ պահպանում է ինքնատիրապետումն ու մարտական ոգին՝ ամբողջ ուժերը նվիրելով թշնամուն արժանի հակահարված տալու գործի կազմակերպմանը:

Գնդապետ Բաղրամյանը անմիջական մասնակցություն էր ունենում մարտերի կազմակերպմանն ու ղեկավարմանը, վտանգի ենթարկելով կյանքը՝ լինում էր առաջին գծում մարտնչող տանկային ու մեքենայացված զորամասերում, մոտիկից օգնում տանկիստներին: Բարդ պայմաններում տեղի ունեցող ռազմաճակատի ռազմական խորհրդի նիստերի ժամանակ Նա օպերատիվ-մարտավարական տեսակետից ճիշտ զեկուցումներ էր տալիս, որոնք հավանության էին արժանանում ոչ միայն ռազմաճակատի հրամանատարության, այլև Կարմիր բանակի գլխավոր շտաբի պետ Ժուկովի կողմից, որը հունիսյան այդ ծանր օրերին գտնվում էր Հարավարևմտյան ռազմաճակատում: Հետագայում, վերհիշելով 1941 թ. հունիսի վերջերի այդ ծանր մարտերը, Ժուկովը բարձր է գնահատել Բաղրամյանի անձնվեր աշխատանքը, նրա «մեծ մտահավաքությունը և փայլուն կազմակերպչական ընդունակությունները, որոնք հանդես բերվեցին այդ խիստ բարդ իրադրության մեջ պատերազմի առաջին օրվանից»[5]:

[5] *Г. К. Жуков.* Воспоминания и размышления. М., 1970, с. 241.

Այնուհետև գնդապետ Բաղրամյանը ակտիվորեն մասնակցում է Կիևի պաշտպանությանը, որը շարունակվեց 1941 թ. հուլիսի 7-ից մինչև սեպտեմբերի 26-ը: Կառավարությունը բարձր է գնահատում գնդապետ Բաղրամյանի զինվորական ծառայությունը: ԽՍՀՄ ժողկոմխորհի նախագահի 1941 թ. օգոստոսի 12-ի որոշմամբ նրան շնորհվում է գեներալ-մայորի կոչում:

1941 թ. սեպտեմբերի կեսերին ռազմական գործողությունների հետագա զարգացումը ընթանում է ի վնաս Կիևի պաշտպանների: Ռազմակայանի թույլ տված սխալների հետևանքով Հարավարևմտյան ռազմաճակատի ավելի քան կես միլիոնանոց զորքերը հայտնվում են շրջապատման մեջ:

Հայրենական մեծ պատերազմի ռազմաճակատների հրամանատարները
Առաջին շարքում՝ ձախից աջ. մարշալներ Իվան Կոնև, Ալեքսանդր Վասիլև,
Գեորգի Ժուկով, Կոնստանտին Ռոկոսովսկի, Կիրիլ Մերեցկով,
Երկրորդ շարքում՝ ձախից աջ. Ֆյոդոր Տոլբուխին, Ռոդիոն Մալինովսկի,
Լեոնիդ Գովորով, Անդրեյ Երեմենկո, Հովհաննես Բաղրամյան

Շրջապատման օղակից մարտերով դուրս եկողների մեջ էր գեներալ-մայոր Բաղրամյանը: Նա իր շուրջն է համախմբում ռազմաճակատի շտաբի ողջ մնացած անձնակազմը, պահակային ջոկատները, շրջապատման մեջ հայտնված սպաներին ու զինվորներին, ստեղծում է ավելի քան 1000 հոգուց բաղկացած մի զորաջոկատ, մարտերով նրանց հմտորեն առաջնորդում դեպի արևելք, դուրս բերում ծուղակից և ողջ ու առողջ հասցնում Հարավարևմտյան ուղղության հրամանատարության շտաբ: Այդ սխրանքի համար Բաղրամյանը պարգևատրվում է Կարմիր դրոշի շքանշանով. դա նրա առաջին մարտական պարգևն էր Հայրենական մեծ պատերազմում:

Չնայած Կիևի պաշտպանության օպերացիան ավարտվեց Հարավարևմտյան ռազմաճակատի զորքերի ծանր պարտությամբ, այնուամենայնիվ այն կարևոր դեր խաղաց «կայծակնային պատերազմի» գերմանաֆաշիստական պլանների ձախողման գործում, թույլ չտվեց, որ հակառակորդը ընթացքից գրավի Կիևը, և դժվարացրեց նրա հարձակումը Մոսկվայի ուղղությամբ:

Կիևի պաշտպանական օպերացիայի ավարտից հետո գեներալ-մայոր Բաղրամյանը նշանակվում է նոր կազմավորված Հարավարևմտյան ռազմաճակատի շտաբի պետի տեղակալ–օպերատիվ բաժնի պետ և այդ պաշտոնում մասնակցում է Ռոստովյան օպերացիայի մշակմանն ու իրականացմանը: Այն տեղի ունեցավ 1941 թ. նոյեմբերի 5-ից մինչև դեկտեմբերի 2-ը: Նրա հետևանքով նոյեմբերի 29-ին թշնամուց ազատագրվում է Կովկասի դարպասը հանդիսացող Դոնի Ռոստով քաղաքը: Ռոստովյան օպերացիայի հետևանքով ոչ միայն խոշոր պարտության մատնվեցին գերմանական առաջին տանկային բանակը և «Հարավ» բանակախմբի մյուս զորքերը, որոնք կորցրեցին իրենց անձնակազմի շուրջ մեկ երրորդը, այլև այն Դոնի Ռոստովի մոտ կաշկանդեց հակառակորդի «Հարավ» բանակախմբի գրեթե բոլոր ուժերը և հնարավորություն չտվեց գերմանական հրամանատարությանը այդ բանակախմբի հաշվին ուժեղացնելու Մոսկվայի ուղղությամբ գործող իր ուժերը: Այստեղ տարած հաղթանակը մեծ չափով նպաստեց Մոսկվայի ճակատամարտում մեր հաղթանակին:

Ռոստովյան օպերացիայի ժամանակ գեներալ-մայոր Բաղրամյանի դրսևորած զորավարական հմտությունը հաշվի առնելով՝ Հարավարևմտյան ուղղության գլխավոր հրամանատար Խորհրդային Միության մարշալ Տիմոշենկոն նրան ժամանակավորապես նշանակում է ռազմաճակատի՝ Ելեցի ուղղությունում գործող օպերատիվ զորախմբի շտաբի պետ:

Հայրենիքը բարձր է գնահատում գեներալ-մայոր Բաղրամյանի զգալի ավանդը Ռոստովյան և Ելեցյան օպերացիաների մշակման և իրականացման գործում: ԽՍՀՄ ժողկոմխորհի նախագահի 1941 թ. դեկտեմբերի 27-ի որոշմամբ նրան շնորհվում է գեներալ-լեյտենանտի կոչում: Հենց այդ ժամանակ էլ նա նշանակվում է Հարավարևմտյան ուղղության զորքերի շտաբի օպերատիվ վարչության պետի պատասխանատու պաշտոնին: Հարավարևմտյան ուղղության մեջ էին մտնում Բրյանսկի, Հարավարևմտյան և Հարավային ռազմաճակատների զորքերը: Այդ պաշտոնում Բաղրամյանը 1942 թ. հունվարի 18–31-ը մասնակցում է Բարվենկովո–Լոզովայա օպերացիայի մշակմանը և իրագործմանը, որի հետևանքով Խարկովից հարավ ճեղքվեց թշնամու խիստ ամրացված պաշտպանությունը և ազատագրվեցին հունվարի 23-ին Բարվենկովո, իսկ 26-ին Լոզովայա քաղաքները, որոնք հակառակորդի թիկունքային խոշոր բազաներ ու կարևորագույն երկաթուղային հանգույցներ էին: Երկու ռազմաճակատների զորքերը ձմռան սաստիկ սառնամանիքի պայմաններում առաջ շարժվեցին 90-100 կիլոմետր, որի հետևանքով վտանգի տակ դրվեցին հակառակորդի Դոնբասյան խմբավորման հաղորդակցության ուղիները, տեղում կաշկանդվեցին զգալի ուժեր, որոնք գերմանական հրամանատարությունը հնարավորություն չունեցավ փոխադրելու այլ ուղղություններ:

1942 թ. գարունը և ամառը անհաջողությունների շրջան եղան խորհրդային զորքերի համար: Թշնամին սրընթաց շարժվում էր դեպի Ստալինգրադ: Հունիսի 21-ին ռազմակայանը լուծարում է Հարավարևմտյան ուղղությունը, իսկ դրանից մի քանի օր հետո՝ հունիսի 28-ին, գեներալ-լեյտենանտ Բաղ-

րամյանը նշանակվում է Արևմտյան ռազմաճակատի 61-րդ բանակի հրամանատարի տեղակալ: Հուլիսի 15-ին ստացվում է նոր հրաման՝ Բաղրամյանին Արևմտյան ռազմաճակատի 16-րդ բանակի հրամանատար նշանակելու մասին: Բաղրամյանին բանակի հրամանատարի պատասխանատու պաշտոն վստահելը ցույց է տալիս, որ Գերագույն գլխավոր հրամանատարությունը Խարկովի մոտ կրած անհաջողությունների համար նրան չէր մեղադրում: Այս պաշտոնում Բաղրամյանը ծառայում է մինչև 1943 թ. նոյեմբերի 17-ը: Հենց այդ ընթացքում է, որ փայլում է գեներալի զորավարական տաղանդը և նրա անունը հայտնի է դառնում երկրով մեկ: Հատկապես տպավորիչ էր 1942 թ. օգոստոս ամսին նրա բանակի հաջողությունը Սուխինիչի–ժիզդրա ուղղությամբ, որտեղ կասեցվեց հակառակորդի խոշոր զորախմբի հարձակումը և նրան հասցվեց կենդանի ուժի ու տեխնիկայի զգալի վնաս թշնամին կորցրեց 10 հազար սպանված զինվոր ու սպա, ավելի քան 200 տանկ, մեծ քանակությամբ այլ տեխնիկա: Հակառակորդը ոչ միայն չկարողացավ ռազմաճակատի այս տեղամասից օգնական ուժեր տեղափոխել հարավ՝ Ստալինգրադ, որտեղ բորբոքվել էր երկրորդ համաշխարհային պատերազմի (խոշորագույն և վճռական ճակատամարտերից մեկը, այլև ինքն էր ստիպված այլ տեղամասերից օժանդակ ուժեր պահանջել ժիզդրայի հենակետը պահպանելու համար:

Բաղրամյանի գլխավորությամբ 16-րդ բանակը զգալի հաջողությունների է հասնում հատկապես 1943 թվականի ձմռանը ժիզդրայի ուղղությունում նոր հարձակման ժամանակ: Դրա հետևանքով հակառակորդը ստիպված է լինում հեռանալ Ռժև-Վյազմայի հենակետից, որի շնորհիվ իսպառ չքանում է Մոսկվայի ուղղությամբ նոր հարձակման վտանգը: Ժիզդրայի ուղղությունում բանակի մարտական գործողությունները հմտորեն ղեկավարելու համար գեներալ-լեյտենանտ Բաղրամյանը 1943 թ. ապրիլի 9-ին պարգևատրվում է Կուտուզովի 1-ին աստիճանի զորավարական շքանշանով: Բարձր են գնահատվում նաև բանակի ողջ անձնակազմի ցուցաբերած խիզախությունն ու անձնազոհությունը. ԽՍՀՄ պաշտպանության ժողկոմի 1943 թ. ապրիլի 16-ի հրամանով 16-րդ բանակը վերակազմավորվում է 11-րդ գվարդիականի: «Գվարդիական» կոչման արժանանալը մեծ պատիվ էր բանակի անձնակազմի և նրա հրամանատարի համար: Դա նրանց մարտական սխրանքների ու հայրենիքի հանդեպ զինվորական պարտքը սրբորեն կատարելու բարձր գնահատականն էր:

Բաղրամյանի զորավարական տաղանդը նոր ուժով է դրսևորվում 1943 թ. ամռանը՝ Օրյոլ–Կուրսկ–Բելգորոդ շրջանում հուլիսի 5-ից մինչև օգոստոսի 23-ը տեղի ունեցած ճակատամարտում: Կուրսկի աղեղում ոչ միայն ամբողջովին ջախջախվեցին հակառակորդի 22 հետևակային և 8 տանկային դիվիզիաներ, որոնց միջոցով Հիտլերը մտադրվել էր փոխվրեժ լուծել Ստալինգրադի ճակատամարտում կրած խայտառակ պարտության համար, այլև ընդմիշտ թաղվեց գեբելսյան ստահոդ քարոզչության ստեղծած այն սին առասպելը, թե խորհրդային զորքերն ընդունակ են հաղթելու միայն ձմեռային պայմաններում:

Առանձնապես մեծ էր գվարդիայի գեներալ-լեյտենանտ Բաղրամյանի դերը Օրյոլյան ճակատամարտում հաղթանակի ձեռքբերման գործում: Նա ոչ միայն մասնակցում է այդ օպերացիայի պլանավորման աշխատանքներին, այլև Գերագույն գլխավոր հրամանատարի մոտ այդ պլանի քննարկման ժամանակ համարձակորեն հանդես է գալիս իր անմիջական վերադասի՝ Արևմտյան ռազմաճակատի հրամանատարի և Բրյանսկի ռազմաճակատի հրամանատարի առաջարկած պլանի դեմ: Գերագույն գլխավոր հրամանատարը համաձայնում է Բաղրամյանի համոզիչ փաստարկներին և ընդունում նրա առաջարկությունները: Օպերացիայի հետագա ընթացքը ապացուցեց Բաղրամյանի իրավացիությունը:

Ձախից աջ. ԽՍՀՄ նավատորմի ադմիրալ Հ. Ս. Իսակով,
ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Ա. Շ. Մելիք-Փաշան,
Սոցիալիստական աշխատանքի հերոս, պրոֆեսոր Ա. Յ. Աբրահամյան,
ԽՍՀՄ մարշալ Հ. Ք. Բաղրամյան, ավիակոնստրուկտոր Ա. Ի. Միկոյան,
ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Պ. Գ. Լիսիցյան

Հուլիսի 12-ից մինչև օգոստոսի 17-ը 11-րդ գվարդիական բանակը հարձակողական մարտերով անցնում է ավելի քան 200 կմ, ազատագրում ավելի քան 700 բնակավայր: Օրյոլյան օպերացիայի ընթացքում բանակի հմուտ ղեկավարման համար ԽՍՀՄ Ժողկոմխորհի նախագահի 1943 թ. օգոստոսի 27-ի որոշմամբ Բաղրամյանին շնորհվում է գեներալ-գնդապետի կոչում: Նույն օրը ԽՍՀՍ՝ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով գվարդիայի գեներալ-գնդապետ Հովհաննես Բաղրամյանը պարգևատրվում է Սուվորովի 1-ին աստիճանի՝ այն ժամանակվա բարձրագույն զորավարական շքանշանով:

Հաշվի առնելով Բաղրամյանի օրեցօր աճող զորավարական կարողությունները՝ նրան նոյեմբերի 17-ին նշանակում են 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար: Մեկ օր անց Բաղրամյանին շնորհվում է բանակի գեներալի կոչում: Բանակի գեներալ Բաղրամյանի հրամանատարությամբ 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերի տարած մի շարք տպավորիչ

հաղթանակները ավելի են մոտեցնում հաղթանակի օրը՝ դրանով մեծ չափով նպաստելով զորավարի փառքի տարածմանը: Առաջին նշանակալից հաջողությունը ձեռք է բերվում Վիտեբսկի ուղղությամբ 1943 թ. դեկտեմբերի 13–31-ը անցկացված «Գորոդոկյան» օպերացիայի ժամանակ:

Բաղրամյանն իր զորավարական փառքի գագաթնակետին է հասնում 1944 թ. ամռանը՝ Բելոռուսական խոշորամասշտաբ հարձակողական օպերացիայի ժամանակ, որը հայտնի է «Բագրատիոն» անունով: Նա անձամբ մասնակցում է ռազմակայանում օպերացիայի պլանի քննարկմանը և հարձակման գլխավոր ուղղության վերաբերյալ անում արժեքավոր դիտողություններ, որոնք արժանանում են ժուկովի, Վասիլևսկու, ապա՝ Ստալինի հավանությանը և ընդունվում: Օպերացիայի նախօրեին, հմտորեն օգտագործելով Դնեպրի և մյուս խոշոր գետերի գրոհանցման՝ խորհրդային զորքերի կուտակած հարուստ փորձը, Բաղրամյանը մեծ պատասխանատվությամբ իր բանակները նախապատրաստում է գլխավոր խոչընդոտի՝ Արևմտյան Դվինայի հնարավորին չափ արագ և մարդկային նվազ կորուստներով գետանցմանը: Նախապատրաստական աշխատանքներն ավարտելուց հետո 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերը հունիսի 23-ին անցնում են հարձակման: Հաջողությամբ հաղթահարելով ջրային հիմնական արգելքը և խորտակելով հակառակորդի մի քանի շերտերից բաղկացած պաշտպանությունը՝ Բաղրամյանի բանակները հարձակում են ծավալում Վիտեբսկի և Պոլոցկի ուղղություններով, հունիսի 26-ին ազատագրվում է Բելոռուսիայի մարզային կենտրոն, երկաթուղային խոշոր հանգույց Վիտեբսկը, իսկ հուլիսի 4-ին՝ Պոլոցկը (Պոլոցկի ազատագրման ժամանակ աչքի ընկավ 51-րդ գվարդիական՝ նախկին հայկական 76-րդ հրաձգային դիվիզիան, որն արժանացավ «Վիտեբսկյան», իսկ գնդերը՝ «Պոլոցկյան» պատվանուններին): Այնուհետև, զարգացնելով ձեռք բերած հաջողությունը, Բաղրամյանի զորքերը մտնում են Լիտվա և սրընթաց առաջխաղացումով գերմանաֆաշիստական զավթիչներից ազատագրում հարյուրավոր բնակավայրեր, որոնց թվում հուլիսի 22-ին՝ Պանևեժիս, 27-ին՝ Շաուլյայ քաղաքները, մտնում են Լատվիայի տարածքը, օգոստոսի 1-ին ազատագրում Ելգավա քաղաքը, ապա, շարժվելով առաջ, դուրս գալիս Ռիգայի ծովածոց՝ դրանով իսկ հակառակորդի «Հյուսիս» բանակախումբը կտրելով Արևելյան Պրուսիայից:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1944 թ. հուլիսի 29-ի հրամանագրով Բելոռուսական օպերացիայի ժամանակ ռազմաճակատի զորքերը հմտորեն ղեկավարելու, այդ ընթացքում ձեռք բերած աչքի ընկնող հաջողությունների, ինչպես նաև ցուցաբերած արիության ու հերոսության համար բանակի գեներալ Բաղրամյանին շնորհվում է Խորհրդային Միության հերոսի կոչում:

Բաղրամյանի մարտական կենսագրության փառապանծ էջերից են Մերձբալթյան և Արևելապրուսական օպերացիաները, որոնց ընթացքում խորհրդային զորքերը ազատագրում են մերձբալթյան հանրապետությունները, խորտակում պրուսական յունկերների միջնաբերդ հանդիսացող Քյոնիգսբերգ քաղաք-ամրոցը:

Մերձբալթյան օպերացիայի բաղկացուցիչ մասերից էր Մեմելյան օպերացիան, որի ընթացքում Բաղրամյանի զորքերը 1945 թ. հունվարի 28-ին ազատագրում են լիտվական Մեմել (Կլայպեդա) նավահանգիստը, որը հակառակորդը դարձրել էր կարևոր ռազմավարական հենակետ Բալթիկ ծովի ափին: Հիշատակության է արժանի օպերացիայի ընթացքում Բաղրամյանի զորքերի վարպետորեն կատարած քողարկված զորաշարժը, երբ 6 գիշերվա ընթացքում, հակառակորդից աննկատ, Ռիգայի շրջանից Շաուլյայի շրջան փոխադրվեցին ավելի քան կես միլիոն մարդ, 10000 հրանոթ ու ականանետ, ավելի քան 1300 տանկ և ինքնագնաց հրանոթ[6]: Երբ զորքերի այսպիսի մեծ զանգվածը թշնամուց աննկատ հայտնվեց նոր ուղղության վրա և Մեմելի ուղղությամբ խոյընթաց հարված հասցրեց թշնամուն, ֆաշիստական հրամանատարությունը, ոչ առանց հիմքի, դա համարեց հրաշք: Այդ հրաշքի հետևանքով Մերձբալթիկայում գտնվող ֆաշիստական 33 դիվիզիա կտրվեցին Արևելյան Պրուսիայից և սեղմվեցին Կուռլանդական «պարկում»՝ Լատվիայի Լիեպայա–Վենտսպիլս–Կանդավա շրջանում: Սրանք անձնատուր եղան միայն 1945 թվականի մայիսի 9-ին:

Լիտվան ազատագրելուց հետո 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի զորքերը ռազմակայանի ցուցումով ուղղվեցին դեպի հարավ՝ Քյոնիգսբերգի ուղղությամբ:

Զորքերի ղեկավարումն ավելի օպերատիվ դարձնելու նպատակով ռազմակայանը 1945 թ. փետրվարի 22-ին վերացնում է 1-ին Մերձբալթյան ռազմաճակատը և նրա բանակների մի մասի հիման վրա ստեղծում է Զեմլանդյան օպերատիվ զորախումբը, որն ընդգրկվում է 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի կազմում: Զեմլանդյան զորախմբի հրամանատար է նշանակվում բանակի գեներալ Բաղրամյանը: Նա միաժամանակ վարում է ռազմաճակատի հրամանատար մարշալ Վասիլևսկու տեղակալի պաշտոնը: Քյոնիգսբերգի գրավման հիմնական խնդիրը դրվում է Բաղրամյանի զորախմբի վրա: Հիտլերը մեծ նշանակություն էր տալիս Քյոնիգսբերգի պաշտպանությանը, քաղաքը վերածված էր մի անառիկ ամրոցի, որը հագեցված էր բերդամասերով, բազմաթիվ ամրակառույց կրակակետերով, մեծ պաշտպանության համար հարմարեցված բացառիկ ամրապինդ շենքերով, մարտական տեխնիկայի և հետևակի համար բազմապիսի հնարակերտ արգելափակոցներով, խանդակներով, ջրափոսերով և այլն: Քաղաք-ամրոցի գրավման պլանը մշակելիս Բաղրամյանը մեծ տեղ էր տալիս ցամաքային զորքերի հետ ծովային և օդային ուժերի սերտ համագործակցությանը: Որպեսզի զորքերի հրամանատարական կազմն ավելի լավ կողմնորոշվի գրոհի ժամանակ, Բաղրամյանի ցուցումով մասնագետները հետախուզության ճշգրիտ տվյալների հիման վրա ստեղծում են բերդաքաղաքի հսկա մանրակերտը, որում ամենայն մանրամասնությամբ տրվում են հակառակորդի պաշտպանական ու ամրոցային կառույցների ամբողջ համակարգը, այն պաշտպանող զորքերի մասին անհրաժեշտ տեղեկություններ և այլն:

[6] Տես *Ի. Ք. Բաղրամյան,* Այսպես մենք հասանք հաղթանակի: Ե., 1979, էջ 616–617:

Այս առումով Բաղրամյանին շատ լավ է բնութագրել մարշալ Վասիլևսկին իր «Ամբողջ կյանքի գործը» գրքում. «Անտարակույս, Բաղրամյանը բնատուր կարողություններով օժտված զորավար է: Նա ունի և՛ հրամանատարական, և՛ շտաբային փորձ, որն օգնում էր նրան հաջող կերպով լուծելու ինչպես զորքերի ղեկավարման, այնպես էլ ռազմական գործողությունների պլանների մշակման հարցերը, ընդ որում նա անպայման ձգտում էր գտնելու հաղթանակի հասնելու ամենակարճ ճանապարհը»[7]:

Ապրիլի 9-ին Քյոնիգսբերգի կայազորը անձնատուր է լինում: Ընդամենը չորս օր տևած մարտերի ընթացքում ոչնչացվում են հակառակորդի շուրջ 42 հազար զինվոր ու սպա, 120 ինքնաթիռ, 104 տանկ ու ինքնագնաց հրանոթ, գերի են վերցվում 92 հազար մարդ, այդ թվում՝ 1800 սպա ու գեներալ[8]: 1945 թ. հունիսի 9-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով հիմնվում է Քյոնիգսբերգի գրավման համար մեդալ, որով պարգևատրվում են օպերացիայի մասնակիցները ավելի քան 750 հազար մարդ: Ամրոցի վրա գրոհելիս աչքի ընկած 98 միավորումների ու զորամասերի շնորհվում է «Քյոնիգսբերգյան» պատվանունը: Բանակի գեներալ Բաղրամյանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1945 թ. ապրիլի 20-ի հրամանագրով պարգևատրվում է Սուվորովի 1-ին աստիճանի երկրորդ շքանշանով:

Հայրենական մեծ պատերազմի վերջին մարտական գործողությունը, որին մասնակցեց բանակի գեներալ Բաղրամյանը, Քյոնիգսբերգից արևմուտք Զեմլանդյան թերակղզում պատսպարված ֆաշիստական զորքերի 100-հազարանոց խմբավորման ջախջախման և Բալթիկ ծովի ափին թշնամու վերջին ռազմավարական ռազմակայանի՝ Պիլաու (Բալթիյսկ) նավահանգստի գրավման օպերացիան էր (ապրիլի 13–25): Օպերացիայի վերջին օրերին Բաղրամյանը ռազմակայանի որոշմամբ նշանակվում է 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի հրամանատար:

Պիլաուի գրավումից հետո 3-րդ Բելոռուսական ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Բաղրամյանի հիմնական խնդիրն էր՝ նվազագույն կորուստներով ավարտել հակառակորդի Զեմլանդյան զորախմբի մնացորդների ջախջախումը Ֆրիշե-Ներունգ ցամաքալեզվակում: 1945 թ. մայիսի 9-ին՝ Հաղթանակի օրը, հակառակորդի ավելի քան 30-հազարանոց զորախումբը անձնատուր է լինում:

Հետպատերազմյան տարիներին բանակի գեներալ Բաղրամյանը շարունակում է իր զինվորական ծառայությունը ԽՍՀՄ զինված ուժերում՝ վարելով մի շարք պատասխանատու պաշտոններ, իր հարուստ ռազմական փորձն ու գիտելիքները ի սպաս դնելով երկրի պաշտպանության ամրապնդման գործին:

---

[7] *А. М. Василевский.* Дело всей жизни, кн. 2-я. М., 1989, с. 281.

[8] Տես *Ի. Ք. Բաղրամյան,* Այսպես մենք հասանք հաղթանակի: Ե., 1979, էջ 735:

1945–1954 թվականներին նա Մերձբալթյան զինվորական օկրուգի զորքերի հրամանատարն է, 1954–1955 թվականներին՝ ԽՍՀՄ պաշտպանության նախարարության գլխավոր տեսուչ, 1955–1956 թվականներին՝ պաշտպանության նախարարի տեղակալ ընդհանուր հարցերի գծով: 1955 թ. մարտի 11-ին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով բանակի գեներալ Բաղրամյանին շնորհվում է Խորհրդային Միության մարշալի կոչում: 1956 թ. Խորհրդային Միության մարշալ Բաղրամյանը նշանակվում է Գլխավոր շտաբի ակադեմիայի պետ, այն ակադեմիայի, որտեղ նա սովորել և աշխատել է 1936–1940 թվականներին:

Զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ, Խորհրդային Միության հերոս, ռազմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Պավել Ալեքսանդրովիչ Ռոտմիստրովը, որն այդ տարիներին աշխատում էր նույն ակադեմիայում որպես ամբիոնի վարիչ, բարձր է գնահատել Բաղրամյանի աշխատանքը ակադեմիայի պետի պաշտոնում: «Բարձրագույն զինվորական ակադեմիան վերակառուցելու և զինված ուժերի ռազմագիտական իսկական կենտրոն դարձնելու համար նրա պետ է նշանակվում Խորհրդային Միության մարշալ Հ. Ք. Բաղրամյանը: Երկու տարվա արդյունավետ աշխատանքով զինված ուժերի բարձրագույն զինվորական կադրերի այդ դարբնոցը հասավ նոր բարձրության... Նրա ղեկավարությամբ աշխատելը հեշտ էր,–գրում է Ռոտմիստրովը,–նա երբեք նախաձեռնությունը չէր կաշկանդում, իր կարծիքը չէր պարտադրում և համոզելը գերադասում էր կարգադրելուց: Նա սիրում էր կրկնել, որ գիտությանը չի կարելի հրամայել, ուստի և երբեք իր հեղինակության ծանր մահակը չէր իջեցնում ակադեմիայի գիտնականների գլխներին, եթե որևէ հարցում նրանց կարծիքները տարբերվում էին իր սեփական կարծիքից: Ինձ հաճախ վիճակվում էր ռազմագիտության տարբեր հարցերով բանավիճել ակադեմիայի պետի հետ, բայց մեր վեճերը երբեք չէին անդրադառնում անձնական փոխհարաբերությունների վրա, այլ ընդհակառակը՝ փոխադարձ հարգանքի համար պայմաններ էին ստեղծում»[9]:

1958 թվականին մարշալ Բաղրամյանը նշանակվում է ԽՍՀՄ պաշտպանության նախարարի տեղակալ – զինված ուժերի թիկունքի պետ: Այդ պաշտոնում նա աշխատում է մինչև 1968 թվականը՝ խոշոր ավանդ ներդրելով խորհրդային բանակի, ավիացիայի և ռազմածովային նավատորմի հզորության բարձրացման գործում: 1968 թ. ապրիլին մարշալ Բաղրամյանը նշանակվում է պաշտպանության նախարարության գլխավոր տեսուչների խմբի գլխավոր տեսուչ: Գլխավոր տեսուչների խմբում էին ծառայում խորհրդային բանակի այնպիսի ճանաչված զորահրամանատարներ, ինչպիսիք էին մարշալներ Ժուկովը, Վասիլևսկին, Ռոկոսովսկին, որոնք սրտաբաց են ընդունում այդ պաշտոնում իրենց վաղեմի մարտական ընկերոջ նշանակումը:

[9] *П. А. Ротмистров.* Путь полководца. «Тыл и снабжение Советских вооруженных сил», 1967, N 11, с. 21.

ԽՍՀՄ զինված ուժերին մատուցած աչքի ընկնող ծառայությունների, Հայրենական մեծ պատերազմում գերմանաֆաշիստական զավթիչների դեմ մղված պայքարում ցուցաբերած արիության և հերոսության համար, ինչպես նաև ծննդյան 80-ամյակի առթիվ մարշալ Բաղրամյանը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1977 թ. դեկտեմբերի 1-ի հրամանագրով երկրորդ անգամ արժանանում է Խորհրդային Միության հերոսի կոչման:

Երևանում՝ 1915 թ. Մեծ եղեռնի զոհերի հուշարձանի մոտ

Մինչև իր կյանքի վերջը Խորհրդային Միության կրկնակի հերոս, Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյանը պաշտպանության նախարարության զլխավոր տեսուչների խմբի գլխավոր տեսուչի պաշտոնում զգալի աշխատանք է կատարում զինված ուժերի ամրապնդման, հատկապես երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակության պետական խիստ կարևոր նշանակություն ունեցող գործի կազմակերպման ուղղությամբ: Դրա հետ մեկտեղ նա շատ ժամանակ է հատկացնում գիտական, գրական, հետազոտական աշխատանքներին, հրապարակում է ռազմագիտական հոդվածներ, ռազմական պատմության վերաբերյալ դասագրքեր, Հայրենական մեծ պատերազմի պատմությունը լուսաբանող ստվարածավալ աշխատություններ, խորհրդային ականավոր զորավարների մասին հուշեր: Հիշատակության են արժանի նրա «Հերոս քաղաքը Դնեպրի ափին», «Այսպես է սկսվել պատերազմը», «Այսպես մենք հասանք հաղթանակի», «Իմ հուշերը», «Մեծ ժողովրդի զավակները» և այլ արժեքավոր գրքեր, որոնք լայն ճանաչում են գտել և, հայերենից ու ռուսերենից բացի, թարգմանվել են նաև անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն, բազմաթիվ այլ լեզուներով: Մեծ զորավարը հետպատերազմյան տարիներին ընդգրկված էր նաև հասարակական-քաղաքական աշխատանքների մեջ. նա եղել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի 2–9-րդ գումարման պատգամավոր: Հերոսի Ոսկե աստղի երկու մեդալներից բացի, զորավարը պարգևատրվել է Լենինի յոթ, Հոկտեմբերյան հեղափոխության մեկ, Կարմիր դրոշի երեք, Սուվորովի 1-ին աստիճանի երկու, Կուտուզովի 1-ին աստիճանի մեկ, Հայրենիքին և ԽՍՀՄ զինված ուժերին ծառայության համար 3-րդ աստիճանի մեկ շքանշաններով, բազմաթիվ մեդալներով, պատվավոր անձնական զենքով, օտարերկրյա շքանշաններով ու մեդալներով:

Իր զինվորական, պետական, հասարակական գործունեության ընթացքում մարշալ Բաղրամյանը մշտապես կապված է եղել իր հարազատ հայ ժողովրդի հետ, հաճախակի այցելել է հայրենիք, մասնակցել մի շարք գործնական և հոբելյանական միջոցառումների, հանդիպումներ ունեցել

Արարատյան դաշտավայրի, Շիրակի, Լոռու, Տավուշի, Գեղարքունիքի, Վայքի, Սյունիքի և Արցախի բնակչության լայն խավերի հետ: Նա սերտ բարեկամական կապեր ուներ Մարտիրոս Սարյանի, Վիկտոր Համբարձումյանի, Արամ Խաչատրյանի, Անաստաս և Արտեմ Միկոյանների, Իվան Թևոսյանի, իր համագյուղացի, զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Բաբաջանյանի, Խորհրդային Միության նավատորմի ծովակալ Հովհաննես Իսակովի, գիտության, մշակույթի, պետական բազմաթիվ այլ գործիչների հետ: Նա համեստ ու զուսպ մարդ էր, ատում էր կեղծավորությունն ու շողոքորթությունը: Բանակի գեներալ Կուրասովը, որը 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի շտաբի պետն էր, այդ մասին հիշում է. «Իվան Քրիստափորովիչը ուժեղ ու կամքի տեր մարդ է… Նա որոշումներն ընդունում էր առանց տատանումների, և նույնիսկ ամենածանր ժամանակ երբեք չէր բղավում, չէր սպառնում, մինչև անգամ ձայնը չէր բարձրացնում: Բայց ենթականերից յուրաքանչյուրը նրա կամքն ու հրամանները կատարում էր անառարկելիորեն: Այդ ամենից բացի, նա հոգի մարդ է, նրա հետ աշխատելը հեշտ է»[10]:

Մարշալ Բաղրամյանը, պատկանելով ժամանակի ամենազարգացած ռազմական գործիչների թվին, միաժամանակ արվեստասեր մարդ էր: Նա շատ էր սիրում գեղանկարչությունը՝ Իլյա Ռեպինի, Լևիտանի, Կրամսկոյի ստեղծագործությունները, Մարտիրոս Սարյանի բնանկարները, Դմիտրի Նալբանդյանի նատյուրմորտներն ու դիմանկարները: Նա ակտիվ, լրջախոհ թատերասեր հանդիսատես էր, բաց չէր թողնում Մոսկվայի գեղարվեստական ակադեմիական և Փոքր թատրոնների ոչ մի նոր ներկայացում, կարող էր շատ անգամ դիտել Օստրովսկու և Չեխովի դրամաները: Բաղրամյանը շատ էր սիրում ընթերցել: Նրա գրադարանը ոչ միայն լի էր ռազմապատմական, մասնագիտական գրքերով, այլև նրանում կողք կողքի շարված էին ռուսական, հայկական, համաշխարհային դասականների երկերը:

Հմայիչ մարդու, գիտնականի և ականավոր զորավարի կյանքի թելը կտրվեց 1982 թ. սեպտեմբերի 21-ին՝ Մոսկվայում: Կառավարության որոշմամբ նրա թաղումը կատարվեց սեպտեմբերի 24-ին, աճյունասափորը դրվեց Կրեմլի պատում:

Մարշալ Բաղրամյանի հիշատակը այսօր էլ վառ է մնում և միշտ էլ վառ կմնա ամբողջ հայության մեջ:

[10] Տես *Մ. Ի. Մերժանով,* Զինվորը, գեներալը, մարշալը: Ե., 1975, էջ 122:

МАРШАЛ ИВАН БАГРАМЯН

Ф. Т. САРГСЯН, генерал-майор (в отставке), Президент НАН РА, академик Российской Академии военных наук*

РЕЗЮМЕ

Маршал Иван Христофорович (Оганес Хачатурович) Баграмян являлся одним из талантливейших полководцев. Он не только прекрасно планировал и руководил сражениями, но и в качестве теоретика вывел военное искусство на новый уровень. Личные качества военачальника важны при командовании крупными армиями на поле брани, а эти качества формируются благодаря семье, в которой рос данный человек, и тому микроокружению, в котором он воспитывался. Деревня Чардахлу в Карабахе оказалась такой благодатной средой для Баграмяна.

В 1915 г. Баграмян вступил добровольцем в Русскую армию («Я не мог оставаться в стороне от борьбы против ненавистных врагов моего народа»). В 1918 г. он будучи хорошо знаком с национальным героем Андраником Озаняном и известным генералом Гайем, принял участие в Сардарапатском сражении, по итогам которого «население Араратской долины было спасено от новой резни турецких завоевателей» и была провозглашена Республика Армения. В формируемой армии И. Баграмян занял должность командира конного эскадрона, а затем и командира кавалерийского полка. В 1921 г. он принял активное участие в освобождении Лорийской области от грузинских меньшевиков.

Затем Баграмян учился в Ленинградской Высшей кавалерийской школе, где сформировались его дружеские отношения с Георгием Жуковым, Константином Рокоссовским и Андреем Еременко. В 1934 г. он окончил Военную академию имени Фрунзе, затем Академию ГШ, по окончании которой был оставлен там в качестве преподавателя.

Двумя годами позже по ходатайству Жукова Баграмян был назначен начальником оперативного отдела штаба 12-ой армии Киевского Особого ВО. С самого начала войны в очень непростых условиях он «проявил великолепные организаторские способности» (Г. Жуков).

Полководческий талант Баграмяна с особой силой проявился в 1943 г. под Орлом и Курском. В противовес Командующим Западным и Брянским фронтами Баграмян предложил свой план операции, который удостоился одобрения Сталина и Ставки. Дальнейший ход событий подтвердил правоту Баграмяна. А в ноябре Баграмян был назначен Командующим 1-ым Прибалтийским фронтом. 1944 год стал самым победоносным годом для генерала армии Баграмяна. Летом после освобождения Витебска, Полоцка, Паневежиса, Шяуляя и Елгавы его

* Фадей Тачатович Саргсян (1923–2010), Президент Национальной академии наук РА (1993–2006), академик Российской Академии военных наук, генерал-майор (в отставке).

войска вышли к Рижскому заливу, отрезав группу армий «Север» от Восточной Пруссии. 29 июля 1944 г. Иван Баграмяну было присвоино звание Героя Советского Союза.

В 1945 г. его войска заняли очень важный в стратегическом отношении опорный пункт на побережье Балтийского моря – Мемель (Клайпеда), Баграмян блестяще разработал и осуществил план по взятию города-крепости Кенигсберг. По этому поводу маршал Василевский писал: «Несомненно, одаренным полководцем является И. Х. Баграмян. Он обладает и командным, и штабным опытом, что помогает ему успешно решать как вопросы руководства войсками, так и разработки планов операций». Затем он был назначен Командующим 3-м Белорусским фронтом, войска которого участвовали в уничтожении 100-тысячной группировки, на Земландском полуострове.

В послевоенные годы Баграмян занимал должности командующего войсками Прибалтийского ВО (1945–1954), Главного Инспектора МО СССР (1954–1955), заместителя Министра (1956–1958) и заместителя Министра–Начальника Тыла Вооруженных Сил (1958–1968). В 1968 г. он был назначен генеральным инспектором группы генеральных инспекторов СССР. 11 марта 1955 г. он был удостоен звания маршала Советского Союза, а в 1977 г. – Героя Советского Союза (повторно).

Иван Христофороч Баграмян умер 21 сентября 1982 г. в Москве.

MARSHAL HOVHANNES BAGHRAMYAN

F. T. SARGSYAN[*], *Major General (Ret.), President, NAS, RA, Academician, Russian Academy of Military Sciences*

SUMMARY

Marshal Hovhannes Khristoforovich Baghramyan was one of the most talented commanders. He not only brilliantly planned and commanded battles, but, as a theorist, took the art of war to a new level. Commander's personal traits are of key importance when commanding major armies at the battlefields and these traits are shaped thanks to the family in which the person has grown up, and the microenvironment, in which he has been brought up. The village of Chardakhlu in Karabakh turned out to be the very gratifying environment for Baghramyan.

In 1915, Bagramyan volunteered for the Russian Army ("I could not stay away from the fight against the detestable enemies of my people"). In 1918, being quite familiar with the national hero Andranik Ozanyan and famous General Gai, he took part in the Battle of Sardarapat, as an effect of which "the population of the Ararat valley could escape from a new

[*] Fadey T. Sargsyan (1923–2010), President, National Academy of Sciences, RA (1993–2006), Academician, Russian Military Academy, Major General (Ret.).

massacre by the Turkish conquerors", and the Republic of Armenia was proclaimed. In the newly formed army, H. Baghramyan took the cavalry squadron commander's, and then cavalry regiment commander's position. In 1921 he took an active part in the liberation of the Lori Region from the Georgian Mensheviks.

Then Baghramyan studied at the Leningrad Higher Cavalry School, where he developed friendly relations with Georgy Zhukov, Konstantin Rokossovsky and Andrey Yeryomenko. In 1934 he graduated from the Frunze Military Academy, then the General Staff Academy, after which he stayed there as a teacher.

Two years later, at the request of Zhukov, Baghramyan was appointed Head of the Operational Department of the the 12th Army Headquarters, the Kiev Special Military District. From the beginning of the war, under very difficult circumstances, he "displayed excellent organizational skills" (G. Zhukov).

Baghramyan's commanding talent was especially vividly shown in 1943 near Orel and Kursk. In opposition to the Commanders of the Western and Bryansk fronts, Baghramyan proposed his own operation plan, which was approved by Stalin and the Headquarters. The further course of events came to prove that Baghramyan was right. And in November Baghramyan was appointed Commander of the 1st Baltic Front. The year 1944 was the most victorious for Army General Baghramyan. In summer, after the liberation of Vitebsk, Polotsk, Panevezys, Siauliai and Jelgava, his troops reached the Gulf of Riga, cutting off the Army Group North from East Prussia. July 29, 1944, Hovhannes Baghramyan was awarded the title of Hero of the Soviet Union.

In 1945 his troops occupied Memel (Klaypèda), a most significant in strategic sense control point at the shore of the Baltic Sea, Baghramyan brilliantly developed and carried out the plan of seizure the K□nigsberg fortress city. On this occasion Marshal Vasilevsky wrote: "H. Baghramyan is undoubtedly a gifted commander. He has got both command and staff experience, which helps him successfully solve both issues of army command and control of, and the development of plans of operations". Then he was appointed Commander of the 3rd Belorussian Front, whose troops participated in the destruction of the 100,000-manned grouping on the Zemland Peninsula.

In postwar years Baghramyan held positions of the Commander of the Baltic Military District (1945-1954), Chief Inspector of the USSR Ministry of Defense (1954-1955), Deputy Minister (1956-1958) and Deputy Minister-Head of Logistics of the Armed Forces (1958-1968). In 1968, he was appointed Inspector General of the Group of General Inspectors of the USSR. On March 11, 1955, he was awarded the title of Marshal of the Soviet Union, and in 1977 he was re-awarded the Hero of the Soviet Union.

Hovhannes Baghramyan died on 21 September, 1982, in Moscow.

ՉԱՐԴԱԽԼՈՒԻ ՖԵՆՈՄԵՆԸ

Հ. Ա. ԲԱՂՐԱՄՅԱՆ, պաշտոնաթող գնդապետ

Ընդունված խոսք է. եթե ուզում ես բանաստեղծին ճանաչել, պետք է լինես նրա ծննդավայրում: Իսկ ինչո՞ւ միայն բանաստեղծին, գուցե նաև զորավարի՞ն: Հովհաննես Քրիստափորի Բաղրամյանը ծնվել է Ելիզավետպոլ (այժմ Գյանջա) երկաթուղային կայարանի բանվորական ավանում, 1897 թ. դեկտեմբերի 2-ին: Սակայն նա իրեն համարում էր բնիկ չարդախլվեցի, Չարդախլուն համարում էր իր հայրենի գյուղը ոչ միայն այն պատճառով, որ այն պապենական օրրան էր, այլև այն պատճառով, որ հիմնականում այդ գյուղական միջավայրում էր նա ձևավորվել որպես անձնավորություն:

Չարդախլուն պատմական Ղարաբաղի Զագիր գետի ափին ընկած (այժմ՝ Ադրբեջանի Շամխորի շրջան) հնագույն հայաբնակ (այժմ՝ հայաթափ) գյուղ է: Նրա տարածքում պահպանվել են մի կիկլոպյան ամրոց, քարարկղային դամբարաններ և այլ պատմական հուշարձաններ, որոնք բնակիչների մեջ մշտապես վառ էին պահում պատմական հիշողությունը, գյուղի հերոսական անցյալը, օտար բռնակալների դեմ մղած պայքարում հեքիաթային դեմքեր դարձած նվիրյալների մեծագործությունները: Անկեղծ ասած՝ երիտասարդ հասակում ես դա չէի գիտակցում, բայց, հասակ առնելով (իսկ ես այժմ Բաղրամյանների տոհմի մեջ ամենատարեցն եմ), ավելի հաճախ եմ մտածում այդ բանի մասին և հասկանում եմ, թե ինչքան մեծ բան է այդպիսի փառապանծ վայրի ծնունդ լինելը: Եվ ես հիմա, ականավոր զորավարի ծննդյան 100-ամյա հոբելյանի կապակցությամբ, ինձ պարտավոր եմ համարում ներկայացնել այն միջավայրը, որը ծնել է այդ մեծ մարդուն: Բացի դրանից չէ՞ որ պետք է ներկա և հաջորդ սերունդներին փոխանցել այն հոգևոր ժառանգությունը, որը մեր բաղրամյանական տոհմը կուտակել է և որը խտացված ձևով դրսևորվել է Հովհաննես Բաղրամյանի կերպարի մեջ: Դա ես համարում եմ պատասխանատու գործ և սուրբ պարտականություն: Ասեմ ավելի պարզ. ես կուզենայի, որ ներկայիս Հայաստանը լիներ այնպիսի միջավայր, ինչպիսին եղել է Ղարաբաղը և մանավանդ Չարդախլուն: Ժամանակն է դա պահանջում: Ուրեմն արժե ավելի մանրամասն խոսել այն միջավայրի մասին, որը ծնել է Բաղրամյան:

Մարշալ Հովհաննես Բաղրամյանը «Իմ հուշերը» գրքում հարազատ Չարդախլուի մասին գրում է որպես բացառիկ գեղեցիկ բնությամբ, մաքուր օդով և բարեխառն կլիմայով մի վայրի: Գյուղի անվան ժողովրդական ստուգաբանություններից մեկը կապվում է նրան շրջապատող չորս սարերի հետ (պարսկերեն «չհար» և թուրքերեն «դաղ» բառերից կազմված «չհարդաղլու»-ն նշանակում է չորս սար ունեցող): Բնակչության պաշտամունքի վայր էր հատկապես Խաչի սարը, որի գագաթին կար մի պատմական հուշարձան՝ խաչքար, և նրա մոտ՝ երկաթյա եռոտանուց կախված զանգ: Խաչի սարը հսկում է ամբողջ տարածքի վրա: Զանգի մոտ շուրջօրյա հսկողություն

կար, զանգը հնչեցվում էր տագնապի պահերին: Ըստ ժողովրդական ավանդության, նույնիսկ Քյորօղլին, անսալով զգուշացումներին, չի համարձակվել մտնել Չարդախլու: Բաղրամյանն իր գոհունակությունն էր հայտնում այն առթիվ, որ համագյուղացիները նման պատմություններով երիտասարդների մեջ բարձր են պահում հայրենասիրության զգացմունքը: Գյուղը հնուց ի վեր պահում էր ոչ միայն աշխատող ձիեր, այլև ռազմական նպատակի ծառայող նժույգներ, ուներ այրուձի: Եվ զարմանալի չէ, որ գյուղի քյոխվան դարասկզբին գեներալ Բրուսիլովի բանակում ծառայած, ցարական ռազմական բարձր պարգևի՝ Գեորգիյան խաչի ասպետ մի անձնավորություն էր, շրջանի ավազակաբարո անձանց ահ ու սարսափը: Ասենք նաև, որ այս միջավայրը նախկինում արդեն տվել էր բարձրաստիճան զինվորականներ: Օրինակ՝ Ձհան Մարգարյանը ցարական բանակի գեներալ էր: Ցարը նրան ազնվականի կոչում էր շնորհել և կալվածք նվիրել: Ձհանը նրան խնդրել է Չարդախլուին վերադարձնել թուրքերի խլած հողերը, ինչը և արվել է: Չարդախլվեցիները միշտ հպարտությամբ են հիշում իրենց մեծ երախտավորին:

Ընդհանրապես Չարդախլուն բացառիկ գյուղ է, և որոշակի առումով կարելի է խոսել Չարդախլուի ֆենոմենի մասին: Դա մի գյուղ է, որը տվել է 2 մարշալ, 9 գեներալ, ընդհանուր առմամբ Հայրենական մեծ պատերազմի 1250 մասնակից, որոնցից 200-ից ավելին՝ սպաներ, այդ թվում նաև 6 կինսպա: Բոլորիս քաջ հայտնի է 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի հերոս գեներալ-լեյտենանտ Արշակ Տեր-Ղուկասովի անունը, սակայն քչերին է հայտնի, որ նա մեծացել է Չարդախլուի միջավայրում, քանի որ հայրը եղել է այդ գյուղի քահանան[1]: Ներկայումս ՌԴ ռազմաօդային ուժերի թիկունքը ղեկավարում է ավիացիայի գեներալ-գնդապետ չարդախլվեցի Գրիգոր Կարակոզովը: Չենք կարող չնշել նաև «Սուխոյի» ՀԿԲ գլխավոր կոնստրուկտոր չարդախլվեցի Ռոլան Մարտիրոսովին, որը «21-րդ դարի ռազմական ինքնաթիռի» համբավ ձեռք բերած ՍՈՒ-34 հարվածային ռազմական ինքնաթիռի ստեղծողն է: Երբ Արցախի ժողովուրդը 1988 թ. պայքարի ելավ հանուն իր անկախության, նրա առաջին շարքերում էր (ինչպես 18-րդ դարում կաթողիկոս Եսայի Հասան–Ջալալյանը) Ղարաբաղի թեմի ներկայիս առաջնորդ արքեպիսկոպոս Պարգև Մարտիրոսյանը՝ ծագումով չարդախլվեցի: Եվ այսօր էլ չարդախլվեցիները, կորցնելով իրենց պապենական օջախները, չեն կորցրել իրենց մարտունակ ոգին, իրենց սերը դեպի հայրենի գյուղը, դեպի իրենց ավանդույթները:

Ես կարծում եմ, որ Չարդախլուի ֆենոմենը պայմանավորված է այն արժեքային կողմնորոշումներով, որոնց հիման վրա ձևավորվել է դաստիարակության նրանց ավանդական համակարգը: Բանն այն է, որ մեր գյուղը զուրկ էր պաշտպանական բնական հարմարություններից, ուստի թուրքական ցեղերի հաճախ կրկնվող ասպատակություններին դիմակայելու համար պետք է եղել մշտապես զգոն լինել և պատրաստ՝ թշնամուն հակահարված տալու: Դրա հետևանքով գյուղում ավելի մեծ հեղինակություն էին վայելում այն անձնավորությունները, որոնք եղել են ուժեղ և քաջ: Բայց անհատներն

[1] Տես *Г. М. Мартиросян.* Мои телеграммы Горбачеву о трагедии легендарного села Чардахлы, Нагорного Карабаха, Геташена… Рязань, 1995, с. 183:

առանձին-առանձին ի վիճակի չէին իրենք իրենց պաշտպանելու, ուստի դաստիարակության հիմքում դրվել են գյուղի ընդհանուր շահերի գերակայության, միմյանց նկատմամբ հավատարիմ լինելու սկզբունքները: Դա դարձել է չարդախլվեցու էությունը: Թվով միշտ զիջելով թշնամուն՝ չարդախլվեցիները հարկադրված էին իրենց մեջ մշակելու ուժեղ կամք, հոգու տոկունություն: Անհրաժեշտ էր նաև ունենալ լայն մտահորիզոն, կյանքում առաջ գնալու, մտավոր մակարդակը բարձրացնելու հաստատակամություն, ինչը կարող է տալ միայն կրթությունը: Այստեղից էլ՝ ուսման նրանց բուռն ձգտումը:

Չարդախլուն շրջանում բացառիկ գյուղ էր հատկապես իր մարտունակությամբ: Հայտնի է, որ հարևան Բաղան (Բաղենք) ավելի մեծ գյուղը, որն ինքնապաշտպանական առումով անհամեմատ ավելի լավ դիրք ուներ, քան Չարդախլուն, շրջակա ավելի փոքր գյուղերի հետ միասին (Հայի Գետաբեկ, Կրզեն, Սարով, Ղարադաղլու) 1905–1906 թթ. վերածվեցին մոխրակույտի: Բնակչությունը տվեց բազմաթիվ զոհեր: Պատճառն այն էր, որ այդ գյուղերի բնակիչների ինքնապաշտպանական բնազդը կարճատև խաղաղ շրջանում բթացել էր: Մինչդեռ Չարդախլուն երբեք իրեն թույլ չտվեց թուլանալ: Հայության այդ պատվախնդիր ու մարտակորով ոստանը, չնայած պաշտպանության համար բնականից ոչ այնքան հարմար դիրքին, շրջապատի թուրքերի համար մնաց անառիկ: Նույն թվականներին Չարդախլուն ոչ միայն իրեն պաշտպան կանգնեց, այլև հուսալի ապաստան դարձավ մազապուրծ բադանցիների ու գետաբեկցիների համար: Չարդախլվեցիների օգնությամբ թշնամին դուրս քշվեց ոչ միայն մերձակա շրջաններից, այլև հեռավոր Բարսումից: Այդ պատճառով թուրքերն իրենց ուժերը կենտրոնացրին Չարդախլուի վրա՝ 1905 թ. նոյեմբերի 30-ին ձեռնարկելով վճռական գրոհ: Այն հաջողությամբ չեզոքացվեց, և ապա թշնամին հետ շպրտվեց: 1906 թ. հունվարի 16-ին թշնամին ևս մի հարձակում ձեռնարկեց, որը նույնպես ավարտվեց նրա անփառունակ պարտությամբ:

Չարդախլուն օգնության ձեռք էր մեկնում նաև հայաբնակ հեռավոր շրջաններին: Գյուղի տարեգրության մեջ, որ հեղինակել է Ա. Վիրաբյանը, ես կարդացել եմ, որ այդ տարիներին Ղազար Մանասյանի ղեկավարությամբ չարդախլվեցի 26 կամավորներ մեկնել են Արևմտյան Հայաստան և մասնակցել Սասունի հերոսական պայքարին ընդդեմ թուրքերի: Այդ ջոկատի անդամներից 6-ը զոհվել է մարտի դաշտում: Իսկ ղեկավարը՝ Ղ. Մանասյանը, վերադարձին, Շամխորի մոտ դարանակալվելով, նենգաբար սպանվել է: Չարդախլվեցիների մասնակցությունը արևմտահայերի պայքարին անշուշտ մեծ արձագանք էր գտել տարբեր վայրերում, նրան տեղյակ է եղել նաև Շամխորի թրքությունը: Չարդախլուի համբավը տարածվել էր ամբողջ Անդրկովկասով մեկ...

Ծննդավայրում նախնական կրթություն ստանալով՝ Հ. Բաղրամյանը 1912 թ. ընդունվում է Թիֆլիսի երկաթուղային տեխնիկական ուսումնարանը: Բայց ինչպես դպրոցական, այնպես էլ ուսումնարանի արձակուրդները նա անցկացնում էր գյուղում: Ահա ինչ է գրում նա այդ մասին. «Չարդախլուում եղած ժամանակ ես մեծ ուշադրությամբ ուսումնասիրում ու յուրացնում էի գյուղական սովորույթները, ժողովրդական տարբեր ավանդություններ, ըստ

որոնց իմ հասակակիցների մեջ ձևավորվում էին խիզախության ու պատվի, ազնվության, հավատարմության ու նվիրվածության վերաբերյալ պատկերացումները: Հարկ է նշել, որ մեր գյուղի բնակիչները միշտ բարձր էին գնահատում այդ մարդկային հատկությունները, և դա մեծ դեր էր խաղում գյուղական երիտասարդության դաստիարակության մեջ»[2]: Մարշալը կարևորում էր նաև հին զրույցները, այդ թվում նաև մեր դյուցազնավեպի հերոս Սասունցի Դավթի մասին, ինչպես նաև վիշապների ու դևերի մասին գյուղական հմուտ ասացողների առասպելները: Գյուղի հարևանությամբ ապրում էին այլազգիներ՝ ռուսներ, որոնք արտաքսվել էին Անդրկովկաս որպես ըմբոստ

Հովհաննես Բաղրամյանը և նրա Ալեքսեյ եղբայրը
(2-րդ շարքում ձախից 4-րդը) համագյուղացիների հետ.
Չարդախլու, 1947 թ. (հեղինակի ընտանեկան արխիվից,
առաջին անգամ հրատարակվել է հանդեսի 1997 թ. 4-րդ համարում)

աղանդավորներ, հույներ, նաև գերմանացի գաղթականներ: Կային նաև ադրբեջանական գյուղեր: Բազմապիսի մշակույթների հետ շփումը, տարբեր ազգությունների հետ հարաբերությունները ինքնին բարդ և հետաքրքիր էին և իրենց կնիքն էին թողնում աճող սերնդի վրա:

Այս միջավայրում էր ապրում Բաղրամյանների բազմանդամ ընտանիքը: Ղահրաման և Արշակ ավագ եղբայրներն իրենց ընտանիքներով ապրում էին Չարդախլուում, իսկ չորս եղբայրը՝ Աբգարը, Հովհաննեսը, Տիգրանը, Ալեքսեյը, և մի քույրը՝ Արուսյակը, ծնողների հետ ապրում էին Ելիզավետպոլում:

Ընտանիքում տիրողը նահապետական բարքերն էին. ընտանիքը միասնական էր, նրա յուրաքանչյուր անդամի վաստակը բոլորի սեփականությունն էր, և երբեք նյութականի շուրջ վեճեր չէին լինում: «Մենք ապրում էինք շատ համերաշխ», հետագայում հիշում է Հ. Բաղրամյանը: Իշխում էր հարազատության մթնոլորտը: Եվ դա այն դեպքում, երբ ընտանիքը ոչ այնքան բարվոք նյութական պայմաններում էր ապրում: Հիմնական կերակրողը

[2] *И. Х. Баграмян.* Мои воспоминания. Е., 1979, с. 8.

հայրն էր՝ Խաչատուրը (այս անունը հետագայում Հովհաննես Բաղրամյանի հայրանվան մեջ դարձավ Քրիստափոր): Նա երկաթուղային վարպետ էր և ստանում էր ամսական 30 ռուբլի ոսկով աշխատավարձ, մի փոքր գումար, որը հնարավորություն չտվեց Հովհաննեսին ուսումը շարունակելու գիմնազիայում, որտեղ ամսական 10 ռուբլի վարձ էր պահանջվում: Տան տնտեսության կառավարման հոգսը մոր՝ Մարիամի (Մարան) ուսերին էր ընկած, դիմացկուն մի կին, որն ապրեց շուրջ 95 տարի:

Վարպետ Խաչատուրը անբասիր աշխատանքի համար անձամբ Նիկոլայ Երկրորդից ստացել էր արծաթե ժամացույց, երբ ցարը 1914 թ. նոյեմբերին այցելել էր Անդրկովկաս: Արժե նշել, որ նոյեմբերի 26-ին Հովհաննեսը ևս, Թիֆլիսի փողոցներում կանգնած շարասյան մեջ գտնվելով, դիմավորել է ցարին: Սկսվել էր առաջին համաշխարհային պատերազմը, և Կովկասը դարձել էր ռազմաբեմ: Ամենուրեք իշխում էր պատերազմական մթնոլորտը: Եվ ուսումնարանը նոր ավարտած Բաղրամյանը, որն ընդամենը 3 ամիս էր հասցրել մասնագիտությամբ աշխատել, կամավոր զինվորագրվում է ռուսական բանակին թուրքերի դեմ կռվելու նպատակով:

Տարիների հեռվից հիշելով ու գնահատելով մարշալի անցած կյանքի ուղին՝ հարկ եմ համարում խոսել նաև հորեղբորս կյանքից մի դրվագի մասին: 1915 թ. դեկտեմբերի կեսերին Հ. Բաղրամյանը գնացքով գնում էր Բաքու: Գնացքը Ելիզավետպոլին մոտենալիս Բաղրամյանը դասակի հրամանատարից թույլտվություն է խնդրում, որ այցելի հարազատներին: Հրամանատարը չի առարկում. արտառոց փաստ պատերազմական իրադրության մեջ: Կես գիշերին շարժվող գնացքից թռչում, գնում է տուն: Կարելի է պատկերացնել տնեցիների ուրախությունը: Հետագայում նա հիշում էր, որ քույրը՝ Արուսյակը, վեր թռչելով մահճակալից և եղբոր վզովն ընկնելով, երկար ժամանակ պոկ չէր գալիս: Հանդիպումը կարճատև էր, բայց և սրտառուչ: Շատ շուտով մի այլ գնացքով հասնում է իր զորամասին:

Հ. Բաղրամյանին բնորոշող մի դրվագ ևս: Մինչև բանակ գնալը նա սիրահարված էր ծղնացի գեղեցկուհի Թամարին: Ինքը որպես երկաթուղային ազատված էր զինծառայությունից: Այնուհանդերձ հայրենիքի հանդեպ պարտքի զգացումը նրան հարկադրեց, վտանգի ենթարկելով անձնական երջանկությունը, մեկնել բանակ: Նրա բացակայությամբ Թամարն ամուսնացել էր (աղջկան հասել էին մարտի դաշտում Հովհաննեսի զոհվելու մասին լուրեր): Հետագայում նա հանդիպում է Թամարին՝ երեխան գրկին, ամուսինը զոհված: Եվ հորեղբայրս չի թողնում նրան, ամուսնանում է Թամարի հետ, նրա որդուն՝ Մովսեսին, որդեգրում է, ժամանակին ուսման տալիս: Հետագայում նա դարձավ նկարիչ, ապրում էր Մոսկվայում: Բաղրամյանը սիրում էր նրան ինչպես հարազատ որդու (Մովսեսը վախճանվեց 1980 թվականին):

Հորեղբայրս և տիկին Թամարը ներդաշնակ զույգ էին: Տիկին Թամարը խելացի, շատ բարի, մերձավորներին օգնելու պատրաստակամ, իր արժանապատվությունը գիտակցող անձնավորություն էր: Ես դա ասում եմ՝ տարիների իմ փորձից ելնելով:

1937 թ. ժողովրդի թշնամի հայտարարվեց Ալեքսեյ Քրիստափորի Բաղրամյանը: Նրան ձերբակալեցին և արտաքսեցին Սիբիր: Այնուհետև ժո-

ղովրդի թշնամի հայտարարվեց հայրս՝ Աբգար Քրիստափորի Բաղրամյանը (ՀԿԿ(բ) անդամ 1918 թվից): Հովհաննես Բաղրամյանը հեռացվեց բանակից և ամեն օր ձերբակալման էր սպասում, մի քանի ամիս կրեց քաղաքացիական զգեստ: 1937 թ. առանց քննության ու դատի «եռյակի» որոշմամբ գնդակահարվեց քեռիս՝ Հայկազ Մանասյանը: Ինձ՝ 16-ամյա պատանուս՝ որպես ժողովրդի թշնամու որդու, հեռացրին կոմերիտմիությունից: Հորս և նրա եղբայրներին անհեթեթ մեղադրանքների շարքում ներկայացվել էր նաև մի մեղադրանք, թե իբր նրանց հայրը եղել է դաշնակցական և 1920 թ. երկաթուղային կամուրջներ է պայթեցրել 11-րդ Կարմիր բանակի մուտքը Հայաստան խոչընդոտելու նպատակով: Հայրս՝ Աբգարը, գտնվելով չեկիստների միշտ արթուն հայացքի տակ, կարողացավ Մոսկվա հասնել և, օգտվելով ռեպրեսիաների թուլացումից, հասնել մինչև կուսակցության «վերևները» և ապուցուցել իր անմեղությունը: Հորս վերադարձրին կուստոմսը, սակայն գերմարդկային տառապանքներն իրենցն արեցին, մեկ տարի չանցած, 43 տարեկան հասակում նա մահացավ: Եվ տարիներ շարունակ հորեղբայրս ու կինը մեզ նյութապես օգնում էին: Նրանց շնորհիվ ես և երկու քույրերս բարձրագույն կրթություն ստացանք: Պետք է ասեմ, որ հորեղբայրս միշտ հպարտանում էր նրանով, որ մենք ծանր պայմաններում մեր մեջ ուժ գտանք կյանքում մեր տեղը գտնելու: Նա միշտ ասում էր, որ իրեն հանգիստ է զգում մեզ համար: Նաև ասեմ, որ գնահատում էր մեր արժանավայել պահվածքը՝ այն, որ երբեք նրա «վզից չէինք կախվել»: Եվ ահա 1938 թվականից սկսած մինչև 1951 թ. (Մոսկվայի ռազմաիրավաբանական ակադեմիան իմ ավարտելու տարին) հորեղբայրս մեզ ուղարկում էր ամսական 500 ռուբլի: Տիկին Թամարը մեզ այլ օգնություն էլ էր ցույց տալիս:

Իսկ Ալեքսեյ հորեղբայրս տուն վերադարձավ Հովհաննես Բաղրամյանի շնորհիվ: Երբ Ստալինը Հովհաննես Բաղրամյանին Մոսկվա է կանչում ռազմաճակատի հրամանատար նշանակելու համար, հորեղբայրս չի թաքցնում, որ ինքը «ժողովրդի թշնամու» եղբայր է: Ստալինը հանձնարարում է Բերիային անմիջապես պարզել հարցը: Պարզվում է, որ մեղադրանքը հարուցվել է «ապօրինի կերպով զենք պահելու համար»: Ի վերջո Ալեքսեյ հորեղբորս արդարացրին, որից հետո նրան պատասխանատու պաշտոններ էին տալիս:

Հովհաննես հորեղբորս առաջին անգամ տեսել եմ 1938 թ., երբ եկել էր հորս հուղարկավորությանը:

1946 թ. ես ընդունվեցի Մոսկվայի ռազմաիրավաբանական ակադեմիա: Երկու ամիս անց հորեղբայրս եկավ Մոսկվա. այն ժամանակ նա Մերձբալթյան զինվորական օկրուգի հրամանատարն էր: Շատ ուրախացավ, որ ռազմագիտական ակադեմիա եմ ընդունվել: Սակայն մի քիչ հիասթափվեց, որ ես Ֆրունզեի անվան ակադեմիա չեմ ընդունվել: Բայց ես իմ խառնվածքով զինվորական չէի, ուստի ընտրել էի զինվորական իրավաբանի մասնագիտությունը: Նա ինձ խորհուրդ տվեց ավարտելուց հետո չգնալ աշխատանքի զինվորական վարչական-իրավաբանական կամ էլ ռազմական տրիբունալի բնագավառներ: Երրորդ հնարավորությունը դատախազությունում էր, և որոշեցինք այդ լուրջ բնագավառն ընտրել: Հետո միայն ես զգացի, թե ինչքան իրավացի էր նա: Ես աշխատեցի մինչև կենսաթոշակի անցնելու տարիքս (56 տարեկան հասակում)՝ բանակում ծառայելով 37 տարի: Հորեղ-

բայրս միաժամանակ խորհուրդ տվեց լավ մասնագետ դառնալու համար անցնել աշխատանքի բոլոր օղակներով՝ քննիչ, դատախազի օգնական, տեղակալ: «Միայն դրանից հետո լիապես իրավունք կունենաս դատախազ դառնալու», ասաց նա: Եվ ես այդպես էլ վարվեցի: Միայն աշխատանքային վերջին տարիներին ես ստանձնեցի դատախազի պաշտոն խորհրդային գվարդիական կարմրադրոշ 7-րդ բանակում, որը տեղակայված էր Հայաստանում: 1966 թ. ես, մերժելով Մոսկվա և այլուր աշխատելու առաջարկները, նախընտրեցի Երևանը, որտեղ արդեն բնակություն էին հաստատել քույրերս՝ Մարիան (բժշկուհի) և Թամարը (կենսաբան):

Բաղրամյանների ընտանիքը (հեղինակի ընտանեկան արխիվից, առաջին անգամ հրատարակվել է հանդեսի 1997 թ. 4-րդ համարում)

Ղարաբաղցիները մի լավ խոսք ունեն՝ «վերթռած», ասել է թե գոռոզ, իրեն երևակայող: Հ. Բաղրամյանը որքան էլ բարձրացավ ծառայողական սանդուղքով, միշտ մնաց նույն մարդամոտ, ընկերոջը հավատարիմ մարդը, երբեք չդարձավ «վերթռած»: Առիթ էր փնտրում, որ հարազատները հավաքվեն, միասին լինեն, իրար «հալ» իմանան: Հայաստան այցելելիս, իսկ նա վերջին տարիներին հաճախ էր լինում հայրենիքում, նախապես զգուշացնում էր ինձ կամ մյուս եղբոր որդուն՝ Իլյային, հոգ տանելու, որ բոլոր ազգականները մի տեղ հավաքվեն, որևէ մեկիս տանը: Իսկ Չարդախլուում Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հուշարձանի բացման առթիվ նախապես խնդրեց, որ ով հնարավորություն ունի, մեկնի ծննդավայրը: «Գնում եմ հուշարձանի բացմանը, թող բոլորը լինեն»: Կարգադրության նման էր հնչում նրա խնդրանքը: Գյուղի երիտասարդները ձիերով ընդառաջ եկան մարշալին և նրան ուղեկցեցին գյուղ: Հանդիսությունները տեղի ունեցան գյուղի ակումբում, որը կառուցել էր մարշալի Ալեքսեյ եղբայրը (ջրաշինարար): Ելույթ ունեցողների մեջ, իհարկե, առանձնացավ Հ. Բաղրամյանն իր ջերմ ու սրտամոտ խոսքով:

Ընդհանրապես մարշալը շատ ուշադիր էր մարդկանց նկատմամբ, ոչ մեկի խնդրանքն անուշադրության չէր մատնում: Որպես ԽՍՀՄ Գերագույն

խորհրդի պատգամավոր օգտագործում էր բոլոր հնարավորությունները բազմաբնույթ հարցեր լուծելու համար: Ես ականատես եմ եղել, թե ինչպես Հ. Բաղրամյանը անհանգստանում էր Բրեստի պաշտպանության հերոս Սամվել Մաթևոսյանի ճակատագրով. նրան զրպարտել էին: Մարշալը դիմում էր տարբեր պետական պաշտոնյաների՝ տուժած զինվորի պատիվը վերականգնելու համար: Հարկ է առանձնացնել Չարդախլուում ռազմական փառքի թանգարանի ստեղծման գործին Բաղրամյանի մասնակցությունը: Նա հասավ այն բանին, որ փոխվեց թանգարանի շենքի կառուցման տեղը. թանգարանի երկհարկանի շենքը կառուցվեց հայրական արդեն խարխլված տան տեղը: Դա գյուղի մարտական փառքի խնդրին էր վերաբերում, ուստի նա թանգարանի համար ոչինչ չէր խնայում: Թանգարանի կառուցման ժամանակ ադրբեջանական իշխանությունները նրա անունը փոխեցին՝ դարձնելով «Շամխորի շրջանի ռազմական և աշխատանքային փառքի թանգարան», և առաջին հարկաբաժինը նվիրվեց աշխատանքային փառքի ցուցադրմանը: Դա արվեց այն միտումով, որ ներկայացվեն նաև ադրբեջանցիներ, քանի որ նրանք ռազմական փառքի գծով բան չունեին ներկայացնելու հայերի կողքին: Ասեմ նաև, որ թանգարանը ստեղծվել էր ժողովրդական հանգանակության միջոցներով: Յուրաքանչյուր հարկում կար ցուցադրական մեծ սրահ, իսկ երկրորդ հարկում մարշալի և այլ բարձրաստիճան հյուրերի հանգստի համար հատուկ սենյակ էր առանձնացված: Թանգարանն ուներ 7 հաստիքով սպասարկող անձնակազմ: Ներկայումս մեզ ոչինչ հայտնի չէ թանգարանի և նրանում պահվող նմուշների ճակատագրի մասին:

Ինքը լինելով միշտ զուսպ ու համեստ, լայնախոհ ու լայնսիրտ, նրբանկատ՝ երբեք կեցվածք չէր ընդունում, ուստի և սիրելի էր: Մարշալ Գ. Ժուկովն էլ շատ մեծ հարգանք էր վայելում, բայց Հ. Բաղրամյանը նաև սիրելի էր. իսկ Գ. Ժուկովի կոշտությունը շատերին հեռավորության վրա էր պահում: Բայց որքան էլ նրանք տարբեր էին իրենց բնավորությամբ, այնուամենայնիվ մինչև վերջ մնացին որպես հավատարիմ ընկերներ: Գ. Ժուկովի կյանքի այն տարիներին, երբ նա շնորհազրկված էր, նրա աղջկա վկայությամբ Հ. Բաղրամյանը մնում էր նրա ամենամոտ ու հավատարիմ բարեկամը, Գ. Ժուկովը նրան սիրում էր իր ազնիվ մարդկային հատկությունների, նուրբ հումորի, մեծ խելքի և ողջամտության համար:

Հ. Բաղրամյանը նույնպիսի հավատարմություն էր ցուցաբերում ծովակալ Հովհաննես Իսակովի նկատմամբ, հատկապես նրա կյանքի վերջին տարիներին, երբ ծովակալը պառկած էր ՊՆ կենտրոնական կլինիկական առողջարանում, մերձմոսկովյան «Յուսուպովների ամառանոցում»: 1967 թ. ամռանը ամեն կիրակի Բակովկայից (իր ամառանոցից, որտեղ նա բնակվում էր) գնում էր Իսակովին այցի:

Ջերմ հարաբերություններ կային Հովհաննես Բաղրամյանի և զրահատանկային զորքերի գլխավոր մարշալ Համազասպ Բաբաջանյանի միջև: Իհարկե, որպես համագյուղացիներ և բարձրաստիճան զինվորականներ՝ նրանք որոշակի մտերմական վերաբերմունք ունեին միմյանց նկատմամբ: Բայց պատերազմից հետո խորացավ և մինչև Բաբաջանյանի մահը շարու-

նակվեց, նրանց մեծ, իսկական տղամարդկային բարեկամությունը՝ ընտանիքներով, հաճախակի հանդիպումներով, ընկերական լայն շրջապատում: Դրան նպաստում էին նրանց որոշ ազգակցական կապերը:

Անսահման էին Հովհաննես Բաղրամյանի սերն ու հոգատարությունը իր ընտանիքի անդամների նկատմամբ: Կնոջ մասին ես արդեն խոսեցի: Հատուկ քնքշությամբ էր վերաբերվում հարազատ զավակին՝ դստերը: Մարգոն վախճանվեց 1994 թ. 72 տարեկան հասակում: Ինչ վերաբերում է երկու թոռներին՝ Հովհաննեսին և Կարինեին, ապա այստեղ մարշալը իսկական հայ տղամարդ էր. հայ տղամարդիկ իրենց զավակներին սիրում են անսահմանորեն, իսկ թոռներին՝ մի քիչ ավելի: Հովհաննեսը հիսունին մոտ է, աշխատում է արտաքին առևտրի ոլորտում: Ի դեպ, ընդհանուր համաձայնությամբ նա ստացել է Բաղրամյան ազգանունը, այնպես որ աշխարհում ապրում, աշխատում է Հովհաննես Բաղրամյան կրտսերը:

Հովհաննես Բաղրամյանին զինվորական կյանքից ճանաչողներն առանձնապես հաճախ են նշում ստորադրյալների, հասարակ զինվորների նկատմամբ նրա հարգալից, հոգատար վերաբերմունքը: Նա նույնն էլ պահանջում էր մյուս հրամանատարներից: Այս առումով հատկանշական են Խորհրդային Միության ՊՆ տեղակալ – զինված ուժերի թիկունքի ծառայության պետի պաշտոնում մարշալի գործունեության տարիները: Այս բնագավառում նա կարևոր խնդիրներից մեկն էր համարում զինված ուժերի անձնակազմի, մասնավորապես զինվորների կենցաղի կազմակերպումը. նրանց հանդերձավորումն ու սննդի ապահովումը: Արժե նշել նրա ելույթը բարձրաստիճան հրամանատարների առջև «Հոգատարությունը մարդկանց նկատմամբ» թեմայով: Ելույթը հրապարակվել է զինվորական մամուլում և դարձել մի յուրահատուկ հրահանգ հրամանատարների համար: Որոշ ժամանակ անց համաբանակային խորհրդակցությունում Բաղրամյանը հանդես է եկել «Զորքերի կենցաղի բարելավման խնդիրների մասին» թեմայով զեկուցմամբ[3]:

Բաղրամյանի բարոյական նկարագրի մի հետաքրքիր շտրիխ ևս: Բանակի գեներալ Վ. Վ. Կուրասովի վկայությամբ, Բաղրամյանը միշտ մտահոգված էր լինում, որ մարտերում աչքի ընկած զինվորները պարգևատրվեն ժամանակին: Ուշացման դեպքում անողոք էր: Շատ հաճախ ինքն էր գնում հոսպիտալները և այնտեղ վիրավորներին հանձնում պարգևները:

Բաղրամյանի բնավորության այնպիսի գծեր, ինչպիսիք են բարությունը, համեստությունը, հարգանքն ու հոգատարությունը իր հետ առնչվող մարդկանց, մասնավորապես իր ստորադրյալների նկատմամբ, ընդհանրապես բարոյական մաքրությունը, մյուս կողմից, սկզբունքայնությունը, բարոյական խիզախությունը, խելամիտ պահանջկոտությունը նկատել և նշել են նրան ճանաչողներից շատ շատերը:

Բաղրամյանի ազդեցությամբ եմ ես բացատրում այն հանգամանքը, որ

[3] Տես *Ա. Ն. Մնացականյան,* Մարշալ Բաղրամյան (կյանքի և գործունեության ուրվագիծ): Ե., 1978, էջ 277:

մեզնից շատերը դարձան զինվորական: Իմ մասին ես արդեն ասացի: Զինվորական կոչումով, այսպես ասած, Հովհաննես Բաղրամյանից հետո երկրորդն էր Ալեքսեյի որդի Իլյան՝ գեներալ-մայոր: Նա «Մարշալ Բաղրամյան» հիմնադրամի տնօրենն էր: Վախճանվեց այս տարի 69 տարեկան հասակում: Նշեմ նաև, որ քույրս՝ Թամարը, եղել է պատերազմի մասնակից գվարդիայի սերժանտի կոչումով, զենիթային: Զորացրվել է միայն հիվանդության պատճառով: Իր իսկ Բաղրամյանի թոռնուհի Կարինեն ավարտել է օտար լեզուների ինստիտուտը և ռազմագիտական ինստիտուտում իսպաներեն է դասավանդում, փոխգնդապետ է:

Լինելով կիրթ ու բարեհամբույր անձնավորություն՝ Բաղրամյանը գործի մեջ խստապահանջ էր, արտահայտվելու ձևերի մեջ՝ անաչառ ու շիտակ: Եթե գործն էր պահանջում, ապա նա պատրաստ էր բանակռվի մեջ նետվելու: Մեկ անգամ չէ, որ նա խիզախել է իր սեփական կարծիքը հայտնել և այն համառորեն պաշտպանել՝ հակադրվելով հեղինակավոր զորահրամանատարների: Հայտնի է ռազմակայանում Օրյոլյան օպերացիային նվիրված խորհրդակցությունում նրա հանդուգն վարքը, նա առարկեց օպերացիայի մի տարբերակի դեմ, որը ներկայացվել էր Գլխավոր շտաբի կողմից և որին, Բաղրամյանի տպավորությամբ, Ստալինը կարող էր հավանություն տալ: Ընդսմին, Բաղրամյանն առաջ քաշեց իր տարբերակը: Արևմտյան և Բրյանսկի ռազմաճակատների հրամանատարները փորձում էին հերքել Բաղրամյանի փաստարկները: Սակայն վերջում Ստալինը դրականորեն արտահայտվեց Բաղրամյանի տարբերակի մասին, և այն ընդունվեց[4]: Այդ միջադեպում դրսևորվեցին Բաղրամյանի ոչ միայն զորավարական տաղանդը, այլև բարոյական խիզախությունը: Իսկ հայտնի է, որ Ստալինը ոչ միշտ էր բարեհաճ հանդուգն առաջարկների հեղինակների նկատմամբ (դա Բաղրամյանին հայտնի էր Ժուկովի օրինակով, որի հետ նա դեռևս բարձրագույն հեծելազորային դպրոցում ուսանելու տարիներից մտերմական կապեր էր պահպանում): Իր հանդգնության համար նա կարող էր զրկվել շատ բանից, բայց հանուն ավելի մեծ նպատակի գնաց այդ քայլին: Եվ դա նրա կյանքում եզակի դեպք չէր:

Ունենալով հարուստ ներաշխարհ ու նուրբ հոգի՝ Բաղրամյանը մեծ հակում ուներ արվեստի հանդեպ, գնահատում և սիրում էր այն:

Հայ նկարիչներից Բաղրամյանը շատ բարձր էր գնահատում Մարտիրոս Սարյանին (որի վրձնած իր դիմանկարը շատ էր հավանում): Մտերմիկ հարաբերությունների մեջ էր մոսկվաբնակ հանրաճանաչ նկարիչ Դմիտրի Նալբանդյանի հետ, որը վրձնել է նշանավոր զորահրամանատարների (այդ թվում երեք անգամ՝ Բաղրամյանի) դիմանկարներ: Երբ խոսք էր լինում այն մասին, որ Դ. Նալբանդյանը հաճախ տուրք է տալիս ժամանակի ոգուն (քաղաքական նկատառումներով), Բաղրամյանը դիտողություն էր անում, որ այդպես ասողները չգիտեն Նալբանդյան հայ նկարչին, որի իսկական դեմքը, նախասիրությունները երևում են միայն արվեստանոցում գտնվող գործերում:

Բաղրամյանը հայ կոմպոզիտորներից բարձր էր գնահատում Արամ Խաչատրյանին. «Խաչատրյանը հրաբուխ է, որը դեռ ամեն ինչ չէ, որ ժայթքել է:

[4] *И. Х. Баграмян.* Мои воспоминания, с. 506.

Ինձ թվում է՝ իր գլուխգործոցը նա դեռ կստեղծի»: Սիրում էր նաև Ալեքսեյ Հեքիմյանի երգերը, դրանց մեղեդայնությունը, խորապես հայկական ժողովրդական ոգին, Անդրեյ Բաբաևի երաժշտությունը, մասնավորապես նրա «Արծվաբերդ» օպերան: Նրա մեջ մեծագույն հիացմունք էր առաջացնում Պավել Լիսիցյանի և Զարուհի Դոլուխանյանի կատարողական արվեստը: Նկատի ունենալով Լիսիցյանի կատարումներից իր ստացած գեղագիտական հաճույքը՝ համեստորեն ցավում էր, որ ինքը դրա դիմաց նրան տալու ոչինչ չունի:

Այն հարցին, թե ով է, իր կարծիքով, ամենամեծ հայը, Բաղրամյանը առանց վարանելու պատասխանել է՝ Հովհաննես Թումանյանը: Նկատեցեք՝ ոչ թե Վարդան Մամիկոնյանը կամ Անդրանիկը, այլ՝ բանաստեղծ Թումանյանը:

Հայտնի է, որ Ղրիմում դեռևս 11-րդ դարից գոյություն է ունեցել հայկական մեծ համայնք, որն իր զգալի հետքն է թողել մշակույթի և ռազմական արվեստի պատմության մեջ (նկարիչ Այվազովսկի, կոմպոզիտոր Սպենդիարյան, ծովակալ Սերեբրյակով և այլն): 1969 թ. Ղրիմում ընտանիքով հանգստանալիս նա ծովային և ցամաքային ճանապարհորդություններ էր կազմակերպում հատկապես պատմական հուշարձաններին ծանոթանալու նպատակով: Եղավ Սիմֆերոպոլում, Սևաստոպոլում, Սապուն-Գորայի շրջակայքում, որտեղ շատ հայ մարտիկներ Հայրենական մեծ պատերազմի օրերին մարտնչել էին թշնամու դեմ: Նա հպարտանում էր, երբ մարտիկների հուշատախտակներում նկատում էր հայրենակիցների անուններ: Ծննդավայրի հետ կապված ամեն մի հիշատակություն, հայրենակիցների խիզախության ամեն մի դրվագ հպարտության զգացում էր առաջ բերում նրա մեջ:

Բաղրամյանը հատուկ ուշադրություն էր դարձնում իր զորամասերում ծառայող հայ զինվորներին ու հրամանատարներին: Նրանց հետ խոսելիս սիրում էր ասել. «Այս պատերազմը նաև մեր պատերազմն է»: Նա նկատի ուներ այն հանգամանքը, որ պատերազմում մեր պարտության դեպքում Թուրքիան կհարձակվեր Հայաստանի վրա, որի սահմանների մոտ կազմ ու պատրաստ պահում էր 26 դիվիզիա:

Խիստ հատկանշական է ղարաբաղցի զինվորների մասին Բաղրամյանի հիացական կարծիքը, որը նա արտահայտել է «Իմ հուշերը» գրքում՝ խոսելով Սարդարապատի ճակատամարտի մասնակիցների մասին. «Մինչև այժմ էլ ես չեմ կարող մոռանալ, թե 5-րդ հայկական գնդի մարտիկները, գունդ, որը բացառապես ղարաբաղցիներից էր կազմված, ինչպես էին անբարենպաստ պայմաններում անձնուրաց կերպով գրոհում թշնամու դիրքերը, որոնք սարքավորված էին, թվում էր, անմատչելի բարձունքներում... Ես ղարաբաղցի մարտիկների նկատմամբ համակված էի խոր հարգանքով մարտերում նրանց կողմից ցուցաբերվող արիության, անձնուրացության ու անվախության համար»[5]:

Այստեղ հարկ է հիշել, թե պատմական Ղարաբաղի այդպիսի արիության և անձնուրացության ընդունակ մի բուռ համառ ու դիմացկուն ժողովուրդը

որքան նշանավոր գործիչներ է տվել տարբեր ժամանակներում և կյանքի տարբեր բնագավառներում: Հիշենք հենց ռազմական գործիչներին, գեներալներ Վ. Մադաթով, Ա. Տեր-Ղուկասով, Մ. Սիլիկով, Դ. և Պ. Փիրումովներ, Ձ. Մարգարյան, Գ. Սանասյան, Լ. Մարտիրոսով, Մ. Պարսեղով, Վ. Իսրայելյան, Ս. Աղաջանով, Ս. Սարդարյան, Ս. Ղազարյան, մարշալներ Ս. Խուդյակով (Ա. Խանփերյանց), Հ. Բաբաջանյան և ուրիշներ, և այդ շարքն ամբողջացնում է շարքի գագաթնակետը՝ նրանց զորավարական ու մարդկային արժանիքները յուրովի իր մեջ խտացրած մարշալ Հովհաննես Բաղրամյանը:

Չարդախլուի ֆենոմենը ավանդույթներով հարուստ մի սոցիոկուլտուրական միջավայր է, որը սերնդեսերունդ ձևավորել է իրենց հերոսական ճակատագրով ֆենոմենալ զավակներ որպես անձնավորություններ: Հենց այս համատեքստում մարշալ Բաղրամյանը կարող է դիտվել որպես լայն առումով վերցված Չարդախլուի ֆենոմենի առավել ցայտուն արտահայտված անձնավորում:

Վերջում ուզում եմ հույս հայտնել, որ Բաղրամյանի կերպարը օրինակ կդառնա նորաստեղծ հայոց բանակի հրամանատարների համար: Իսկ դա կնշանակի, որ մարշալ Հովհաննես Բաղրամյանը իր մահից հետո էլ շարունակում է ծառայել իր ժողովրդին, իր հայրենիքին:

[5] *И. Х. Баграмян.* Мои воспоминания, сс. 83–84.

ЧАРДАХЛИНСКИЙ ФЕНОМЕН

Г. А. БАГРАМЯН[*]*, полковник запаса*

РЕЗЮМЕ

Иван Христофорович (Оганес Хачатурович) Баграмян родился в 1897 г. в рабочем поселке железнодорожной станции Елизаветполь, однако себя он считал коренным чардахлинцем. В Чардахлу находился дом его предков, где он проводил свои летние каникулы.

Личность Баграмяна сформировалась в консервативной традиционной атмосфере Чардахлу. Древнее армянское село идеально подходило для восприятия среды, которая породила 10 генералов и других выдающихся специалистов. Баграмян в беседах с односельчанами подчеркивал важность роли исторической памяти в патриотическом воспитании молодежи: «В Чардахлу я изучал и усваивал сельские обычаи…, по которым формировались у моих сверстников понятия о мужестве и доблести, честности и благородстве, верности и преданности». Маршал отмечал также важное значение национального эпоса о Давиде Сасунском и народных легенд, которые рассказывали искусные сельские сказители.

[*] Грант Абгарович Баграмян (1922–1999), военный юрист, полковник запаса.

Հայ ականավոր խորհրդային գործիչներ.
ձախից աջ՝ Խորհրդային Միության կրկնակի հերոս,
Խորհրդային Միության մարշալ Հովհաննես Բաղրամյան,
Սոցիալիստական աշխատանքի հերոս Անաստաս Միկոյան,
Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս
գեներալ-գնդապետ Արտեմ Միկոյան

Մեծ Հայրենականի փառապանծ զորավարներ
մարշալ Բաղրամյանը և մարշալ Ժուկովը

Երկու մարշալ նույն գյուղից՝ Հովհաննես Բաղրամյան
և Համազասպ Բաբաջանյան

Մարշալ Հովհաննես Բաղրամյանը
գեներալ-լեյտենանտ Սարգիս Մարտիրոսյանի,
գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի
և ակադեմիկոս Ծատուր Աղայանի հետ
(դոկտոր Վլադիմիր Մուրադյանի անձնական արխիվից,
առաջին անգամ հրատարակվել է հանդեսի 1997 թ. 4-րդ համարում)

Հովհաննես Բաղրամյանը ռազմաճակատի տանկիստների հետ

1-ին Մերձբալթյան ռազմաճակատի շտաբում մարշալ Վասիլևսկու հետ.
1944 թ.

Մարշալ Բաղրամյանը Ջվեզդնի քաղաքում ծանոթանում է
տիեզերական տեխնիկային

Մարշալ Բաղրամյանը Հայաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ
Վիկտոր Համբարձումյանի հետ

Иван Христофорович высоко ценил патриархальный уклад семьи. Несмотря на то, что семья была материально недостаточно обеспечена, никогда не возникало споров на материальной почве. В семье преимущественно царили сердечность и сплоченность. Трудолюбие Баграмян унаследовал от родителей.

Окончив Железнодорожное техническое училище и успев проработать по любимой специальности всего три месяца, он в 1915 г. добровольно вступил в ряды Русской Армии, чтобы воевать против турок, а в мае 1918 г. принял участие во всенародной героической Сардарапатской битве, победа в которой предотвратила повторение Геноцида армян теперь уже в Восточной Армении.

Будучи сдержанным, скромным и деликатным человеком, Баграмян не терпел фальши. Он был требователен, но в то же время очень любим. Если того требовало дело, он мог быть дерзким и настойчивым. Иван Христофорович не раз отваживался упорно отстаивать свои незаурядные идеи, вступая в жаркие дискуссии на заседаниях Ставки Верховного Главнокомандования, ставя под угрозу свое положение.

Будучи человеком военным, он был очень восприимчивым и слыл любителем искусств. Высоко ценил творчество М. Сарьяна, Комитаса, А. Хачатуряна и П. Лисицяна. Искренне гордился достижениями своих соотечественников и особенно карабахцев.

По случаю Сардарапатского сражения он написал: «Я проникся большим уважением к воинам-карабахцам за их отвагу, самоотверженность и бесстрашие в бою». Лучшие черты карабахцев гармонично сконденсировались в его личности, образовав сплав из таланта командира и человеческих моральных качеств. Благодаря этому все – от солдата до генерала – верили его слову и делам. Образ Баграмяна является ярким примером для командиров армянской армии.

THE PHENOMENON OF CHARDAKHLU

H. A. BAGHRAMYAN[*]*, Colonel (Ret.)*

SUMMARY

Ivan Khristoforovich (Hovhannes Khachaturi) Baghramyan was born in the railway station settlement in Yelizavetpol in 1897, however, he considered himself as an indigene from Chardakhlu. His ancestors' house was in Chardakhlu, where he used to spend his summer holidays.

Baghramyan's personality was shaped in the conservative traditional atmosphere of Chardakhlu. The ancient Armenian village perfectly fitted for perceiving the environment, which gave birth to 10 generals and other

[*] Hrant A. Baghramyan (1922–1999), legal officer, Colonel (Ret.).

eminent specialists. In his conversations with his countrymen, Baghramyan used to stress the importance of the role of historical memory in youth patriotic upbringing, “In Chardakhlu I studied and adopted rural traditions …, which shaped in my peers the ideas of courage and valour, honesty, splendour and generosity, fidelity and devotion”. The Marshal also highlighted the key importance of the national epic poem of David of Sasoun and other folk legends, told by the rural skillful storytellers.

Hovhannes Baghramyan highly valued the patriarchal family pattern. Although the family was not financially well-off, no arguing for material reasons ever occurred. Cordiality and cohesiveness prevailed at home. Baghramyan inherited his diligence from his parents.

After graduating from the Railway Technical School in 1915 and having worked only three months in his beloved specialty, he voluntarily joined the Russian Army to fight against the Turks, and in May 1918, took part in all-people’s heroic Battle of Sardarapat, the victory in which precluded the recurrence of the Armenian Genocide this time in the Eastern Armenia.

Being a reserved, modest and tactful person, Baghramyan never tolerated falsehood. He was exigent and at the same time strongly loved. If the work required, he could be impudent and obstinate. Time and again Hovhannes Baghramyan ventured to take a strong stand of his extra-ordinary ideas, engaging in heated discussions at the Supreme High Command General Headquarters meetings and endangering his position.

Being a military man he was very perceptive and had a reputation of an art lover. He highly valued the oeuvres of Saryan, Komitas, Khachaturyan and Lisitsyan. He took sincere pride in the achievements of his countrymen and especially people of Karabakh.

On the occasion of the Sardarapat Battle he wrote: “I am imbued with great respect for warriors from Karabakh for their bravery, dedication and fearlessness in the battle”. The best features of the Karabakh people were harmoniously accumulated in him, making a fusion of commander’s talent and human moral qualities. As a result from soldier to general everybody believed his word and his deed. Baghramyan’s image is a bright example for the commanders of the Armenian Army.

ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄ

СОВЕРШЕНСТВОВАНИЕ СИСТЕМЫ ВОЕННОГО ОБРАЗОВАНИЯ

IMPROVEMENT OF MILITARY EDUCATION SYSTEM

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՐՈՇ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ՝ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ՓՈՓՈԽՎՈՂ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՇՎԱՌՄԱՄԲ*

Վ. Վ. ՄԵԼՔՈՆՅԱՆ, լեյտենանտ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի գիտաուսումնական բաժանմունքի պետ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից պատերազմներում կիրառվող նոր տեխնոլոգիական միջոցները, այդ թվում՝ արհեստական բանականությունը, արմատապես փոխել են պատերազմի բնույթը: Այս փոփոխությունները հետազոտելու համար ՌԴ Գերագույն շտաբի ակադեմիայի ղեկավար գեներալ-գնդապետ Վլադիմիր Զարուդնիցկին առաջարկում է կիրառել ռազմագիտական ճանաչողության մեթոդաբանությունը, որի առանձնահատկությունները, բովանդակությունն ու բնույթը պայմանավորված են հետազոտության գլխավոր օբյեկտի՝ «պատերազմ» երևույթի յուրահատկությամբ, դրա կոնկրետ ձևերով և դրանց նախապատրաստման ու վարման պայմաններով և եղանակներով: Ընդ որում, ըստ Զարուդնիցկու՝ ռազմագիտական ճանաչողության մեթոդաբանությունն իր առջև չի դնում և չի էլ կարող դնել ռազմական տեսության և պրակտիկայի վերաբերյալ կոնկրետ հարցերի լուծման խնդիր: Դրա առաքելությունն այլ է. ցույց տալ այս կամ այն ռազմական հարցի ուսումնասիրության ուղիները, որոշել և գնահատել ճանաչողության մեթոդները, հետազոտողին զինել ճանաչողական գործունեության սկզբունքներով, օգնել նրան խուսափել ակնհայտորեն սխալ եզրահանգումներից[1]:

Իհարկե, յուրաքանչյուր հետազոտող ինքն է ընտրում իր հետազոտության մեթոդաբանությունը, սակայն նրա համար «հույժ կարևոր է ոչ միայն լավ իմանալ գիտական աշխատանքը բնութագրող հիմնական դրույթները, այլև գոնե ամենաընդհանուր պատկերացումներ ունենալ գիտական ստեղծագործության մեթոդաբանության ու մեթոդների մասին: Ինչպես ցույց է տալիս բարձրագույն ուսումնական հաստատությունների ժամանակակից ուսումնական պրակտիկան, գիտական աշխատանքի հմտությունների ձեռքբերման ուղղությամբ առաջին քայլերի կատարման ժամանակ այդ հետազոտողների

---

* Հոդվածը նախնական տեսքով ներկայացվել է 14.10.2022: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 16.12.2022:

[1] Տես *В. Б. Зарудницкий.* Военная наука: новые горизонты познания. «Военная мысль» («ВМ»), июль 2022, № 7:

համար առավելապես ծագում են հենց տվյալ բնույթի հարցեր»[2]: Ուստի դրա համար անհրաժեշտ է ունենալ որակյալ բարձրագույն կրթություն:

Հաշվի առնելով պատերազմի բնույթի փոփոխությունների և զարգացման հիմնական միտումների վերաբերյալ հետազոտությունների արդյունքները[3]՝ մենք դիտարկել ենք ռազմական գործի կարևոր ոլորտներից մեկը՝ ռազմական կրթությունն իր արդիական պրոբլեմներով հանդերձ՝ նպատակ ունենալով առաջավոր փորձի ներկայացմամբ նպաստել ՀՀ-ում ռազմական կրթության նոր հարացույցի ձևավորմանը:

Որո՞նք են ներկայիս պայմաններում ռազմական կրթության նպատակն ու բովանդակությունը, ինչպե՞ս պետք է այն կազմակերպվի: Տվյալ հարցերը վերջին տարիներին աճող հրատապություն են ստացել ինչպես մի շարք առաջատար պետություններում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում՝ հատկապես 2020 թվականից հետո: Հետևաբար հիմնական խնդիր է դառնում այն հարցը, թե ինչպես ձևավորել օբյեկտիվ ու յուրատիպ մոտեցում՝ հիմնվելով այն բանի անաչառ ու համակողմանի գնահատականի վրա, թե որքանով են գոյություն ունեցող ռազմակրթական համակարգերը, այդ թվում՝ այն կազմող հաստատությունները, դրանց կրթական ծրագրերն ու ուսուցման մեթոդները, համապատասխանում պատերազմավարման առկա բնույթին կամ ունակ են տեսագործնական մակարդակով լուծելու այն խնդիրները, որոնց պատերազմի թատերաբեմում բախվում են զինվորականները ռազմավարական, օպերատիվ և մարտավարական օղակներում[4]:

Այսպես. ԱՄՆ-ի Ազգային ռազմական քոլեջի ֆակուլտետներից մեկի նախկին դեկան Փոլա Թոռնհիլն իր «Պատերազմ ժայռերի վրա» հոդվածում փաստում է, որ նույնիսկ աշխարհում լավագույն ռազմական մասնագիտական կրթության համակարգի համբավը վայելող ամերիկյան գործող համակարգն իր նպատակին չի համապատասխանում: Հիմնվելով 2018 թվականի «Ազգային պաշտպանության ռազմավարության»[5] մեջ բերված քննադատությունների վրա, ըստ որի՝ ԱՄՆ-ում պաշտպանական կրթությունը որակ-

[2] Տես *Н. В. Липчиу, К. И. Липчиу.* Методология научного исследования. Учебное пособие. Краснодар 2013, с. 6 (https://ftp.kubsau.ru/upload/iblock/d7a/d7a92edf8a3247f2aafc68b6154e1384.pdf):

[3] Տես *Գ. Վ. Տավարածյան,* Պաշտպանական բարեփոխումներն ու Զինված ուժերի զարգացումը ժամանակակից պատերազմների բնույթի հաշվառմամբ: «ՀԲ», 2022, հմ. 3, նաև՝ *А. В. Сержантов, А. В. Смоловый, И. А. Терентьев.* Трансформация содержания войны: контуры военных конфликтов будущего. «ВМ», 2022, № 6; *J. Johnson.* Artificial Intelligence and Future Warfare: Implications for International Security. “Defense & Security Analysis”, 2019, Vol. 35, Issue 2:

[4] Այս հարցերի վերաբերյալ ավելի հանգամանորեն տես *Փիտեր Ֆուտ,* Նոր հանգամանքներ. ռազմական կրթության արմատական վերափոխում: «ՀԲ», 2010, հմ. 1:

[5] Տես “Summary of the 2018 National Defense Strategy of The United States of America. Sharpening the American Military’s Competitive Edge”, 2018 (https://dod.defense.gov/Portals/1/Documents/pubs/2018-National-Defense-Strategy-Summary.pdf):

վում է որպես «լճացած», նա պնդում է, թե գործող համակարգը չի կարող թողարկել այնպիսի շտաբային սպաների, որոնք այսօր անհրաժեշտ են արդյունավետ ռազմավարական և հրամանատարական որոշումներ կայացնելու համար[6]: Նրա քննադատության առանցքն այն է, որ պետական հավատարմագրումը, ըստ էության, բացասաբար է ազդել ռազմական ուսումնական հաստատությունների, դրանց կրթական ծրագրերի և ուսումնական պլանների արդյունավետության վրա՝ դրանք ուղղելով դեպի հավատարմագրման «ձևական» պահանջների ապահովմանը: Ըստ նրա՝ կրթական ծրագրերը մշակված են շատ ընդհանրական ձևով, չունեն կոնկրետություն, հիմնված են ոչ թե զինվորականների մասնագիտական գործունեությանն առավել անհրաժեշտ գիտելիքների, պրակտիկ կարողությունների և հմտությունների զարգացման, այլ պարզապես վերացարկված ռազմավարական հետազոտությունների վրա:

Զարգացած և պատերազմի բնույթի հաշվառմամբ ներդրված ռազմագիտակրթական համակարգ ունենալու անհրաժեշտությունը և պատերազմավարման մտավոր ապահովման ռազմավարական ներուժի զարգացումը ՆԱՏՕ-ի առաջատար պետություններում վերջին տարիներին այնքան է կարևորվել, որ պայքարի մղման հայտնի հինգ տիրույթներին՝ օդ, ցամաք, ծով, տիեզերք և կիբեռտարածություն, հետևողականորեն առաջարկվում է ավելացնել մի նոր՝ 6-րդ տիրույթ, այն է՝ իմացականը (կոգնիտիվ)[7]: Ըստ ՆԱՏՕ-ի մասնագետների՝ մեծ տերությունների տնտեսության ու արդի տեխնոլոգիաների, մասնավորապես՝ նանոտեխնոլոգիաների և արհեստական բանականության տեխնոլոգիաների աննախընթաց զարգացման ու սպառազինությունների մրցավազքի աճման պայմաններում միշտ էլ կարող են գտնվել առաջին հինգ տիրույթներում ՆԱՏՕ-ին արժանի հակազդեցություն ցուցաբերող հակառակորդներ: Հետևաբար պետք է մեծ դեր վերապահել պատերազմավարման իմացական կամ, իրենց այլ ձևակերպմամբ՝ մարդկային, տիրույթին՝ հակառակորդի նկատմամբ մշտական ռազմավարական առավելության ու նախաձեռնողականության ապահովման համար: Ըստ որում, իմացական տիրույթը նպաստում է մյուս հինգի ներդաշնակ զարգացմանը, սակայն հիմնական շեշտը, այնուամենայնիվ, դրվում է մարդկային կապիտալի մտավոր ներուժի գերակայության ապահովման վրա:

Ըստ էության, վերը նշվածի հաշվառմամբ, ներկայիս տեխնոլոգիական փոփոխությունների անդադար աճող տեմպերը, մեծ տերությունների մրցակցության ակտիվացումը և ռազմական բյուջեները նվազեցնելու քաղաքական

[6] Տես *Paula Thornhill.* To Produce Strategists, Focus on Staffing Senior Leaders, 20 July 2018 (https://warontherocks.com/2018/07/to-produce-strategists-focus-on-staffing-senior-leaders/):

[7] Տես “Cognitive Warfare: The Future of Cognitive Dominance”. First NATO scientific meeting on Cognitive Warfare (France), 21 June 2021. Scientific Editors B. Claverie, B. Prébot, N. Buchler and F. Du Cluzel (https://hal.archives-ouvertes.fr/hal-03635898/document):

մշտական ճնշումը նպաստել են այն գիտակցության հաստատմանը, թե հակառակորդի նկատմամբ մտավոր ու նորամուծական տեխնոլոգիական գերազանցությունը կարող են 21-րդ դարի կեսերին երաշխավորված կերպով ապահովել պետությունների զինված ուժերի մրցունակությունը:

ՀՀ-ՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ

Սույն հետազոտության թեմայի տեսակետից հույժ կարևոր է այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը 2022 թվականի նոյեմբերի 16-ին երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ ընդունեց «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» օրենք[8]: Օրենքի հավելվածում ներկայացվող այդ պետական ծրագրում դիտարկվել են կրթության բոլոր մակարդակները՝ նախադպրոցականից մինչև բարձրագույն մասնագիտականը: Ծրագիրը մշակվել է հետևյալ ռազմավարական ուղղություններով՝ համընդհանուր ներառականություն, ՀՀ ամբողջ տարածքում սովորողակենտրոն կրթական միջավայրի ստեղծում, կրթության արդյունավետության մեծացում: Համընդհանուր կրթական տարածությունում Հայաստանի դիրքը բարելավելու համար շեշտադրված կարևոր խնդիրներից են կրթական ծառայությունների և արտադրանքի միջազգայնացումն ու արտահանումը:

2020 թվականի արցախյան պատերազմից և արտակարգ իրավիճակներից քաղված դասերի հաշվառմամբ՝ փաստաթղթում ներկայացված է նաև ռազմական կրթությունը[*]: Հարկ է շեշտել, որ ՀՀ-ում ռազմական կրթության որոշ հիմնախնդիրների, որպես պետության պաշտպանունակության հիմնասյան՝ ռազմական ընտրանու ձևավորման, սպայական մասնագիտական կրթական հաստատություն ունենալու ռազմավարական խնդիրներ է առաջադրել նաև ՀՀ Կառավարության ղեկավարը[9]:

Քանի որ Օրենքն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում մշակվելու և ընդունվելու են ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվականը զարգացման

[8] Տես «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ օրենքը (http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=13532&Reading=1):

[*] Սույն հոդվածի հեղինակը 2022 թ. հոկտեմբերի 21-ին մասնակցել է Աժ գիտության, կրթության, մշակույթի, Սփյուռքի, երիտասարդության և սպորտի հարցերով մշտական հանձնաժողովի նախաձեռնած հանրային լսմանը և ռազմական կրթությանն առնչվող հարցերի վերաբերյալ ներկայացրել է իր մասնագիտական դիտարկումները, որոնց հիմքն էին կազմում կրթության ոլորտի ռազմավարական զարգացման ընդհանուր խնդիրների և առաջնահերթությունների վերաբերյալ «Արդյունավետ կրթության ապահովման հիմնախնդիրը՝ որպես պետության պլանաչափ զարգացման հիմնախնդիր»: «ՀԲ», 2021, հմ. 3 հոդվածում շարադրված հայացքները և մոտեցումները:

[9] Տես «ՀՀ Կառավարության 2022 թվականի հոկտեմբերի 27-ի հերթական նիստը», 10-14-րդ րոպեներ: Հայաստանի կառավարության պաշտոնական “Youtube” ալիք (https://www.youtube.com/watch?v=wbMudpwpbiQ):

պետական ծրագրի իրագործման գործողությունների և միջոցառումների պլանն ու ժամանակացույցը, մեր կարծիքով, նպատակահարմար է նաև այնտեղ նախատեսել ՀՀ-ում ռազմական կրթության և գիտության նոր հայեցակարգի մշակում ու ներդրում:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ռազմական կրթության և գիտության նոր հայեցակարգը պետք է խարսխվի կրթության փիլիսոփայության որևէ ուղղության հիմնադրույթների վրա[*]: Կրթության փիլիսոփայության մի քանի մոդելների դիտարկումը հնարավորություն կտա մշակելու ռազմական կրթության (նաև՝ վերապատրաստման) փիլիսոփայության մեր ազգային մոդելը, որը կնախանշի ռազմական գիտության, կրթության համակարգերի բոլոր բաղադրիչների փոխազդեցությունը, որպեսզի աշխատանքի արդյունավետությունն ապահովվի ավելի խորքային գործոններով. այդպիսով կստեղծվի գիտակցում, որ սահմանված մտահղացումը (նպատակը) իրականացվում է ամբողջությամբ: Տվյալ մոդելը ուղենիշային կլինի և հստակ կերպով կսահմանի՝

- ոչ միայն ռազմական գիտության և կրթության (նաև՝ վերապատրաստման) ակնկալվող արդյունքները, այլև դրանց հասնելու ուղիները,
- կրթական ծրագրի և ուսումնական պլանի մշակման սկզբունքներն ու պահանջները,
- ուսումնառողի դերը և պարտականությունները,
- դասավանդողի դերը և պարտականությունները,
- ուսումնական գործընթացի կազմակերպման մեթոդաբանությունը, դասավանդման և ուսումնառության մեթոդները:

Այժմ դիտարկենք կրթության փիլիսոփայության մի քանի հայեցակարգեր, որոնք աշխարհում առավել ընդունված և կիրառվող են.

Ազատականություն (լիբերալիզմ). միջգիտակարգային մոտեցում է, որի համաձայն կրթությունը պետք է մարդկանց տրամադրի ընդգրկուն գիտելիքներ և փոխանցելի հմտություններ, ինչպես նաև արժեքային, էթիկական և քաղաքացիական ներգրավվածության ավելի մեծ զգացում[10]: Այս փիլիսոփայությունը արտացոլված է, օրինակ, ԱՄՆ-ի Կապուկայի նորակոչիկների, Մեծ Բրիտանիայի Թագավորական ռազմական քոլեջի ունկնդիրների պատրաստման ծրագրերում: Այս դասընթացներում ձգտում են ուսուցանվողնե-

[*] Կրթության փիլիսոփայություն ասելով հասկանում են կիրառական փիլիսոփայության այն բաժինը, որը հետազոտում է կրթության էությունը, դրա նպատակն ու պրոբլեմները և ներառում է կրթական տեսությունների, դրանցում պարունակվող նախադրյալների, ինչպես նաև «կողմ» ու «դեմ» փաստարկների ուսումնասիրությունը: Դա միջգիտաճյուղային բնագավառ է, որը գիտելիք է քաղում ինչպես փիլիսոփայության տարբեր բաժիններից, այնպես էլ դրանում չներկայացվող գիտություններից, ինչպիսիք են քաղաքական փիլիսոփայությունը, էթիկան, հոգեբանությունը, սոցիոլոգիան (տես *В. Михайлов.* Философия образования: новые ценности знаний, декабрь 2022 (https://ru.edustanford.com/5795956-philosophy-of-education)):

[10] Տես *Winston C. Thompson.* Liberalism in Education. “Oxford Research Encyclopedia of Education”, 2017, P. 20 (https://www.researchgate.net/publication/319007951_Liberalism_in_ Education):

րին փոխանցելու արժեքներ, ավանդույթներ, համայնքային միջավայրում կիրառելի գիտելիքներ և հմտություններ: Կրթական ազատականության փիլիսոփայությունը հարիր է բանակին, քանի որ դրանում առկա են մարդկանց փոխկախվածության, հմտությունների փոխանցելիության և տարբեր ոլորտների միջև գիտելիքների փոխկապվածության սկզբունքները:

Մարդասիրությունը (հումանիզմ) այն կրթական փիլիսոփայությունն է, որը սովորողին ընկալում է որպես ի սկզբանե «լավ» և ուսումնառող մարդուն դիտում է որպես ամբողջական անհատականության, որը կարող է պատասխանատվություն կրել իր ուսման համար: Այս մոտեցումը ներառում է սոցիալական հմտությունների, զգացմունքների, մտավոր ներուժի, գեղարվեստական հմտությունների, գործնական հմտությունների և այլ կարողությունների ձևավորում: Ինքնագնահատականը, նպատակները և լիարժեք ինքնավարությունը այս տեսությամբ ուսուցման հիմնական տարրերն են: Այն ունի հինգ սկզբունք.

- ուսուցումը պետք է լինի ինքնուրույն,
- կրթական հաստատությունը պետք է թողարկի շրջանավարտներ, որոնք ցանկանում են և գիտեն՝ ինչպես սովորել,
- գնահատման միակ իմաստավորված ձևը ինքնագնահատումն է,
- ուսուցման գործընթացում զգացմունքները կարևոր են նույնքան, որքան գիտելիքը,
- ուսումնառողներն առավել լավ յուրացնում են անվտանգ, ոչ սպառնալի միջավայրում[11]:

Էսենցիալիզմը մի փիլիսոփայություն է, որը կողմնորոշված է դեպի մտքի կրթում, վարժեցում հիմնարար ակադեմիական առարկաներով, որոնք ուսումնառողները կարող են այնուհետև կիրառել նոր համատեքստում: Դասավանդողներն ուսուցումը կազմակերպում են մի շարք աստիճանաբար ավելի բարդացող թեմաների մատուցմամբ՝ ուսումնառողներին հաջորդ մակարդակ կամ կուրս տեղափոխելու համար: Հիմնական առարկաները կենտրոնանում են նյութական աշխարհի պատմական համատեքստի և մշակույթի վրա, իսկ ուսումնառողներն այդ նյութերը անցնում են հաջորդական փոխլրացման սկզբունքով: Նպատակն է ուսումնառողների մեջ սերմանել հիմնարար ակադեմիական գիտելիքներ, մշակույթ և ավանդական մոտեցումների օգնությամբ զարգացնել բնավորության որոշակի գծեր՝ քննադատականության, մտքի անընդհատ վարժանքի և ընդհանուր վարքի ձևավորմամբ:

Վարքագծությունը (բիհեյվիորիզմ) մի մոտեցում է, որը հիմնվում է այն պնդման վրա, թե ուսուցումը կարելի է կազմակերպել խրախուսման-պատժման համակարգի կիրառմամբ, ինչի շնորհիվ կարելի է վերահսկել ուսուցման ընթացքը[12]: Դրա գաղափարն այն է, որ ուսումնառողին կարելի է

[11] Տես “What is humanistic learning theory in education? “Western Governance University”, 21 July 2020 (https://www.wgu.edu/blog/what-humanistic-learning-theory-education2007.html#close):

[12] Տես *M. Standridge.* Behaviorism. Department of Educational Psychology and Instructional Technology, University of Georgia (https://learn-u.com/lesson/behaviorism/):

«սովորեցնել» վարքի փոփոխությամբ, որոշակի պատասխաններ ստանալ որոշակի խրախուսմամբ: Ըստ այս կրթական փիլիսոփայության՝ ուսումնառողները կարող են սովորել ցանկացած բան, քանի դեռ նրանք ստանում են ճիշտ և արդարացի պարգևներ և/կամ պատիժներ: Իրականում սրանք «մաքուր թերթիկներ» են: Այս տեսությունն իր վատագույն դրսևորման դեպքում, թվում է, թե նսեմացնում է մարդուն՝ սահմանափակելով նրա գործողությունների ազատությունը, ստեղծարարությունը և փոխադարձ կախվածությունը: Տվյալ տեսությունը զուրկ է ճանաչողական բարդության ընկալումից և այն բանի գիտակցումից, որ ուսուցումը սոցիալական գործընթաց է: Այն նաև չի խրախուսում քննադատական մտածողությունը: Ուստի կասկածից վեր է թվում, որ որոշ կարևոր հմտություններ իրականում ձեռք են բերվում հասակակիցների կամ դասավանդողի (ծնողների) վարքագծի ընդօրինակման միջոցով՝ պարգևատրման կամ պատժի խոստումով: Իսկապես, այս մոտեցումը կարելի է տեսնել մի շարք ռազմակրթական հաստատություններում: Հետևաբար այս տեսությունը կարելի է համարել բանակային իրողություններին համահունչ:

Սոցիալ-վերակառուցողական, կամ արմատական, մոդելը հիմնված է այն տեսության վրա, որ հասարակությունը կարելի է վերակառուցել կրթության նկատմամբ լիակատար վերահսկողության դեպքում: Այս տեսության համաձայն ուսումնառողներն իրենք են ընտրում իրենց ուսուցման նպատակներն ու առաջնահերթությունները, իսկ հետո պլանավորում են փոփոխությունների կատարում: Սոցիալական վերակառուցողները պնդում են, թե բոլոր առաջնորդները դպրոցների «արդյունք» են, ուստի դպրոցները պետք է ապահովեն այնպիսի կրթական ծրագիր, որը խթանի նրանց զարգացումը որպես հասարակական փոփոխությունների գործակալի[13]: Իր ծայրահեղության մեջ այս տեսությունը, կարծես, չի համապատասխանում ուսուցման համակարգին, որը պահպանում է միատեսակ արժեքների և հիմնական հմտությունների զարգացումը՝ օրվա կառավարության ղեկավարության թելադրմամբ:

Հնարավո՞ր է արդյոք վերը բերված նյութերի հիման վրա ընտրել բանակի համար կիրառելի և արդյունավետ կրթական փիլիսոփայություն՝ ռազմական կրթության փիլիսոփայության ձևավորման համար: Մեր կարծիքով, եթե հաշվի առնենք բանակի առանձնահատկությունները, նրա գործունեության ուղղվածությունը, հիմնական նպատակներն ու խնդիրները, ապա ներկայացված փիլիսոփայական մոտեցումներից հիմնականում կիրառելի պետք է համարել ազատականության, մարդասիրության և էսենցիալիզմի փիլիսոփայական դրույթները, մասամբ կարելի է օգտվել նաև վարքագծային մոտեցումից, բոլորովին կիրառելի չէ սոցիալ-վերակառուցողական, կամ արմատական փիլիսոփայական մոտեցումը:

[13] Տես *Sue McGregor.* Education for Sustainable Consumption: A Social Reconstructivism Model. “Canadian Journal of Education”, 2019, Vol. 42, N 3 (https://files.eric.ed.gov/fulltext/EJ1231583.pdf):

ՊԱՏԵՐԱԶՄԻ ԲՆՈՒՅԹԻ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ՝ ՌԱԶՄԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄԱՐՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՁՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ժամանակակից և ապագա պատերազմների բնույթի պարզորոշմամբ ու կանխատեսմամբ հնարավոր է գնահատել ռազմական կրթության ու մարտական պատրաստման վրա տվյալ բնույթի ազդեցության պահանջվող չափը և ըստ այդմ նախանշել ԶՈՒ-ի պատրաստման համակարգը կատարելագործելու ուղիները[14]: Երկու համակարգերի համար էլ կարևոր է, նախ, որոշել այն արդյունքները, որոնց հասնելուն պետք է կողմնորոշված լինեն այդ համակարգերի գործունեության նպատակը և հիմնական բովանդակությունը: Մեթոդաբանության տեսանկյունից կարևոր է առաջին հերթին հաշվի առնել ակնկալվող արդյունքների ձևավորման կանխադրույթը, ապա դիտարկել դրա հիման վրա տվյալ արդյունքներին հասնելու համար նշված համակարգերի բովանդակային կատարելագործման հնարավորությունները: Օրինակ՝ պատերազմի բնույթի վերաբերյալ հետազոտությունների հիման վրա համապատասխան մարմինը եզրակացրել է, որ քարշակվող փողային հրետանին ըստ որոշակի ցուցիչների կորցրել է իր արդիականությունը, ներկայացնում է համապատասխան ցուցում, որպեսզի կրթական ծրագրեր մշակելիս այս հանգամանքը հաշվի առնվի: Կրթական գործունեություն վարող հաստատությունը կրթական ծրագրերի ուսումնական պլան մշակելիս պետք է կատարի ժամային վերաբաշխում՝ դասաժամերը տրամադրելով այլ առարկաների կամ հրետանային նոր զինատեսակի ուսուցմանը:

Պատերազմավարության ներկայիս վիճակի և զարգացման միտումների վերլուծությունը հնարավորություն է տալիս եզրակացնելու, որ ապակենտրոնացված կառավարման գործում առանձնակի նշանակություն են ստանում զինծառայողների մեջ առաջնորդին բնորոշ հետևյալ «փափուկ»[15] անձնային հատկությունների և մասնագիտական որակների ձևավորումը և զարգացումը.

- անհամաչափ, ագրեսիվ ու հանդուգն մտածողություն,
- իր ուժերի նկատմամբ վստահություն,
- ստրեսակայունություն,
- նախաձեռնողականություն,
- համարձակություն, խիզախություն,
- ինքնուրույն որոշումներ կայացնելու և դրա համար պատասխանատվություն ստանձնելու կարողություն,
- թիմ ստեղծելու ունակություն,
- վերադասի մտահղացումն ընկալելու և դրան համապատասխան գործելու ունակություն:

[14] Այս մասին ավելի հանգամանորեն տես *Գ. Վ. Տավարածյան,* Նշ. աշխ.:

[15] Տես *А. А. Ивашкова.* К вопросу об изучении формирования soft skills в зарубежных исследованиях. «Вестник НВГУ». 2021, № 1(53):

Հետևաբար, մեր կարծիքով, մարտական պատրաստման համակարգը անհրաժեշտ է նպատակաուղղել հետևյալ խնդիրների լուծմանը.

- անհամաչափ գործողությունների և մերձամարտի վարման կարողությունների զարգացում,
- ֆիզիկական դիմացկունության և ճարպկության զարգացում,
- բարձր բարոյահոգեբանական որակների ձևավորում՝ հակառակորդի տեղեկատվական և հոգեբանական ներգործությանը հաջողությամբ դիմակայելու համար,
- ուսուցման ծրագրերում, առօրյա գործունեության մեջ իրական մարտական իրավիճակների տարրերի ներառում, բարդ կլիմայական և ֆիզիկաաշխարհագրական պայմաններում գոյատևման կարողությունների ձևավորում,
- բարդ իրավիճակներում արագ կողմնորոշվելու և վերադասի մտահղացման շրջանակում ինքնուրույն որոշումներ կայացնելու ունակությունների զարգացում,
- մերձակա կրակ վարելու ունակությունների կատարելագործում,
- մարտական ուսուցման կազմակերպում փոխադարձ փոխարինելիության սկզբունքով՝ ապակենտրոնացվածության ժամանակ ներդաշնակորեն և փոխհամաձայնեցված կերպով ճիշտ գործողությունների կատարման շեշտադրմամբ:

Վտանգի զգացողությունը և, համապատասխանաբար, բարձր մակարդակի զգոնությունը պետք է մշտապես ուղեկցեն զինծառայողի ամենօրյա գործունեությունը: Այդ նպատակով կարելի է ամենօրյա ծառայության մեջ ներառել անհրաժեշտ պարապմունքներ, վարժություններ ու վարժանքներ, ինչպես օրինակ՝ ցատկ բարձրությունից և այլն:

Զինծառայողների մարտական պատրաստության ատեստավորման նորմատիվներում նպատակահարմար է ներառել նաև «ինքնուրույնության» չափանիշը: Այսինքն՝ պետք է ստուգվի, թե զինծառայողը ունակ է, արդյոք, ինքնուրույնաբար կայացնելու որոշումներ:

Ռազմական կրթության համակարգերի կառուցման առաջավոր փորձի մեթոդաբանության ուսումնասիրությունները վկայում են, որ ռազմական կրթական ծրագրերի մշակման և իրականացման գործում նկատելի են հետևյալ օրինաչափությունները, որոնք կարող են հաջողությամբ ներդրվել նաև ՀՀ-ում.

1. կրթական ծրագրերը մշակվում և իրագործվում են պատերազմավարման միասնական մտահղացման շրջանակներում ըստ ռազմավարական, օպերատիվ ու մարտավարական մակարդակների՝ միմյանցից բխեցման և սիներգիայի սկզբունքով,

2. բոլոր մակարդակների մասնագիտական կրթական ծրագրերի բովանդակության հիմքում դրված է քննադատական և տվյալ մակարդակին համապատասխանող մտածողության ձևավորումը (մարտավարական մտածողություն, օպերատիվ ռազմական մտածողություն, ռազմավարական մտածողություն),

3. Զինված ուժերի Գերագույն (Գլխավոր) շտաբն է որպես պատվիրատու ձևավորում սպաներին ներկայացվող չափանիշները և պահանջները, որոնք կրթական ծրագրերում արտացոլվում են արդյունքների ձևակերպմամբ,

4. դասավանդման և ուսումնառության մեջ արդյունավետորեն կիրառվում են ակտիվ ուսուցման մեթոդները, ընդսմին հատկապես օպերատիվ և ռազմավարական մակարդակներում շեշտը դրված է նմանարկումային, ռազմավարական խաղերի, մոդելավորման, սցենարային վերլուծության մեթոդներով ուսուցման կազմակերպման վրա:

5. լուրջ ուշադրություն է դարձվում հետազոտահեն ուսուցման մեթոդաբանության վրա, երբ հետազոտությունների արդյունքները տեղափոխվում են կրթական գործընթաց:

Հաշվի առնելով վերոշարադրյալը՝ առաջարկում ենք մշակել ՀՀ ռազմական կրթության և գիտության 2022–2026 թթ. զարգացման հայեցակարգ, որում հստակ կերպով կնախանշվեն ոլորտի ռազմավարական զարգացման գերակա ուղղությունները և յուրաքանչյուր ուղղության համար հստակեցված քաղաքականություն, մասնավորապես՝

- տեսլականը և հիմնական առաջնահերթությունները,
- ռազմագիտակրթական քաղաքականության հիմնական ուղղություններն ու սկզբունքները,
- նպատակներն ու խնդիրները,
- կառավարման համակարգի կազմակերպվածքը և գործառույթները,
- ռազմաուսումնական հաստատությունների գործառույթները և գործունեության հիմնական բովանդակությունը,
- ռազմակրթական ծրագրերի մշակման, իրացման և վերահսկողության մեխանիզմները,
- որակի կառավարման և որակի ապահովման քաղաքականության ուղենիշները:

ԱՄՓՈՓՈՒՄ

ՀՀ-ում մեկնարկած կրթական բարեփոխումների համատեքստում կարևոր ուղղություններից մեկը ռազմական կրթությունն է, որի արդյունավետ և որակյալ գիտակրթական ծառայությունները ուղիղ իմաստով ազդում են ԶՈՒ-ի հզորության մեծացման վրա: Ռազմական կրթության բովանդակությունը և ռազմակրթական ծրագրերը մշակելու ժամանակ մշտապես պետք է հաշվի առնել պատերազմի փոփոխվող բնույթը: Ընդ որում, այդ գործընթացը միակողմանի չէ. կրթության բովանդակությունը (նպատակներ, խնդիրներ, արդյունքներ, ուսումնական պլաններ) իր հերթին որոշակիորեն պայմանավորում է ռազմական գործողությունների ձևերի և եղանակների զարգացումը, ասել է թե՝ պատերազմավարման մակարդակներում գործող հրամանատարների մտածողությամբ են կանխորոշվում գործողությունների վարման արդյունավետությունը և հաջողությունը: Արդյունավետ ռազմակրթական մոդելի մշակումը, ըստ էության, հիմնախնդիր է նաև առաջատար պետութ-

յունների համար: ՀՀ-ում նոր պահանջների և չափանիշների հիման վրա կառուցվող ռազմագիտակրթական համակարգը պետք է խարսխվի գիտականորեն հիմնավորված դրույթների վրա՝ կրթության փիլիսոփայության ժամանակակից մոդելների հաշվառմամբ՝ ըստ մեր ազգային և ԶՈՒ-ի առանձնահատկությունների:

ՀՀ ռազմական կրթության և գիտության նոր հայեցակարգի մշակումն ու կիրառումը Հայաստանի Հանրապետության համար ունի կենսական նշանակություն, քանի որ հստակ ու հիմնավոր կերպով կուրվագծվեն ոլորտի զարգացման վերաբերյալ հիմնական ռազմավարական ուղենիշները, կձևավորվի ոլորտի ռազմավարական կառավարման համակարգը՝ ՀՀ ՊՆ, ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ և ՀՀ ՊՆ ՌՈՒՀ-եր գործունեության տիրույթները: Այստեղ առանձնահատուկ դեր պետք է վերապահել ՀՀ ՊՆ համապատասխան ստորաբաժանմանը, որը կլինի ռազմական գիտության և կրթության հայեցակարգի հիմնական դրույթների իրագործողը, ոլորտի քաղաքականության մշակման, վերահսկման և ռազմագիտակրթական համակարգի որակի կառավարման հիմնական պատասխանատուն՝ համագործակցելով ՀՀ ԶՈՒ-ի ԳՇ և կրթության ոլորտի պատասխանատու այլ հաստատությունների հետ: Ռազմագիտակրթական համակարգի կառավարման գործում կարևոր դեր և նշանակություն է ձեռք բերելու ՀՀ Պաշտպանության նախարարի ղեկավարությամբ ձևավորվող Ռազմական կրթության և գիտության կառավարման խորհուրդը: Այն պետք է ստանձնի ոլորտի ռազմավարական զարգացման, ՌՈՒՀ-երի գործունեության հաշվետվողականության և թափանցիկության ապահովման հիմնական պատասխանատվությունը:

Այսպիսով՝ ՀՀ-ում ռազմական կրթության և գիտության նոր հայեցակարգի մշակմամբ և ներդրմամբ հստակ կերպով կսահմանվեն ոլորտի ռազմավարական զարգացման առաջնահերթությունները, ինչն էլ կապահովի ՀՀ-ում ռազմական գիտակրթական միասնական համակարգի պլանաչափ զարգացումը: Իսկ դա, ինչպես ցույց է տալիս առաջավոր պետությունների փորձը, պետության անհրաժեշտ մակարդակով ռազմական հզորության ու պաշտպանունակության ապահովման գլխավոր պայմանն է:

НЕКОТОРЫЕ МЕТОДОЛОГИЧЕСКИЕ ПОДХОДЫ К РАЗРАБОТКЕ НОВОЙ КОНЦЕПЦИИ ВОЕННОГО ОБРАЗОВАНИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ С УЧЕТОМ МЕНЯЮЩЕГОСЯ ХАРАКТЕРА ВОЙН

В. В. МЕЛКОНЯН, лейтенант, начальник Научно-учебного отделения НИУО МО РА

РЕЗЮМЕ

Одним из важнейших направлений осуществяемых в РА образовательных реформ является военное образование, которое влияет на повышение боевого потенциала ВС. При разработке содержания

военного образования и военно-образовательных программ представляется необходимым постоянный учет меняющегося характера войн и вооруженных конфликтов. При этом содержание образования (цели, задачи, результаты, учебные планы) в свою очередь в определенной степени обусловливает развитие форм и способов ведения военных действий, поскольку мышление командующих стратегического уровня предопределяет эффективность и успешность ведения боевых действий.

С учетом опыта ведущих государств можно утверждать, что военно-образовательная система РА должна основываться на новых требованиях и стандартах, базирующихся на научно обоснованных положениях и современных моделях философии образования, а также быть созвучной нашим национальным особенностям и специфике ВС.

Имеют первоочередное значение разработка и имплементация новой концепции военного образования и науки, в которой были бы четко очерчены научно обоснованные стратегические ориентиры развития данной сферы и система стратегического управления ею, в частности разграничены функции МО и ГШ МО РА и ВВУЗ-ов. При этом следует особую роль отвести соответствующему подразделению МО РА, которое станет реализатором основных положений концепции, главным ответственным за разработку политики в данной сфере, за контроль и управление качеством образования в сотрудничестве с ГШ МО РА и другими органами управления, несущими ответственность за сферу военного образования. В деле управления военно-образовательной системой особая роль должна быть отведена Совету по управлению военным образованием и наукой, действующему под непосредственным руководством Министра обороны. Совет должен взять на себя основную ответственность за обеспечение стратегического развития сферы, отчетности и прозрачности деятельности ВВУЗ-ов.

Таким образом, путем разработки и внедрения новой концепции военного образования и науки в РА будут четко определены приоритеты стратегического развития сферы, что в свою очередь обеспечит планомерное развитие единой военной научно-образовательной системы в РА. А это, как показывает опыт ведущих государств, является условием обеспечения должного уровня военной мощи и обороноспособности государства.

SOME METHODOLOGICAL APPROACHES TO DEVELOPING THE NEW CONCEPT OF MILITARY EDUCATION IN THE REPUBLIC OF ARMENIA WITH A VIEW ON THE CHANGING NATURE OF WAR

V. V. MELKONYAN, Lieutenant, Head, Academic-Educational Center, NDRU, MOD, RA

SUMMARY

One of the main directions in the RA ongoing educational reforms is the military education, which is affecting the improvement of the Armed Forces combat potential. When developing the content of the military education and military-educational programs, constant reference to the changing character of wars and armed conflicts seems necessary. That said the content of education (goals, tasks, results, curriculum) in its turn conditions to certain degree the development of forms and methods of conducting military actions, as the thinking of strategic-level commanders determines the effectiveness and success of the military actions.

With a view on the experience of the leading states one can state the RA's military-educational system must rest on new requirements and standards, which reckon upon science-based provisions and modern models of the philosophy of education, as well as be consonant with our national peculiarities and specification of the Armed Forces.

Of prime consideration are the development and implementation of the new concept of military education and science, in which the science-based strategic guidelines of developing this sphere and the system of its strategic management, i.e., in particular the functions of the RA's MOD and General Staff, MOD, RA, and educational institutions, will be clearly outlined. Here a significant role should be given to the MOD RA unit, which will carry out the main provisions of the concept, have the primary responsibility for the said sphere policy development, the control and management of the military-educational system level in cooperation with the General Staff, MOD, RA, and other administrative bodies, responsible for the military-education sphere. In managing the military-educational system, a significant role should be given to the Council for Management of Military Education and Science to function directly under the supervision of the Defense Minister. The Council will have to take up the main responsibility for ensuring the strategic development of the sphere, accountability and transparency of the military-educational institutions' activity.

Thus, by developing and implementing in the RA the new concept of military education and science, the priorities of strategic development of the sphere will be clearly defined, which will in its turn ensure the orderly development of the common military-educational system in the RA. As the experience of the leading states shows, this is the condition for ensuring the proper level of the state's military power and defense capability.

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՀՀ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ*

Տ. Ս. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ, ՀՀ ՊՆ պաշտպանական քաղաքականության և միջազգային համագործակցության վարչության պաշտպանական քաղաքականության պլանավորման բաժնի պետի տեղակալ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրթությունը համակարգված գիտելիքների, ունակությունների և հմտությունների յուրացման ընթացքն ու արդյունքն է, կյանքին և աշխատանքի պատրաստելու անհրաժեշտ պայմանը: Կրթություն ստանալու հիմնական ձևը ուսուցումն է ինչպես տարբեր ուսումնական հաստատություններում, այնպես էլ ինքնակրթության եղանակով[1]:

Կրթությունը լինում է ընդհանուր և մասնագիտական, ընդսմին առաջինը մյուսի անհրաժեշտ հիմքն է: Ուստի հնարավոր չէ կատարելագործել մասնագիտական կրթությունն առանց ընդհանուր կրթության պատշաճ մակարդակի ապահովման:

Ցանկացած պետություն իր զարգացումը պլանավորելիս չի կարող անտեսել իր պահանջմունքներին կրթական համակարգի համապատասխանեցման հարցը: Այսպես. ձեռնամուխ լինելով իր զինված ուժերի ստեղծմանն ու արդիականացմանը՝ նա պետք է հաշվի առնի և նախապես ընտրի ԶՈՒ-ի այն կերպարանքը, որն իր կարծիքով կերաշխավորի իր ռազմական անվտանգությունը:

Ընդ որում, նշված գործընթացում առանցքային դեր ունեն ռազմական կրթության և ռազմական գիտության զարգացումը, որից մեծապես կախված են պետության պաշտպանունակության ու ռազմական հզորության պատշաճ մակարդակի ապահովումը, առաջին հերթին՝ անձնակազմի մասնագիտական գիտելիքների և հմտությունների ձևավորումն ու շարունակական կատարելագործումը[2]:

---

* Հոդվածը նախնական տեսքով ներկայացվել է 29.08.2022: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 29.12.2022:

[1] Տես «Կրթություն»: «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 5: Ե., 1979, էջ 687:

[2] Տես *David T. Culkin.* Military Education as a Dimension of Security in the Western Hemisphere. “Journal of Military Learning”, April 2019 (https://www.armyupress.army.mil/Portals/7/journal-of-military-learning/Archives/April-2019/Culkin-Military-Ed.pdf); *Р. Ф. Жаксылыков.* Роль и место военного образования и военной науки в строительстве Вооруженных сил государства. «Сибирский педагогический журнал», 2012, № 4 (https://

Ամբողջ աշխարհում կրթությունը գտնվում է ուշադրության կենտրոնում՝ որպես մի երևույթ, որով պայմանավորվում են մարդկության զարգացումն ու ապագա հաջողությունները: Թե որքանով են այդ գործին նախանձախնդրաբար վերաբերվում առաջատար պետություններում, վկայում է հետևյալ կարծիքը, որը հնչում է ԱՄՆ-ում. «Արևմտյան կիսագնդում թերագնահատված է, թեև անվտանգային պրոբլեմների հույժ կարևոր կողմն է, մեծահասակների կրթությունը՝ որպես զարգացման մի երևույթ, որը խորապես արմատավորված է հասարակության մեջ ու մշակույթում»[3]:

Տվյալ տեսակետը հաստատում է ամբողջ կյանքի ընթացքում մշտական ուսուցման անհրաժեշտությունը:

Ըստ այդմ ժամանակակից սպայի կերպարի ձևավորման անհրաժեշտության գիտակցմամբ ՀՀ ռազմաքաղաքական ղեկավարությունը պաշտպանական ոլորտի բարեփոխումների շրջանակներում վերջին տասը տարիներին իրականացվող միջոցառումները նպատակաուղղել է սպայական կադրերի պատրաստմանը, վերապատրաստմանը և որակավորման բարձրացմանը, կրթության շարունակականության ապահովմանը և ռազմական կրթության ոլորտում եռաստիճան կրթական համակարգի ներդրմանը[4]:

Զինված ուժերի մարտունակության ամրապնդման նպատակով Հայաստանի Հանրապետությունն ընտրել է պաշտպանության բնագավառում ակտիվ միջազգային համագործակցության քաղաքականությունը ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափով: Սպայական կադրերի և քաղաքացիական ծառայողների պատրաստումն ու վերապատրաստումը կատարվում են թե՛ ՀԱՊԿ-ի ու ՆԱՏՕ-ի անդամ պետությունների տարաբնույթ ռազմաուսումնական հաստատություններում ու վարժական կենտրոններում, թե՛ նրանց հետ միջազգային համագործակցությամբ կատարելագործվող հայրենական ռազմակրթական համակարգում:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՌԱԶՄԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Զինված ուժերի շինարարությունը, լինելով պետության ռազմական շինարարության կարևոր բաղկացուցիչ մաս, փոխկապված ու փոխպայմանավորված տնտեսական, սոցիալ-քաղաքական, գաղափարախոսական, ռազմատեխնիկական և այլ բնույթի միջոցառումների համակարգ է, որը նպատակաուղղված է ազգային շահերի երաշխավորված պաշտպանության համար զինված ուժերի ստեղծմանը, պատրաստմանն ու զարգացմանը[5]: Դրա

cyberleninka.ru/article/n/rol-i-mesto-voennogo-obrazovaniya-i-voennoy-nauki-v-stroitelstve-vooruzhennyh-sil-gosudarstva/viewer):

[3] Տես *Դևիդ Թ. Քալկին,* Նշ. աշխ.:

[4] Այս մասին հանգամանորեն տես «Կադրային քաղաքականության և ռազմական կրթության կատարելագործում»: «ՀԲ», 2012, հմ. 3, էջ 9–69, *Գ. Վ. Տավարածյան,* Փոփոխվող անվտանգային միջավայրի պայմաններում ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի դերն ու խնդիրները: «ՀԲ», 2019, հմ. 1:

[5] Տես «Строительство Вооруженных сил». «Военный энциклопедический словарь». М., 2002, с. 1454:

հիմնական բաղադրիչներից են կադրերի պատրաստումը, մարտական և օպերատիվ պատրաստման կազմակերպումը:

Ռազմական կրթության ոլորտում կադրերի պատրաստումը կարող է իրագործվել ինչպես տվյալ պետության, այնպես էլ օտարերկրյա ռազմական ուսումնական հաստատություններում: Միջազգային համագործակցության շրջանակներում օտարերկրյա ռազմաուսումնական հաստատություններում կրթությունը կազմակերպելու դեպքում պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ ցանկացած պետություն ռազմական կրթության իր համակարգը հարմարեցնում է իր պահանջմունքներին, այսինքն՝ իր զինված ուժերի առջև դրված խնդիրների կատարմանը և իր ուսումնական ծրագրերով, այդ թվում՝ ըստ իր մարտավարության և օպերատիվ արվեստի, որոնք շատ դեպքերում չեն համապատասխանում ՀՀ ռազմական արվեստին, ԶՈՒ-ի կազմակերպվածքին և լուծվելիք խնդիրներին:

Ըստ այդմ էլ ՀՀ պաշտպանական գերատեսչությունը կառուցում է միջազգային ռազմական համագործակցության շրջանակներում իրագործվող ռազմական կրթության ուղղությամբ իր քաղաքականությունը:

2020 թ. Արցախյան պատերազմից հետո վերանայվել է ՀՀ Զինված ուժերի զարգացման պլանը: Պատերազմից քաղված դասերի վերլուծության հիման վրա Կառավարության 2021–2026 թթ. ծրագրում հատուկ ուշադրության է արժանացել պրոֆեսիոնալ բանակին անցման, համապատասխան սպառազինությամբ ու ռազմական տեխնիկայով վերազինման, ռազմական գործողությունների պլանավորման ու վարման ձևերի վերանայման և այլ հարցերի վերաիմաստավորման անհրաժեշտությունը: Ծրագրում, ի թիվս այլ բնագավառների, կարևոր տեղ է հատկացվել ռազմական կրթության և գիտության զարգացմանը՝ որպես պաշտպանական ոլորտի բարեփոխումների առանցքային բաղադրիչի[6]: Պետք է փաստել, որ առաջատար պետություններն իրենց զինված ուժերի պատրաստման ու զարգացման գործում առանցքային դեր են վերապահում ռազմական գիտությանն ու կրթությանը, վարժանքներին[7]:

Հայտնի է, որ ներկայումս մարդկությունը կուտակել է մի այնպիսի ծավալով գիտելիք, այդ թվում և ռազմական բնագավառում, որի յուրացումը չի կարող կատարվել տարերայնորեն՝ որևէ կազմակերպված համակարգից դուրս: Եվ հենց պետությունն է ստանձնում նման համակարգի ստեղծման գործառույթը, ձևավորում է կրթության համակարգի համար քաղաքականությունը, սահմանում է այդ համակարգի տարրերի կառուցվածքն ու փոխադարձ կապը, զարգացման հիմնական ուղղությունները: Ի պատասխան 21-րդ դարի մարտահրավերների՝ ծագում է ռազմական կրթության ու գի-

[6] Տես ՀՀ Կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի մասին» հմ. 1363-Ա որոշումը (https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=155313):

[7] Տես *В. И. Воронаев.* Инновационные подходы к подготовке военных научных кадров для «будущих войн». «Вестник военного образования», 25.05.2021 (https://vvo.ric.mil.ru/Stati/item/323731/):

տության արդիականացման անհրաժեշտություն[8]: Հենց այս ճշմարտության գիտակցմամբ ՀՀ Կառավարությունը որպես նշված ծրագրով իրականացվող միջոցառումների արդյունք նախատեսել է մինչև 2026 թ. ստեղծել ռազմական կրթության և ծառայողական առաջխաղացման թափանցիկ համակարգ, ռազմակրթական ոլորտն ապահովել ժամանակակից կրթական ու մեթոդական ծրագրերով, ձևավորել և մրցունակ դարձնել նախնական զինվորական, միջին մասնագիտական, բարձրագույն ու հետբուհական կրթություն ապահովող ազգային ռազմակրթական համակարգ, զարգացնել արժանիքների և հստակ կրթական չափանիշների վրա հիմնվող ծառայողական առաջխաղացման շարժառիթավորման հնարավորություններ[9]:

ՀՀ ԶՈՒ-ի կայացման ճանապարհին սպայական կադրերի պատրաստումն ու վերապատրաստումը կատարվել են հիմնականում Ռուսաստանի Դաշնության ռազմական ուսումնական հաստատություններում և ուսումնավարժական կենտրոններում: Այդ գործընթացը կազմակերպվում էր ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ ձևաչափերով, մասնավորապես՝ ՀԱՊԿ-ի շրջանակներում: Ոլորտը կարգավորող հիմնաքարային փաստաթուղթը ՀԱՊԿ-ի անդամ պետությունների միջև 2005 թ. հունիսի 23-ին կնքված «Հավաքական անվտանգության կազմակերպության անդամ պետությունների ռազմական կադրերի պատրաստման վերաբերյալ» համաձայնագիրն է[10]: Կազմակերպության անդամները պարբերաբար ստորագրում են ռազմական կրթության ոլորտում համագործակցության երկկողմ փաստաթղթեր, որոնցով կարգավորվում են կողմերի իրավունքներն ու պարտականությունները (օրինակ՝ ՀՀ–ՌԴ, ՀՀ–Ղազախստան, ՀՀ–Բելառուս և այլն):

Պետք է փաստել, որ Ռուսաստանի Դաշնության հետ երկկողմ ռազմական համագործակցության շրջանակներում հայ զինծառայողների մի ստվար հատված (կուրսանտից մինչև գնդապետ) այդ երկրի բարձրագույն ռազմաուսումնական հաստատություններում կրթություն է ստանում ընդհուպ մինչև օպերատիվ մակարդակ[11]: Ընդ որում, հետաքրքիրն այն է, որ նմանատիպ արևմտյան հաստատությունների համեմատությամբ ՌԴ-ում կարճաժամկետ մասնագիտական դասընթացները սակավաթիվ են: ՀԱՊԿ-ի շրջանակներում իրականացվող միջոցառումները հիմնականում վարժանքներ են՝ միտված կազմակերպության անդամ պետությունների զինված ուժերի փոխգործության մակարդակի բարձրացմանը և մասնագիտական հմտությունների և գի-

[8] Այս մասին ավելի հանգամանորեն տես *В. В. Полич.* Проблемы военного образования и науки (социально-философский анализ). «Профессиональное образование в современном мире», 2015, № 2 (https://www.sibran.ru/upload/iblock/e0b/e0b75a4d7ec97e1c71225116cad2880f.pdf):

[9] Տես ՀՀ Կառավարության 2021 թ. օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության Կառավարության ծրագրի մասին» հմ. 1363-Ա որոշումը (https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=155313):

[10] Տես «Соглашение о подготовке военных кадров для государств – членов Организации Договора о коллективной безопасности». Москва, 23.06.2005 (http://cbd.minjust.gov.kg/act/view/ru-ru/17704):

[11] Տես «Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումներ. կրթական ոլորտի կատարելագործում»: «ՀԲ», 2010, հմ. 1, էջ 9–81:

տելիքների ընդլայնմանը: Նշված միջոցառումները հիմնականում անցկացվում են տարատեսակ խաղային սցենարներով՝ զորավարժությունների տեսքով:

Արևմտյան պետություններից միայն Հունաստանն էր, որ 1990-ական թվականներին ապահովում էր հայ կուրսանտների ուսումնառությունը իր ռազմաուսումնական հաստատություններում: Ի տարբերություն ՌԴ-ից և ՀԱՊԿ-ի շրջանակներում ռազմական կրթության ոլորտում ծավալվող համագործակցության ձևաչափերից, ՆԱՏՕ-ի և Դաշինքի անդամների հետ համագործակցությունը հիմնականում ներառում է ՀՀ ԶՈՒ-ի ներկայացուցիչների մասնակցությունը տարատեսակ կարճաժամկետ ու միջնաժամկետ դասընթացներին և վարժանքներին: Այդպիսով են պաշտպանության բնագավառի հայ մասնագետները հնարավորություն ստանում կատարելագործելու տարբեր ուղղություններով իրենց մասնագիտական կարողություններն ու գիտելիքները, ծանոթանալու ռազմական գործի առաջավոր գաղափարներին:

Անկախության վերականգնումից հետո Հայաստանի Հանրապետությունն իր Զինված ուժերի զարգացման մոդելի հիմքում դրել էր խորհրդային, ապա ռուսական բանակի մոդելը, ինչը հիմնականում պայմանավորված էր տվյալ ժամանակահատվածում ՀՀ նորաստեղծ Զինված ուժերում խոր-հրդային կրթություն ստացած սպաների մեծ թվով: Սակայն արդեն 2000-ական թվականների վերջին ՀՀ պաշտպանական-անվտանգային ոլորտում հասունացավ համալիր բարեփոխումներ անցկացնելու անհրաժեշտությունը: Փոփոխությունները համակարգային կերպով իրագործելու նպատակով կայացվեց որոշում պաշտպանության ռազմավարական վերանայման (ՊՌՎ) մասին, որի շրջանակներում վերանայվելու էին պաշտպանության բնագավառի բոլոր ոլորտները, ներառյալ՝ ռազմական կրթության ոլորտը[12]:

Պաշտպանության ռազմավարական վերանայման արդյունքներով ի հայտ եկավ ռազմական կրթության և վարժանքների ոլորտներում էական բարեփոխումներ կատարելու անհրաժեշտությունը: Համապատասխան մասնագիտական ու փորձագիտական խորհրդատվություն ստանալու նպատակով ակտիվացավ համագործակցությունը Արևմուտքի հետ:

Պետք է նշել, որ նախկին խորհրդային հանրապետությունների հետ ՆԱՏՕ-ի համագործակցությունը մեկնարկել է գրեթե համաժամանակ, հետագայում այդ հանրապետությունները կանոնակարգել են Հյուսիսատլանտյան դաշինքի հետ իրենց հարաբերությունները՝ կախված քաղաքական երկխոսության մակարդակից և շփումների հաճախականությունից[13]: Արդեն 1990-ական թվականների վերջում, երբ Հյուսիսատլանտյան դաշինքը համալրվեց նոր անդամներով, որոշում կայացվեց որոշակիորեն փոփոխել

[12] ՊՌՎ-ի մասին հանգամանորեն տես «Պաշտպանության ռազմավարական վերանայում»: «ՀԲ», 2015, հմ. 3, էջ 9–76:

[13] Տես *Տ. Ս. Հարությունյան,* Պետական կառավարման մոդելի կերպափոխման համառոտ նկարագիրը հետխորհրդային տարածքում: «Արդարադատություն» հանդես: Ե., 2018, հմ. 3:

համագործակցության քաղաքականությունը՝ գործընկեր պետությունների նկատմամբ հավասար գործակցության ձևաչափից անցնելով անհատական սկզբունքով նախագծվող համագործակցության:

Հայաստանի և ՆԱՏՕ-ի համագործակցությունն սկզբնավորվել է 1994թ.՝ «Գործընկերություն հանուն խաղաղության» (ԳՀԽ) ծրագրի շրջանակում[14]: 28 տարվա ընթացքում կողմերի միջև ձևավորվել են գործընկերային հարաբերություններ, որոնք ընդգրկում են տարբեր ոլորտներ: Այս համագործակցությունը խարսխվել է երկու հիմնական փաստաթղթերի վրա՝ «Անհատական գործընկերության գործողությունների ծրագիր» (ԱԳԳԾ)[15] ու «Պլանավորման և վերանայման գործընթաց» (ՊՎԳ)[16]:

Հայաստանում անցկացված վերջին հարցումները վկայում են Հայաստանի հասարակության մեջ ՆԱՏՕ-ի վերաբերյալ դրական ընկալումների աճման մասին[17]: Այնուամենայնիվ, որպես ՆԱՏՕ-ի հետ Հայաստանի համագործակցության հիմնական խոչընդոտ հարցվածների մի ստվար զանգված շարունակում է դիտել Հյուսիսատլանտյան դաշինքում Թուրքիայի առաջատար դերը: Այս մոտեցումն ավելի է խորացել 2020 թվականի Արցախյան պատերազմից հետո, երբ Դաշինքի անդամ Թուրքիան (երկկողմ համագործակցության ձևաչափով) ոչ միայն Ադրբեջանին ցուցաբերեց բացահայտ ռազմատեխնիկական օժանդակություն, այլև իր ձեռքը վերցրեց ռազմական գործողությունների ընդհանուր ղեկավարումն ու կառավարումը[18]:

Ռազմական կրթության ոլորտում ՆԱՏՕ-ի հետ համագործակցությունը հիմնականում խարսխվում է 2008 թվականից գործող «Պաշտպանական կրթության զարգացման հայաստանյան ծրագրի» *(Defence Education Enhancement Programme Project in Armenia (DEEP Armenia))* վրա[19]: Տվյալ ծրագրով նախատեսվող ռազմական կրթությունը և մասնագիտական վերապատրաստումների հնարավորությունները հիմնականում ծառայեցվում են փոխգործելիության զարգացման և համապատասխան կարողություններով օժտված անձնակազմի պատրաստման նպատակին, սակայն ներկայումս առաջարկվող հնարավորությունները շատ ավելին են և հետզհետե

[14] Տես “The Partnership for Peace Programme” (https://www.sto.nato.int/Pages/partnership-for-peace.aspx):

[15] Տես «Հայաստանի պարտավորությունները ՆԱՏՕ-ի հետ Անհատական գործընկերության գործողությունների ծրագրի շրջանակներում»: Ուժի մեջ է մտել 2005 թ. դեկտեմբերին: Ե., 2007 ((http://www.natoinfo.am/files/uploads/documents/IPAP_arm.pdf)):

[16] Տես “Partnership for Peace Planning and Review Process”. Last updated: 05.11.2014 (https://www.nato.int/cps/en/natohq/topics_68277.htm):

[17] Տես “New poll suggests uncertainty in Armenia about country’s place in world”. “Civilnet”, 9 Jun 2022 (https://www.civilnet.am/en/news/664375/new-poll-suggests-uncertainty-in-armenia-about-countrys-place-in-world/):

[18] Տես R. *Synovitz.* “Technology, Tactics, And Turkish Advice Lead Azerbaijan To Victory In Nagorno-Karabakh”, 13 November 2020 (https://www.rferl.org/a/technology-tactics-and-turkish-advice-lead-azerbaijan-to-victory-in-nagorno-karabakh/30949158.html):

[19] Տես “Defence Education Enhancement Programme Project in Armenia”, 11–13 February 2020 (https://buildingintegrity.hq.nato.int/News.aspx?id=52202266):

տարածվելու են ՀՀ ԶՈՒ-ի անձնակազմի վրա: Համագործակցության լուրջ ձեռքբերումներից է ՀՀ ռազմակրթական ոլորտում օպերատիվ մակարդակի մագիստրոսական կրթություն ապահովող ուսումնական հաստատության ստեղծումը: Այն ավելի հայտնի է որպես ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի Հրամանատարաշտաբային ֆակուլտետ:

Հայաստանը, լինելով ՀԱՊԿ-ի միակ անդամ պետությունը, որը մասնակցել է ՆԱՏՕ-ի ղեկավարած առաքելություններին և ներկայումս շարունակում է մասնակցել Կոսովոյում Դաշինքի խաղաղապահական առաքելությանը, զգալի ուշադրություն է դարձնում նաև վերջինիս կազմակերպած խաղաղարարական ուղղվածություն ունեցող տարատեսակ վարժանքներին ՀՀ ԶՈՒ-ի ներկայացուցիչների մասնակցությանը: Հայաստանը բավական ակտիվ է այս ուղղությամբ, մասնավորապես՝ Հյուսիսատլանտյան դաշինքի առաջարկած գործընկերների զինված ուժերի միջև փոխգործելիության մակարդակը բարձրացնող միջոցառումներին մասնակցությամբ:

Ներկայումս ՀՀ ռազմական կրթությունն ու վերապատրաստումները կազմակերպվում են մի քանի ձևաչափով.

- արտասահմանյան ռազմաուսումնական հաստատություններում հայ սպաների և քաղաքացիական ծառայողների պատրաստում,
- օտար լեզուների ուսուցում,
- մասնագիտական վերապատրաստումներ,
- հեռավար կրթություն և դասընթացներ:

Ներկայիս բարձր տեխնոլոգիական դարաշրջանում անհամեմատ ավելացել են գիտելիքի հասանելիության հնարավորությունները: Կարծում ենք, որ Հայաստանը, լինելով տարածքով փոքր և ունենալով սահմանափակ ռեսուրսներ, պետք է իր կրթական համակարգը կառուցի այնպես, որ ուսումնառողին հաղորդվող գիտելիքը լինի տեղեկունակ, պետք է առավել արդյունավետորեն յուրացնի տեղեկատվական դարաշրջանում ի հայտ եկող հնարավորությունները և մշտապես ձգտի մրցակցային առավելությունների ստեղծմամբ ձևավորելու որակական գերազանցություն, ինչի շնորհիվ կչեզոքացվեն առկա և ապագա մարտահրավերները[20]:

Այս պնդումը հավասարապես վերաբերում է նաև պաշտպանության ոլորտին: Զինված ուժերի մարտունակությունը խարսխվում է երեք մեծ հենասյուների վրա.

- սպառազինություն և ռազմական տեխնիկա,
- կառավարման համակարգ,
- անձնակազմի արհեստավարժություն[21]:

Ընդ որում, ռազմական ուսուցումը և կրթությունը վերջին երկու հենասյուների ասպարեզում ճեղքումային առաջընթաց ապահովող գլխավոր միջոցներն են:

[20] Տես *Տ. Ս. Հարությունյան,* Միջազգային ռազմական համագործակցության դերը Հայաստանի Հանրապետության Զինված ուժերի արդիականացման գործում: «ՀԲ», 2018, հմ. 1–2:

[21] Տես “Enlisted professional military education learner handbook”. The Air University Global College of Professional Military Education. Maxwell AFB, Alabama, 12 May 2022:

Ելնելով այս գաղափարից՝ Հայաստանն իր ակտիվ պաշտպանական-անվտանգային քաղաքականությամբ պետք է հետամուտ լինի Զինված ուժերում արդեն մեկնարկած լայնածավալ ու խորքային բարեփոխումները հնարավորինս սեղմ ժամկետներում իրագործելուն:

ԱՄՓՈՓՈՒՄ

Ամփոփելով շարադրանքը՝ նպատակահարմար ենք համարում նշել, որ չնայած այն հանգամանքին, որ ներկայումս ակտիվ ռազմական գործողություններ տեղի չեն ունենում, մեր տարածաշրջանում իրավիճակը շարունակում է մնալ բավական լարված: Հայաստանի Հանրապետությունն իր անվտանգության միջավայրի հաշվառմամբ հիմնականում գտնվել, գտնվում և միջնաժամկետ հեռանկարում գտնվելու է «սպառնալից ժամանակաշրջանի» ռեժիմում: Ուստի, կարծում ենք, պետք է հնարավորինս արագ կյանքի կոչել պաշտպանության բնագավառում մեկնարկած բարեփոխումները:

Գաղտնիք չէ, որ 21-րդ դարի գիտատեխնիկական և տեխնոլոգիական հարաճուն զարգացումներն անմիջականորեն ազդում են ռազմական գիտության, մարտական գործողությունների բնույթի և վարման տեսության վրա[22]: Ու թեև ժամանակակից զինված ուժերը համալրվում են արդիական տեխնոլոգիաներով ստեղծված սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով, սակայն (գուցե՝ առավելևս) անխտիր բոլոր պատերազմներում միշտ էլ վճռորոշ է եղել ու մնում է մարդկային գործոնը՝ գրագետ ու խելացի, համարձակ որոշումներ կայացնելու ունակ հրամանատարը և մասնագիտական բարձր պատրաստականությամբ և բարոյահոգեբանական հատկանիշներով օժտված զինվորը[23]:

Դրա հետ մեկտեղ նաև փաստենք, որ ռազմական կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումները պետք է նպատակաուղղել այնպիսի համակարգի ստեղծմանը, որում բարձրագույն ռազմամասնագիտական կրթությունը, սպայական կազմի բարձրագույն ռազմական (ակադեմիական) կրթությունը, լրացուցիչ կրթությունը, ՀՀ ենթասպայական (պրոֆեսիոնալ սերժանտական) կազմի կրթությունը և վարժանքները բավարարեն ՀՀ քաղաքացիական բարձրագույն կրթության չափանիշներին, մշտապես համահունչ լինեն միջազգային ռազմակրթական ոլորտի զարգացման միտումներին:

Հենց այս պահանջների հաշվառմամբ էլ ռազմական կրթության և վարժանքների ասպարեզում դաշնակից ու գործընկեր պետությունների և կազմակերպությունների հետ ՀՀ պաշտպանության նախարարության համագործակցությունը ընձեռում է ոչ միայն այդ ոլորտներում ձևավորվող ղեկավար գաղափարներին և առկա միտումներին ծանոթ լինելու, այլև նրանց ամենաարդիական և արդյունավետ լուծումները տեղայնացնելու բացառիկ հնարավորություններ: Հետամուտ լինելով Զինված ուժերում մեկնարկած լայնածա-

[22] Տես *Judith Hick.* The U.S. Army War College: Military Education in a Democracy. Temple University, USA, 2002:

[23] Տես *Volker Franke.* Preparing for peace: Military identity, value, orientations, and professional military education. London, 1999:

վալ բարեփոխումների իրականացմանը՝ Հայաստանն անկասկած պետք է խորապես ուսումնասիրի ինչպես ռուսաստանյան, այնպես էլ արևմտյան ռազմագիտական դպրոցների ամբողջ փիլիսոփայությունն ու գործիքակազմը դրանք արդյունավետ կերպով մեր իրականության մեջ կիրառելու նպատակով:

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ И СОДЕРЖАНИЕ РЕФОРМ, ОСУЩЕСТВЛЯЕМЫХ В СФЕРЕ ВОЕННОГО ОБРАЗОВАНИЯ РА В РАМКАХ МЕЖДУНАРОДНОГО ВОЕННОГО СОТРУДНИЧЕСТВА

Т. С. АРУТЮНЯН, аспирант Института философии, социологии и права Национальной академии наук РА, заместитель начальника Отдела планирования оборонной политики Департамента оборонной политики и международного сотрудничества МО РА

РЕЗЮМЕ

Строительство вооруженных сил представляет собой систему взаимосвязанных и взаимообусловленных экономических, социально-политических, идеологических, военно-технических и иных мероприятий, направленных на создание, подготовку и развитие вооруженных сил для гарантированной вооруженной защиты национальных интересов. Оно должно осуществляться в рамках общей системы военной деятельности государства, в русле поэтапного комплексного преобразования всей военной организации государства по научно обоснованному плану.

Данные преобразования затрагивают все сферы жизнедеятельности вооруженных сил. Особое место и роль отводятся реформированию военной науки и военного образования. Несмотря на оснащение армий ведущих государств самыми современными образцами вооружения, военной и специальной техники (ВВСТ), роль человека не только не сокращается, но даже повышается, а к личному составу, обслуживающему и эксплуатирующему высокотехнологичные ВВСТ, предъявляются все более жесткие требования, в результате чего повышаются требования и к общему и специальному образованию, а постоянное совершенствование ВВСТ со всей императивностью требует превращения военного образования в непрерывный процесс, продолжающийся в течение всей военной деятельности военнослужащих.

Осознавая приоритетную роль военного образования в системе совершенствования обороны государства, военно-политическое руководство РА уделяет огромное внимание вопросам организации и модернизации военного образования в РА. Данный процесс осуществляется в двух направлениях: повышение образовательного уровня отечественных ВВУЗ-ов и подготовка кадров в ВВУЗ-ах союзников и партнеров, причем развитие обоих направлений осуществляется в рамках международного военного сотрудничества как в двустороннем

(Россия, Беларусь, Казахстан, Греция, США), так и многостороннем (ОДКБ, НАТО) форматах, посредством участия в кратковременных, среднесрочных и долгосрочных образовательных программах и курсах.

THE MAIN DIRECTIONS AND CONTENT OF THE REFORMS BEING IMPLEMENTED IN THE RA MILITARY EDUCATION SPHERE IN THE FRAMEWORK OF INTERNATIONAL MILITARY COOPERATION

T. S. HARUTYUNYAN, Graduate Student, Institute of Philosophy, Sociology and Law, National Academy of Sciences, RA, Deputy Head, Defense Policy Planning Division, Defense Policy and International Cooperation Department, MOD, RA

SUMMARY

Building thearmed forces is a system of interrelated and interdependent economic, socio-political, ideological, military-technical and other events aimed at the creation, training and development of the armed forces for the guaranteed armed protection of national interests. It should be carried out within the framework of the general system of the state's military activity, in line with the phased complex transformation of the entire military organization of the state according to a scientifically substantiated plan.

The given transformations affect all the spheres of life of the armed forces. The reformation of military science and military education is assigned a special place and role. Despite that the armies of the leading states are equipped with the most sophisticated types of armament, military and special equipment, an individual's role not only remains unreduced, moreover, increases, and increasingly more stringent requirements are imposed on the personnel maintaining and operating the high-tech armament, military and special equipment, as a result of which the requirements for general and special education also increase, and the constant improvement of the armament, military and special equipment with all the imperativeness requires the transformation of themilitary education into a continuous process that goes throughout the entire military activity of servicemen.

Being conscious of the priority role of the military education in the system of improving the state defense, the military-political leadership of the RA pays great attention to the organization and modernization of military education in the RA. This process is carried out in two directions: increasing the educational level of domestic top-level service schools, and training personnel in suchlike institutions of allies and partners, withal that the development of both directions is carried out within the framework of international military cooperation both in bilateral (Russia, Belarus, Kazakhstan, Greece, USA), and multilateral (CSTO, NATO) formats, via participation in short-term, mid-term and long-term educational programs and courses.

ՌԱԶՄԱԿԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ*

Զ. Դ. ԱՍԱՏՐՅԱՆ, պահեստազորի գնդապետ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի Գիտահետազոտական կենտրոնի ռազմագիտական խմբագրման բաժնի պետ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից պատերազմների վարման եղանակների և միջոցների անընդհատ փոփոխումը, ինչպես նաև դրանցում բարձրտեխնոլոգիական միջոցների լայն կիրառումը զինծառայողներից պահանջում են մասնագիտական գիտելիքների շարունակական հարստացում և դրանք գործադրելու հոգեբանական կարողությունների ու հմտությունների, անձնային հոգեբանական հատկությունների մշտական զարգացում: Դրան հասնելու ճանապարհը բարձր որակի մասնագիտական կրթության ու դաստիարակության կազմակերպումն է, ինչը նախատեսում է գնահատել զինծառայողների առկա գիտելիքների մակարդակը և բացահայտել նրանց անձնային հոգեբանական հատկությունները: Կարծում ենք՝ միայն հետազոտություններից ստացված տվյալների հաշվառմամբ է հնարավոր մշակել և ներդրել վերապատրաստման կրթական այնպիսի ծրագրեր, որոնք կնպաստեն զինծառայողների ուսուցման և դաստիարակության աշխատանքների արդյունավետությանը և մարդկային ներուժի նպատակային օգտագործմանը:

Պատերազմում զինծառայողին վիճակված է անցնել բազմաթիվ փորձությունների ու վտանգների միջով, որոնք կարող են դառնալ վախի և խուճապի պատճառ, եթե նա չի անցել պատշաճ պատրաստում: Մասնագիտական գրականության մեջ մարտադաշտում դրանց ազդեցությունների նվազեցման համար նշվում են հետևյալ գործոնները՝ անձնակազմի արդյունավետ կառավարում, զինծառայողների մասնագիտական անհրաժեշտ գիտելիքներ, բարձր մակարդակի ֆիզիկական և մարտական պատրաստվածություն, փորձ և իրադրությանը համարժեք գործելու ու հարմարվելու կարողություն և այլն[1]:

---

* Հոդվածը նախնական տեսքով ներկայացվել է 24.10.2022: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 20.12.2022:

[1] Տես *Ն. Ն. Գոլովին,* Պատերազմի հետազոտություններ, մաս 2: «ԱՏ», 2021, հմ. 8, գլ. 3, էջ 19–34, նաև՝ *А. Г. Караяни, И. В. Сыромятников.* Военная психология. М., 2016, сс. 260–264:

Իհարկե, զինծառայողների մասնագիտական արդյունավետ գործունեությունը պայմանավորված չէ միայն նրանց գիտելիքներով ու անձնային հոգեբանական հատկություններով: Դրա վրա էական ազդեցություն են ունենում այլ գործոններ ևս, օրինակ՝ զինծառայողների առողջական վիճակը, ֆիզիկական պատրաստվածությունը և այլն: Ընդ որում, առկա է առողջական վիճակի, ֆիզիկական պատրաստվածության, մասնագիտական գիտելիքների կիառման և հոգեբանական կայուն հատկությունների միջև փոխադարձ կապ: Դրանցից որևէ մեկի ոչ բավարար լինելը բացասական ազդեցություն է ունենում զինծառայողների պատրաստության ցուցանիշների վրա: Զինծառայողների բարձր մակարդակի ֆիզիկական պատրաստվածությունն ապահովում է ոչ միայն մարմնի և առողջության ամրապնդում, շարժողական հմտությունների զարգացում, այլև կայուն հոգեբանական հատկություններ[2]:

Զինծառայողների գիտելիքների և անձնային որակական հատկանիշների գնահատման ժամանակ ելակետային պետք է լինի հետևյալ մոտեցումը. ի՞նչ գիտելիքներ են պահանջվում զինծառայողից (ըստ պաշտոնի վկայագրի) և կարո՞ղ է արդյոք տվյալ զինծառայողը իր հոգեկան հատկություններով, հմտություններով և ֆիզիկական պատրաստվածությամբ կիրառել գիտելիքները մարտական իրավիճակներում:

ՌԱԶՄԱԿԱՆ ՈՒՈՐՏՈՒՄ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Մասնագիտական գործունեության մեջ հաջողությունների հասնելու գրավականը կրթության միջավայրի ձևավորումն է, որը պահանջում է անձնակազմի շրջանում մասնագիտական գիտելիքների կատարելագործման համակարգերի կիրառում: Ինչպես հայտնի է, զինծառայողների գիտելիքների ստուգման համար հաճախ կիրառվում է ատեստավորումը: Ատեստավորման ժամանակ ստուգվում են տվյալ անձնավորության գիտելիքները, մասնագիտական հմտություններն ու գործունեության մեջ այդ գիտելիքները կիրառելու կարողությունը և այլն: ՀՀ Կառավարությունը նախատեսել է ատեստավորման միջոցով կրկնապատկել զինծառայողների աշխատավարձը՝ նպատակ ունենալով ԶՈՒ-ում ձևավորելու բարձր մակարդակի գիտելիքներով օժտված պրոֆեսիոնալ անձնակազմ: Ըստ այդ փոփոխությունների՝ մարտական առաջադրանքների կատարման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինվորական ծառայության սպայական, ենթասպայական ու շարքային կազմերի զինծառայողների համար գործող ատեստավորման կարգի փոխարեն սահմանվում է ատեստավորման նոր համակարգ և նրանց հավելավճարը հաշվարկվում է ըստ ատեստավորմամբ ստացած դրական արդյունքների: Այս գործընթացը համարվում է պրոֆեսիոնալ բանակ ունենալուն ուղղված բարեփոխումների հայեցակարգի կարևոր և անբաժանելի մաս[3]:

[2] Տես *Ա. Ե. Դավթյան,* Ֆիզիկական պատրաստությունը և Հայաստանի Հանրապետության Զինված ուժերում դրա ապահովման որոշ խնդիրներ: «ՀԲ», 2018, հմ. 1–2:

[3] Տես «Կառավարությունը նախատեսում է կրկնապատկել կամավոր ատեստավորում անցած պայմանագրային զինծառայողների աշխատավարձը», 13.10.2022 (https://

Անշուշտ նյութական շարժառիթավորումը լուրջ խթան է, որ զինծառայողները ձգտեն մշտապես հարստացնելու իրենց գիտելիքները: Միևնույն ժամանակ կարծում ենք՝ ատեստավորումը պետք է կազմակերպվի թափանցիկ և օբյեկտիվություն ապահովող առկա ընթացակարգերի ու մեխանիզմների կատարելագործմամբ՝ բացառելով որևէ անօրինականություն, հակառակ դեպքում այն կարող է ուղեկցվել հովանավորչության կամ անարդարության մասին ասեկոսեներով և այլ շահարկումներով, ինչը պատճառ կդառնա ստորաբաժանումներում բարոյահոգեբանական մթնոլորտի խաթարման ու մարտունակության անկման:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ հիմնական շեշտը դրվում է ինչպես անկախ փորձագետների, այնպես էլ անմիջական ղեկավարների փորձագիտական գնահատականների վրա[4]: Հարցաշարերը հիմնականում կազմվում են հետևյալ սկզբունքով. հարցերի 10-15 տոկոսը վերաբերում է պետության իրավաքաղաքական հիմքերին և ընդհանուր քաղաքականությանը, 10-15 տոկոսը՝ տվյալ կազմակերպության, իսկ մնացած մասը՝ մասնագիտական-հաստիքային գործառույթներին: Երբեմն ատեստավորման հարցերում ներառվում են նաև այնպիսի հարցեր, որոնք վերաբերում են մեկ կամ երկու աստիճանով բարձր պաշտոնների գործառույթների, ինչը հնարավորություն է տալիս պարզելու տվյալ անձի հեռանկարային առաջխաղացման ներուժը[5]:

Ատեստավորումը՝ որպես անձնավորության մասնագիտական պիտանիության գնահատման ընթացակարգ, մեծապես կախված է կազմակերպության առաջադրած կոնկրետ խնդրի էությունից: Այդ գործընթացի կազմակերպման ժամանակ կարևոր է հաշվի առնել միջազգային փորձը, սակայն դա բավարար լինել չի կարող, քանի որ ատեստավորման ժամանակ կիրառվող մեթոդիկաները արդյունավետ են միայն կոնկրետ կազմակերպությունների համար և լուծում են կոնկրետ խնդիրներ: Ուստի նպատակահարմար է ՀՀ ԶՈՒ-ի համար մշակել ուրույն մեթոդաբանություն՝ հարմարեցված ՀՀ ԶՈՒ-ի ներկայիս պայմաններին ու պահանջներին:

Ընդհանուր առմամբ, ԶՈՒ-ում կադրային քաղաքականությունը պետք է միտված լինի զինծառայողների շրջանում մասնագիտական հաջողություն-

www.primeminister.am/hy/press-release/item/2022/10/13/Cabinet-meeting/), *նաև՝* ՀՀ 2017 թ. նոյեմբերի 15-ի «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» հմ. ՀՕ-195-Ն օրենքը (https://www.arlis.am/documentview.aspx?docid=117633):

[4] Տես, օրինակ, *С. В. Шанхаев*. Прохождение военной службы по контракту: практические рекомендации. М., 2008, сс. 118–130 (http://www.voennoepravo.ru/files/008%20vsKONTR.pdf), նաև՝ «Что такое аттестация персонала: цели, предметы и критерии оценки, результаты аттестации» (http://www.tatsel.ru/delo/attestation/chto-takoe-attestaciya/); «Attestation Review of the Nebraska Military Department - Camp Ashland: July 1, 2007 Through January 31, 2010». Nebraska, 2010 (https://auditors.nebraska.gov/APA_Reports/2010/SA31-05202010-Camp_Ashland_July_1_2007_through_January_31_2010_Attestation_Review.pdf):

[5] Այս մասին ավելի հանգամանորեն տես *Զ. Դ. Ասատրյան*, ՀՀ ԶՈՒ-ում ատեստավորման արդյունավետ համակարգի ներդրման հարցի շուրջ: «ՀԲ», 2012, հմ. 3:

ներ ունենալու վստահության, ինչպես նաև հայրենիքի պաշտպանության նկատմամբ անհատական բարձր պատասխանատվության ամրապնդմանը: Հակառակ դեպքում անձնավորության մասնագիտական գործունեությունը կուղղորդվի գերազանցապես շահախնդրությամբ ու պրագմատիկությամբ:

Ատեստավորումը՝ որպես գիտելիքների գնահատման և կադրային քաղաքականության հուսալի և արդյունավետ գործիքներից մեկը, հնարավորություն է տալիս լուծելու ինչպես ընթացիկ, այնպես էլ հեռանկարային խնդիրներ, օրինակ՝ պարզելու ոչ միայն զինծառայողների գիտելիքների մակարդակը, բացահայտելու բացթողումներն ու ձեռքբերումները, այլև գնահատելու զինծառայողների լրացուցիչ կրթություն ստանալու անհրաժեշտությունը: Կարծում ենք՝ ատեստավորման ժամանակ զինծառայողների մասնագիտական գիտելիքների գնահատման հետ մեկտեղ նպատակահարմար է կիրառել նաև անձնային հատկությունների բացահայտման մեթոդներ և մեթոդիկաներ, որոնք հնարավորություն կտան որոշակի պատկերացում կազմելու նրանց հոգենկարագրի վերաբերյալ:

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԱՆՁՆԱՅԻՆ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Զինծառայողների մասնագիտական գիտելիքները զինվորական գործունեության մեջ հաջողության հասնելու կարևոր, սակայն ոչ բավարար պայման են: Անհրաժեշտ է, որ զինծառայողներն ունենան այդ գիտելիքները գործնականում արդյունավետ կերպով կիրառելու անձնային հատկություններ, օրինակ՝ կազմակերպվածություն, վճռականություն, հուզական կայունություն, նախաձեռնողականություն և այլն:

Կարծում ենք՝ հնարավոր չէ առանց հոգեբանական հետազոտության արդյունքների զինվորական կոլեկտիվներում կազմակերպել հաջող մասնագիտական գործունեություն: Ընդ որում, հոգեբանական հետազոտությունների հիման վրա կատարվում է անձնակազմի հոգեբանական մասնագիտական ընտրազատում: Ընդհանուր առմամբ հոգեբանական մասնագիտական ընտրազատումը միջոցառումների համալիր է՝ ուղղված կազմակերպության անձնակազմի արդյունավետ ընտրության ապահովմանը: Այն հիմնվում է մասնագիտական գործունեության պահանջներին անձնակազմի անհրաժեշտ հոգեֆիզիոլոգիական, հոգեկան և սոցիալ-հոգեբանական հատկությունների զարգացածության մակարդակի համապատասխանության գնահատման վրա[6]: Հոգեբանական մասնագիտական ընտրազատման հիմքում դրված են մասնագիտագիրը (պրոֆեսիոգրամ) և հոգեկանագիրը (պսիխոգրամ)[7]:

[6] Տես «Военная психология», гл. 8: «Профессиональный психологический отбор военнослужащих».Под ред. А. Г. Маклакова. СПб., 2007, с. 197:

[7] Տես *Е. С. Романова.* 99 популярных профессий. Психологический анализ и профессиограммы. СПб., 2003, сс. 95–98, նաև՝ *Э. Ф. Зеер, А. М. Павлова, А. П. Зольников.* Практикум по психологии профессий. Екатеринбург, 2002 (https://elar.rsvpu.ru/bitstream/123456789/23548/1/5-8050-0067-9_2002.pdf); *Ռ. Աղուզումցյան, Լ. Պետրոսյան, Ս. Պողոսյան, Ա. Խաչատրյան,* Կառավարչական գործունեության

ԶՈՒ-ում մասնագիտական հոգեբանական ընտրազատման կիրառումը կարևոր է անձնակազմի հոգեբանական կորուստների կանխարգելման, մարդկային ներուժի նպատակային օգտագործման առումով: Ընդհանուր առմամբ, ԶՈՒ-ում մասնագիտական հոգեբանական ընտրազատումը ձևավորում է ռազմավարական, օպերատիվ և մարտավարական կառավարման մակարդակներում հոգեբանական գիտելիքներից ու տվյալներից օգտվելու մշակույթ: Դրա անհրաժեշտությունը պայմանավորված է ռազմական բնագավառում բարձր տեխնոլոգիաների, ավտոմատացված և բարձր էներգատար համակարգերի լայն կիրառմամբ, ինչը առաջ է բերում մարդկային գործոնի հուսալիությանը ներկայացվող խիստ պահանջներ: Ինչպես հաստատված է հոգեբանական գիտությամբ և ինչպես անհերքելիորեն վկայում է փորձը՝

- «անձնավորության պաշտոնական կերպարը» ոչ միշտ է նույնական նրա իրական, ներքին էությանը,
- անձնավորության որոշ հատկություններ թեև նորմայից շեղում չեն համարվում, սակայն կարող են բացասական կերպով ազդել մասնագիտական գործունեության արդյունավետության և հուսալիության վրա (ինչը հատկապես վերաբերում է բարձր աստիճանի պատասխանատվությամբ և վտանգով բնութագրվող գործունեությանը),
- հաճախ իրավիճակայնորեն ձևավորվող իր կարողությունների, շարժառիթավորման և այս կամ այն տեսակի գործունեությանը հակվածության սուբյեկտիվ գնահատականը կարող է չհամապատասխանել կամ նույնիսկ հակասել անձնավորության հոգեբանորեն, տնտեսապես, ռազմամասնագիտորեն հիմնավորված նախանշանակմանը կամ լայն իմաստով՝ նրա կոչվածությանը:
- միայն կրթության և որակավորման մակարդակի չափանիշները վերցրած, առանց անձնային առանձնահատկությունների հաշվառման, միշտ չէ, որ հնարավորություն են տալիս բավականաչափ հուսալիորեն կանխատեսելու գործունեության հաջողությունը,
- գիտատեխնիկական առաջընթացը տնտեսապես զարգացած բոլոր պետություններում ուղեկցվում է տարաբնույթ ձևերի սոցիալական ախտաբանության աճմամբ, ընդսմին այդ երևույթի կանխումը միայն վարչական և իրավական ներգործության միջոցներով ոչ միշտ է ապահովում դրական արդյունք[8]:

Այսպիսով՝ զինծառայողի մասնագիտական արդյունավետ գործունեությունը պայմանավորված է ոչ միայն այն բանով, թե զինծառայողը որքանով է տիրապետում իր մասնագիտությանը, այլև թե ինչպիսի անձնային հոգեբանական հատկություններ ունի: Օրինակ՝ Ե. Ռոմանովան ներկայացնում է

առանձնահատկությունների հոգեբանական նկարագիր: Ե., 2015, էջ 100–116 (https://paara.am/wp-content/uploads/2016/12/kar-gorcneutyun-arandznahat.pdf):

[8] Տես *М. М. Решетников.* Психология войны. Прогнозирование состояния, поведения и деятельности людей. М., 2021, сс. 92–93:

զինվորական մասնագիտական գործունեության արդյունավետությունը ապահովող հետևյալ անձնային հատկությունները և ունակությունները՝

- ազնվություն,
- հայրենասիրություն,
- կազմակերպվածություն,
- դիտողականություն,
- վճռականություն,
- արդարամտություն,
- արտածական մտածողություն,
- իր և այլ մարդկանց նկատմամբ պահանջկոտություն,
- նախաձեռնողականություն,
- կամային որակները զարգացնելու կարողություն,
- փաստերը վերլուծելու և համեմատելու ունակություն,
- իրավիճակով պայմանավորված արագ որոշումներ կայացնելու ունակություն,
- ֆիզիկական ուժը և տոկունությունը զարգացնելու կարողություն,
- հաղորդակցական ու կազմակերպչական ունակություններ,
- իրավիճակը կանխատեսելու կարողություն,
- լավ կռահողականություն (ինտուիցիա), մարդկանց ճանաչելու ունակություն,
- իրադրության մեջ արագ կողմնորոշվելու ունակություն,
- հուզական կայունություն ու նմանատիպ այլ անձնային հատկություններ և ունակություններ:

Առանձնացված են նաև մասնագիտական գործունեության արդյունավետությանը խոչընդոտող հետևյալ անձնային որակները՝

- վերլուծելու, փաստերն առադրելու, եզրակացություններ անելու անընդունակությունը,
- անվճռականությունը,
- պարտքի նկատմամբ անտարբերությունը,
- անկազմակերպվածությունը,
- դյուրագրգռությունը, իմպուլսիվությունը,
- անկարգապահությունը,
- թուլակամությունը,
- գաղտնիքը պահելու անկարողությունը[9]:

Վերոնշյալ անձնային հատկությունները այն գործոններն են, որոնք ազդեցություն են ունենում զինծառայողների մասնագիտական գիտելիքների ձեռքբերման, ճշգրիտ որոշումների կայացման ու գործունեության կազմակերպման առումով: Հարկ է ուշադրություն դարձնել այն բանի վրա, որ առանձին զինվորական մասնագիտությունների համար անհամատեղելի են

[9] Տես *Ե. Ս. Ռոմանովա,* Նշ. աշխ., նաև՝ *Է. Ֆ. Զեեր, Ա. Մ. Պավլովա, Ա. Պ. Զոլնիկով,* Նշ. աշխ.:

այնպիսի հոգեբանական երևույթներ, ինչպիսիք են, օրինակ, վախերը (ֆոբիաներ): Այսպես. օդաչուի, տանկիստի մասնագիտությամբ զինծառայողները չպիտի վախ ունենան փակ տարածություններից («կլաուստրոֆոբիա»), ինչպես նաև օդաչուները և դեսանտագրոհայինները բարձրությունից («ակրոֆոբիա»): Հրամանատարական կազմի ներկայացուցիչները պետք է ունենան առաջավարի որակներ, հետևաբար նրանց համար անընդունելի են այնպիսի վախերը, ինչպիսիք են վախը սխալ գործելուց («ատիխոֆոբիա») կամ վախը պատասխանատվությունից («հիպենգիոֆոբիա»): Զինծառայողները կարող են վախեր (ֆոբիա) ձեռք բերել նաև մարտական գործողությունների ընթացքում ստացած հոգեխոցվածքի հետևանքով, ինչը համարվում է լուրջ հոգեբանական կորուստ: Ինչպես հայտնի է, վախից տառապող մարդը դիմում է ցանկացած քայլի, որ խուսափի սարսափ առաջացնող իրավիճակից կամ առարկայից: Իսկ զինվորական ծառայության ժամանակ վախեր առաջացնող ռիսկային իրավիճակները շատ են:

Վախը և խուճապը ԶՈՒ-ում անձնակազմի շրջանում հոգեբանական կորուստների պատճառ են: Վախը բացասական հույզ է, որն առաջանում է անհատի կենսաբանական, սոցիալական կամ հոգևոր գոյությանը սպառնացող իրադրություններում: Այն ունի բնազդային բնույթ: Վախով համակված զինծառայողներն այդ զգացումը տարածում են խմբի մյուս անդամների վրա, և առաջանում է զանգվածային խուճապ: Մասնագիտական գրականության մեջ խուճապը բնորոշվում է որպես չկառավարվող վախի զանգվածային դրսևորում: Այն արտահայտվում է մարդկանց անկանոն փախուստի և այլ չգիտակցված գործողությունների ձևով, մարդիկ սկսում են գործել միայնակ, չեն համագործակցում իրար հետ, այլ միմյանց ընկալում են որպես մրցակիցներ, ինչը վտանգը նվազեցնելու փոխարեն հակառակը՝ մեծացնում է այն[10]:

Անշուշտ, զինծառայողների վախերի կառավարմանը և խուճապի կանխմանը հնարավոր է հասնել խաղաղ ժամանակ անձնակազմի բարձր մակարդակի պատրաստվածությամբ: Մասնագիտական գիտելիքները, մարտական պատրաստվածությունը, անձնային հոգեբանական հատկությունները այն հիմնական գործոններից են, որոնց շնորհիվ զինծառայողը կարողանում է կառավարել վախերը: Ռուսական զինծառայողների շրջանում այդ ուղղությամբ հոգեբանական աշխատանքը պետք է կազմակերպվի ժամանակին, ու նպատակաուղղված կերպով անցկացվեն մարզումներ:

Կարծում ենք՝ նպատակահարմար է ներկայացնել նաև զինվորական ստորաբաժանումներում հոգեբանական հետազոտությունների կազմակերպման որոշ աշխատանքներ: Պայմանավորված հետազոտության նպատակով՝ հոգեբանը կամ հոգեբանների խումբը ընտրում են հետազոտության

[10] Տես *Լ. Պ. Արտիշև,* Մարտական իրադրությունում անձնակազմի հուզական անկայունության կանխման հարցի շուրջ: «ՀԲ», 2001, հմ. 4, *նաև՝ Ն. Ն. Գոլովին,* Նշ. աշխ., *Ն. Ռ. Հակոբյան, Ա. Գ. Խաչատրյան,* Բնակչության շրջանում բարոյահոգեբանական աշխատանքների կազմակերպման որոշ առանձնահատկություններ: «ՀԲ», 2021, հմ. 3:

կատարման սկզբունքները, մեթոդներն ու մեթոդիկաները[11]: Դրանց ընտրության ու կիրառման ընթացակարգերը պայմանավորված են կոնկրետ պատվիրատուի (այս դեպքում՝ ՁՈՒ-ի համապատասխան ստորաբաժանման հրամանատարական կազմի) ձևակերպած պահանջներով և առաջադրանքներով, թե հետազոտվող զինծառայողի վերաբերյալ ինչպիսի հոգեբանական տեղեկություններ են նրանք ակնկալում: Այսպիսով՝ անհրաժեշտ է, որ հոգեբանն իմանա՝

- ոլորտը կանոնակարգող իրավական նորմերը և պաշտոնի վկայագրերով սահմանված գործառութային պարտականությունները,
- զինվորական ծառայության պայմանները, վտանգները, մարտական առաջադրանքի բնույթը և առանձնահատկությունները,
- հետազոտվող զինծառայողի ծառայության ժամանակահատվածը և զբաղեցրած պաշտոնները, խրախուսանքների ու պատիժների վերաբերյալ տեղեկությունները,
- տվյալ զինծառայողի ընտանեկան դրությունը և նման բնույթի այլ տեղեկություններ:

Զինծառայողների անձնային հատկությունների, նյարդահոգեկան կայունության, հետաքրքրությունների, հակումների և այլ անձնային հոգեբանական երևույթների բացահայտման մեթոդներն ու մեթոդիկաները բազմաթիվ են: Վ. Հ. Մարգարյանը հոգեբանական ընտրազատման աշխատանքների կազմակերպման առնչությամբ նշում է, որ, օրինակ, ԱՄՆ-ի ՁՈՒ-ում մասնագիտական ընտրության պրակտիկայում լայն տարածում են ստացել հոգեբանական հարցարանները («Անձնավորության ուսումնասիրման ստանդարտացված բազմագործոն մեթոդիկա» *(MMPI),* «16 գործոնային անձնային հարցարան» *(16-PF),* Այզենկի, Թեյլորի, Սպիլբերգի հարցարաններ, «Հակումների որոշման Կուդերի թեստ», «Հետաքրքրությունների պարզման Ստրոնգի թեստ» և այլն), որոնք նախանշանակված են կոնկրետ հոգեբանական տիպին տվյալ հետազոտվողի պատկանելությունը որոշելու, հոգեբուժական ախտաբանություն ունեցողներին հայտնաբերելու, հետաքրքրությունները և հակումները պարզելու համար[12]: Տվյալ մեթոդիկաները Հայաստանում տեղայնացվել են և հաջողությամբ կիրառվում են: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ զինծառայողները, որպես կանոն, խուսափում են անձնային հատկությունների ախտորոշման մի քանի հարյուր հարցանի բազմագործոնային թեստերին պատասխանելուց:

Կարծում ենք՝ զինծառայողների մասնագիտական գործունեության վրա ազդող հոգեբանական գործոնների բացահայտման համար պետք է կիրառվեն այնպիսի մեթոդներ ու մեթոդիկաներ, այդ թվում՝ կազմվեն այնպիսի հարցարաններ, որոնք հետազոտվողների համար կլինեն ոչ ժամանակա-

[11] Տես *N. Hakobyan, A. Khachatryan.* Methodological Approaches to the Study of Person's Identity. "Katchar Scientific Yearbook", 2020, N 2, PP. 50–67:

[12] Տես *Վ. Հ. Մարգարյան*, Պաշտպանական ոլորտում կադրերի հոգեբանական մասնագիտական ընտրազատման հարցի շուրջ: «ՀԲ», 2012, հմ. 3:

տար և կունենան հնարավորինս «պարզ ընթացակարգ»: Օրինակ, զրույցի մեթոդի կիրառման բովանդակության մեջ պետք է տեղ գտնեն մասնագիտության, ծառայության վերաբերյալ և անձնական բնույթի այնպիսի հարցեր, որոնց շուրջ զրույցը հնարավորություն կտա պարզելու հետազոտվող զինծառայողի սպասումները, անհանգստությունները, ծառայության հաջողությունների ու անհաջողությունների վերաբերյալ նրա դիրքորոշումները: Զրույցի ժամանակ ուշադրություն է դարձվում բանավոր խոսքի բովանդակության և հուզական դրսևորումների միջև կապին (դիմաշարժումներին, ժեստերին), վերլուծական կարողություններին և այլ հոգեբանական երևույթների: Զրույցով ստացված տեղեկությունները կարելի է ստուգել օրինակ դիտման մեթոդով, որի ժամանակ կատարվում է իրավիճակային դիտում (օրինակ՝ ինչպես է հրամանատարը հաղորդակցվում ենթականների հետ, որքանով է կարողանում հոգեբանական ազդեցություն գործել նրանց վրա, ինչպես է իր անձնակազմին նախապատրաստում առաջադրանքների կատարմանը, ինչպես է ինքը կատարում առաջադրանքները, ունի արդյոք առաջավարին բնորոշ հատկություններ, նախաձեռնող է, թե ոչ, և այլն): Հետազոտությամբ ստացված հոգեբանական տեղեկությունները պետք է հաստատվեն նաև արտակարգ իրավիճակներում՝ կոնկրետ առաջադրանքներ կատարելիս: Դրանք հաստատելու համար կարելի է կիրառել գիտափորձի մեթոդը: Գիտափորձի մեթոդով հաստատվում կամ հերքվում են զինծառայողների անձնային հոգեբանական հատկությունների վերաբերյալ այլ մեթոդներով ստացված տեղեկությունները: Ուստի հոգեբանական հետազոտությամբ ստացված տեղեկությունները ևս պետք է դառնան զինծառայողների համար լրացուցիչ կրթական ծրագրերի կազմման և իրագործման հիմք:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով՝ ժամանակակից պատերազմներում կիրառվող նոր տեխնոլոգիական միջոցները, այդ թվում՝ արհեստական բանականությունը, թեև փոխել են պատերազմի բնույթը, սակայն հաղթանակի ձեռքբերման գործում մարդկային գործոնը շարունակում է ունենալ վճռորոշ նշանակություն:

Զինծառայողների մասնագիտական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է բարձր մասնագիտական գիտելիքներով և գործնականում դրանք կիրառելու կարողություններով ու հմտություններով: Ուստի ԶՈՒ-ում ատեստավորմամբ անձնակազմի մասնագիտական գիտելիքների և հոգեբանական անձնային հատկությունների գնահատման միասնական համակարգի կիրառումը նպաստելու է զինծառայողների ուսուցման և դաստիարակության աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը՝ էապես բարելավելով ռազմական կրթության արդյունքները ու մարդկային ներուժի նպատակային օգտագործումը:

К ВОПРОСУ КОМПЛЕКСНОЙ ОЦЕНКИ В ВОЕННОЙ СФЕРЕ ПРОФЕССИОНАЛЬНЫХ ЗНАНИЙ И ЛИЧНОСТНЫХ КАЧЕСТВ

З. Д. АСАТРЯН, полковник запаса, кандидат психологических наук, доцент, начальник Отдела военно-научного редактирования Научно-издательского центра НИУО МО РА

РЕЗЮМЕ

Постоянная трансформация способов и средств ведения современных войн, а также широкое применение в них высокотехнологичных средств (в том числе – искусственного интеллекта) требуют от военнослужащих перманентного совершенствования профессиональных знаний и развития навыков их применения на практике, развития личностных психологических качеств. Одним из основных путей достижения этой цели является организация качественного профессионального образования и воспитания, что предполагает обязательную оценку накопленных военнослужащим знаний и степени усвоения новых.

Для проверки объема знаний широко примняется система аттестационных экзаменов. В соответствии с этим Правительство РА планирует формирование профессионального личного состава в ВС на основе отбора кадров по результатам аттестации. Для обеспечения объективности целесообразно усовершенствование применяемых во время аттестации процедур и механизмов.

В то же время, даже высокий уровень профессиональных знаний военнослужащих является необходимым, но не достаточным условием достижения успеха в воинской деятельности. Военнослужащие должны обладать также соответствующими личностными качествами, обеспечивающими эффективность применения ими этих знаний на практике (организованностью, решительностью, эмоциональной устойчивостью, инициативностью и т. д.). Предлагается на основе психологических исследований проводить в комплексной аттестации профессиональный психологический отбор личного состава ВС посредством применения профессиограмм и психограмм.

Таким образом, применение в ВС единой системы оценки профессиональных знаний и личностных психологических качеств будет способствовать эффективной организации деятельности по обучению и воспитанию военнослужащих и существенно повысит результаты военного образования и целевого использования человеческого ресурса на основе комплексного анализа личностных качеств и способностей военнослужащих.

ON THE ISSUE OF COMPLEX ASSESSMENT OF PROFESSIONAL KNOWLEDGE AND PERSONALITY TRAITS IN THE MILITARY SPHERE

Z. D. ASATRYAN, Colonel (Ret.), PhD in Psychology, Associate Professor, Head, Defense-Academic Editing Department, Academic-Publishing Center, NDRU, MOD, RA

SUMMARY

The continuous transformation of modern warfare methods and means, as well as the application of high-tech facilities (including Artificial Intelligence) in wars, require permanent improvement of military knowledge and development of skills to apply them in practice, development of personal psychological qualities. One of the main ways of fulfilling this goal is to organize high-quality professional education and training, which assumes mandatory assessment of servicemen's knowledge and degree of mastering new attainments.

The evaluation system is widely used for testing the knowledge. Pursuant to this, the RA Government is planning to shape the Armed Forces professional personnel by result-based personnel selection. To provide objectivity, improving of existing procedures and mechanisms of testing seems appropriate.

At the same time, even the high-level professional knowledge of servicemen is a necessary, yet insufficient condition for achieving success in the military activity. The servicemen must also have corresponding personal qualities, which ensure effectiveness of applying this knowledge in practice (orderliness, decisiveness, emotional resilience, initiative and so on). The article proposes that based on psychological research aptitude screening of the Armed Forces' personnel by means of professiograms and psychograms be also carried out in complex assessment.

Thus, the application of a common system for assessing the professional knowledge and personal psychological qualities will contribute to the efficient organization of activities on educating and training the servicemen, and will significantly improve the performance of the military education and targeted use of human resources, based on the complex analysis of the servicemen's personality traits and abilities.

ՌԱԶՄԱԿԻՐԱՌԱԿԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ ՀՐԵՏԱՆԱՎՈՐ ԿՈՒՐՍԱՆՏՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ*

Բ. Լ. ԵՐԻՑՅԱՆ, պահեստազորի փոխգնդապետ, մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի դասախոս

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մարդու առողջության ամրապնդման կարևոր եղանակներից են ֆիզիկական ակտիվությունը, նպատակային մարզումները: Ընդհանուր առմամբ ֆիզիկական կուլտուրան անհատի բարեկեցության մաս է, նրա կարողությունների դրսևորման աստիճանն ավելացնող էական միջոց: Իսկ զինծառայողի համար ֆիզիկական կարողությունները ոչ միայն մնացյալ ունակությունները իրացնելու, այլև ամենադժվարին պայմաններում հայրենյաց պաշտպանի իր առաքելությունը պատվով կատարելու երաշխիքներից են:

Ֆիզիկական պատրաստումը և, մասնավորապես, դրա մասնագիտակիրառական բաղադրիչը մշտապես կարևորվել են Զինված ուժերում և այլ ուժային կառույցներում՝ համարվելով մասնագիտական պատրաստման հիմնական առարկաներից մեկը[1]:

Հայրենական ռազմաուսումնական հաստատությունները, հավատարիմ լինելով այս ըմբռնմանը, հետևողականորեն զարգացնում են իրենց կուրսանտների ռազմակիրառական շարժողական ընդունակությունները՝ մարզումներով ապահովելով նրանց արագաշարժությունը, դիմացկունությունն ու տոկունությունը, նաև այնպիսի կամային որակներ, ինչպիսիք են վճռականությունը, համառությունը, նպատակասլացությունը և այլն: Բանն այն է, որ ռազմակիրառական վարժությունների բազմաթիվ նպատակային կրկնությունները կոփում ու հմտացնում են նրանց՝ հեշտացնելով ծառայության ընթացքում և ապագա մարտական իրավիճակներում ծագող խնդիրների հաղթահարումը:

Գիտության ու տեխնիկայի՝ հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաների բուռն զարգացման պայմաններում մշակվում են նաև ֆիզիկական

---

* Հոդվածը նախնական տեսքով ներկայացվել է 24.05.2022: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 29.12.2022:

[1] Տես *С. В. Непомнящий.* Средства и методы профессионально-прикладной физической подготовки работников отдельных подразделений МВД СССР. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата педагогических наук. М., 1989; *В. И. Сухоцкий.* Теоретический раздел требования военно-спортивного комплекса. М., 1975; *E. G. Martin.* Muscular strength and muscular symmetry in human beings. “AM. Journal Physiology”, 1978, N 46; *Gotse H. Der.* Achter-test. “Armeesportler”, 1965, N 3 (10):

պատրաստման նոր տարբերակներ՝ հիմնված բաձր տեխնոլոգիաների կիրառման վրա[2]: Նույնպիսի նպատակադրմամբ ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական համալսարանի բոլոր, այդ թվում՝ հրետանային, ֆակուլտետների կուրսանտների ընդգրկմամբ անցկացվեց երկամյա գիտափորձ: Ուսումնասիրվեցին նրանց ռազմակիրառական հմտությունները, որոշվեցին կարևոր շարժողական ընդունակությունները, կառուցվեցին պատրաստվածության գնահատման մոդելային սանդղակներ և կազմվեցին գործնական առաջարկություններ:

ԳԻՏԱՓՈՐՁԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Աշխատանքի ընթացում կատարվել է ֆիզիկական զարգացման աստիճանի, շարժողական ընդունակությունների և ռազմակիրառական հմտությունների չափում, ապա ստացված տվյալների հիման վրա գնահատվել է ֆիզիկական մարզումների արդյունավետությունը, ինչը հնարավորություն է տվել գործընթացը հագեցնելու այնպիսի վարժություններով, որոնք նպաստում են կուրսանտների շարժողական ընդունակությունների աճմանը և ռազմակիրառական հմտությունների բարելավմանը:

Չափումները կատարվել են Մոսկվայի Մարդաբանության գիտահետազոտական ինստիտուտում մշակված մեթոդիկայով, ըստ որի՝ ֆիզիկական զարգացման հիմնական ցուցանիշներ են ընտրվել մարմնի զանգվածը, հասակը (բոյը) և կրծքավանդակի շրջագիծը:

Որպես պրոբլեմի ուսումնասիրության արդյունք՝ ընտրվել են առավել անհրաժեշտ շարժողական ընդունակությունները, որոնք են շարժողական ընդունակությունների Ֆ. Գ. Ղազարյանի՝ դասակարգման մեջ ներառված մկանային ուժը զարգացնող «առավել բազային»՝ սեղմումներ գետնի վրա, ցատկունակությունը զարգացնող «ոչ առավել բազային»՝ վերցատկ տեղից և հեռացատկ տեղից վարժությունները[3] և Հարվարդյան ստեպ թեստը[4] (ՀՍԹ):

Կուրսանտների աշխատունակությունը որոշելու նպատակով անցկացվել է Հարվարդյան ստեպ թեստ, ըստ որի՝ հետազոտվողը հինգ րոպեի ընթացքում րոպեում 30 անգամ հաճախականությամբ բարձրանում և անմիջապես իջնում է 50 սմ բարձրություն ունեցող աթոռից: Վարժությունը ավարտելուց հետո առաջիկա 3 րոպեների ընթացքում կատարվում է 3 չափում, ընդսմին առաջինը՝ 60–90 վ, երկրորդը՝ 120–150 վ, երրորդը՝ 180–210 վ ընդմիջակայքերում: Ստացված երեք արդյունքի հիման վրա հաշվարկվում է կուրսանտի աշխատունակությունը հետևյալ բանաձևով.

[2] Տես *А. С. Родионов*. Информационное обеспечение физической культуры и спорта: информационые технологие в физической подготовке курсантов военного вуза. “Вестник спортивной науки”, 2019 (https://cyberleninka.ru/artikle/n/ informatsion noye - tehnologii-v-fizicheskoy-podgotovka-kursantov-voennogo-vuza/ viewer):

[3] Տես *Ֆ. Գ. Ղազարյան,* Շարժողական ընդունակությունների բանաձևը, մենագրություն: Ե., 2015, էջ 19–20:

[4] Տես “Harvard step Test”. “Physiopedia” (https://www.physio-pedia.com/Harvard_ Step_Test); “Harvard Step Test”. “Topend sports” (https://www.topendsports.com/ testing/tests/step-harvard.htm):

$$ՀՍԹ = \frac{t \times 100}{(f1+f2+f3) \times 2}$$, որտեղ՝

t-ն վարժության տևողությունն է (300 վ),

f1, f2, f3-ը սրտի զարկերի թվերն են համապատասխանաբար 1-ին, 2-րդ և 3-րդ չափումների ժամանակ[5]:

Ուժը որոշելու նպատակով ընտրվել է «սեղմումներ գետնի վրա» վարժությունը, իսկ ցատկունակության համար՝ «վերցատկ տեղից» և «հեռացատկ տեղից» վարժությունները: Վերցատկ տեղից վարժության դեպքում չափումը կատարվել է Աբալակովի գործիքի կիրառմամբ, իսկ հեռացատկ տեղից վարժության (նշագծից ցատկ ցատկափոսի մեջ) դեպքում՝ ցատկի հեռավորության չափմամբ:

Ռազմակիրառական հմտությունները որոշելու համար ընտրվել են 17-րդ՝ ընդհանուր ստուգողական վարժություն միասնական արգելագոտում, 18-րդ՝ հատուկ ստուգողական վարժություն արգելագոտիներում և 21-րդ՝ վազք ստորաբաժանման կազմով արգելագոտու հաղթահարումով վարժությունները[6]:

Այսպես. 17-րդ վարժությունը միասնական արգելագոտում կատարվում է առանց զենքի, տարածությունը 400 մ է, ելման դրությունը՝ խրամատում կանգնած: Ստուգվողը վարժությունը սկսում է նռնակների նետմամբ, ապա դուրս ցատկելով խրամատից, վազում 100 մետր և, շրջանցելով դրոշակը, երկարություն և բարձրություն ցատկելով, մագլցելով, հավասարակշռությունը պահպանելով՝ հաղթահարում տարբեր արգելքներ՝ փոսեր, հորեր, քանդված ու կանգուն պատեր, հորի վրայով գցված գերաններ և այլն[7]:

Ստուգվողը 18-րդ հատուկ ստուգողական վարժությունը արգելագոտիներում կատարում է՝ կրելով ավտոմատ, երկու փամփշտատուփ, պայուսակ և հակագազ: Տարածությունը 400 մ է, ելման դրությունը՝ զրահափոխադրիչի կողային մասում: Ստուգվողը պետք է հնարավորինս արագ ցատկելով ու վազքով հաղթահարի փոսեր, խրամատներ, փլվածքներ, լաբիրինթոս, տեղափոխի 40 կգ-ոց բեռ, թեք դրված տախտակների ու հորերի վրայով գցված գերաններ[8]:

21-րդ՝ վազք ստորաբաժանման կազմով արգելագոտու հաղթահարումով վարժությունը կատարվում է ջոկի, դասակի կազմով, անձնական զենքով և հակագազով: Վարժության կատարման ժամանակ թույլատրվում է փոխօգնություն՝ առանց զենքը, հակագազը և հանդերձանքը միմյանց փոխանցելու: Ժամանակը որոշվում է այն պահով, երբ վերջին զինծառայողը հատում է վերջնագիծը: Ընդհանուր տարածությունը 1100 կամ 3100 մ է, համազգեստը՝ հմ. 4[9]:

---

[5] Տես «Harvard Step Test» (https://testsforsports.com/endurance/harvard-step-test), նաև՝ *Մ. Գ. Աղաջանյան,* Սպորտային բժշկություն, դասագիրք: Ե., 2015 թ., էջ 9–10:

[6] Տես «ՀՀ ԶՈՒ ֆիզիկական պատրաստության ձեռնարկ»: Ե., 2011:

[7] Տես նույն տեղում:

[8] Տես նույն տեղում:

[9] Տես նույն տեղում:

Մեծաթիվ արգելքների առկայությամբ և կրկնություններով «արգելագոտու հաղթահարում» բարդ վարժության յուրացման համար ապագա սպաներ-ից պահանջվում են տարբեր կամային հատկանիշներ՝ համառություն, տոկունություն, վճռականություն, որոնց ձևավորվման համար պահանջվում է երբեմն չորս տարվա համառ աշխատանքի շնորհիվ:

Գնահատման մոդելային սանդղակները կազմելու նպատակով գիտափորձում ներգրավվել են 1-ից 4-րդ կուրսերի բոլոր կուրսանտները: Հետազոտության ծրագիրը ներառել է. ստուգվողների ցուցանիշների չափում, դրանց դասակարգում ըստ հինգբալանի մոդելային սանդղակի և արդյունքների համեմատական վերլուծության: Բոլոր կուրսանտները (ըստ կուրսերի) պատահական եղանակով բաժանվել են երկու խմբի՝ փորձարարական և ստուգողական: Փորձարարական խմբի կուրսանտների հետ ֆիզպատրաստումը կազմակերպվել է մեր մշակած մեթոդիկայով, ստուգողական խմբինը՝ մինչ այդ կիրառվող մեթոդիկայով:

ԳԻՏԱՓՈՐՁԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Գիտափորձում գրանցված տվյալները հաշվարկվել են ըստ կուրսերի և զինվորական մասնագիտության: Ստորև ներկայացված է 2-րդ կուրսի հրետանավոր կուրսանտների ցուցանիշների մոդելային սանդղակը (տես աղ. 1), որտեղ շարժողական ընդունակությունների, ռազմակիրառական հմտությունների և ֆիզիկական զարգացման յուրաքանչյուր ցուցանիշ ունի իր համապատասխան գնահատականը:

Աղյուսակ 1.

2-ՐԴ ԿՈՒՐՍԻ ՀՐԵՏԱՆԱՎՈՐ ԿՈՒՐՍԱՆՏՆԵՐԻ ՄՈԴԵԼԱՅԻՆ ՍԱՆԴՂԱԿ

		Ցուցանիշներ				
		բարձր	միջ. բարձր	միջին	միջ. ցածր	ցածր
Ֆիզիկական զարգացում	հասակ (սմ)	178,8 և բարձր	178,7 – 176.5	176,4 – 172,5	172,4 – 170,6	170,5 և ցածր
	մարմնի զանգված (կգ)	70,6 և բարձր	70,5 – 68.3	68,2 – 64,5	64,4 – 62,2	62,1 և ցածր
	կրծքավանդակի շրջագիծ (սմ)	91,7 և բարձր	91,6 – 89,7	89,6 – 86.3	86,2 – 84,3	84,2 և ցածր
Շարժողական ունակություններ	սեղմումներ գետնի վրա	30,2 և բարձր	30,1 – 28.9	28,8 – 27,2	27,1 - 25.9	25,8 և ցածր
	վերցատկ տեղից (սմ)	52,7 և բարձր	52,6 – 51,1	51,0 – 48,9	48,8- 47.5	47,4 և ցածր
	հեռացատկ տեղից (սմ)	227,9 և բարձր	227,8 – 224.1	224,0 - 217,9	217,8 – 214,1	214,0 և ցածր
	ՀՍԹ	73,6 և բարձր	73,5- 72.3	72,2 - 70,1	70,0- 68,6	68,5 և ցածր

Ռազմակիրառական հմտություններ	Վարժություն 17	148,2 և պակաս	148,3-149,4	149,5 - 151,2	151,3 - 152,4	152,5 և շատ
	Վարժություն 18	200,8 և պակաս	200,9-204,2	204,3 - 209,6	209,7 - 213,0	213,1 և շատ
	Վարժություն 21	270,0 և պակաս	270,1-273,2	273,3-277,8	277,9 - 280,3	280,4 և շատ

Մոդելային սանդղակները հնարավորություն են ընձեռում.

– գնահատելու յուրաքանչյուր կուրսանտի շարժողական ընդունակությունների և ռազմակիրառական հմտությունների մակարդակն ուսման տարբեր փուլերում,
– բացահայտելու անբավարար հմտություններ ունեցող կուրսանտներին և հանձնարարելու նրանց այդ որակների զարգացման միջոցներն ու մեթոդները,
– առանձնացնելու ըստ ռազմակիրառական հմտությունների զարգացման աստիճանի մոտավորապես հավասար պատրաստվածություն ունեցող կուրսանտներին և նրանց միավորելու միևնույն խմբում՝ նրանց մարզման գործընթացը տարբերակելու համար:

Ուսումնասիրելով գիտափորձի ընթացքում ստուգողական և փորձարարական խմբերի կուրսանտների արդյունքները՝ տեսնում ենք, որ ֆիզիկական զարգացման առումով ցուցանիշների գործակիցների տարբերությունը չնչին է կամ առհասարակ չկա, իսկ շարժողական ընդունակությունների ու ռազմակիրառական հմտությունների ցուցանիշների աճը փորձարարական խմբերում ըստ բոլոր նախատեսված վարժությունների զգալիորեն բարձր է ստուգողական խմբերի ցուցաբերած արդյունքներից (տես աղ. 2):

Այսպես. եթե շարժողական ընդունակություններից «հեռացատկ տեղից» վարժության արդյունքներով ստուգողական խմբի *t* գործակիցը = 2,4, իսկ p>5, ապա փորձարարական խմբի համար դրանք համապատասխանաբար 4,9 և 1 են: Դա նշանակում է, որ երկու խմբերի դեպքում էլ դրանց աճման պարագայում փորձարարական խմբի առաջընթացը մեծ է 2,5-ով:

Համեմատելով «վերցատկ տեղից» և «սեղմումներ գետնի վրա» վարժությունների գործակիցները՝ տեսնում ենք, որ եթե ստուգողական խմբի համար *t*=3,1 և փորձարարականինը՝ 7,5, այսինքն՝ առաջին վարժությունից աճը կազմել է 4,4, ապա մյուս վարժությունից ստուգողական խմբի համար *t*=4,7 և փորձարարականի՝ *t*=9,7, այսինքն՝ աճը 5 է, ինչն էլ հավաստում է փորձարարական խմբի ավելի մեծ առաջընթացի փաստը:

Համեմատելով ռազմակիրառական հմտություններն արտացոլող 17-րդ, 18-րդ և 21-րդ վարժությունները՝ տեսնում ենք նույն պատկերը. փորձարարական խմբում, ստուգողականի համեմատությամբ, բարելավումների չափը մեծ է: Այսպես. առաջին վարժության գծով՝ *t*-ն 3,7-ից աճել է 6,9 (տարբերությունը՝ 3,2), երկրորդի գծով՝ *t*-ն 3,5-ից աճել է 11,2 (տարբերությունը՝ 7,7), և երրորդի՝ *t*-ն 4,8-ից մինչև 11,1 (տարբերությունը՝ 6,3):

Աղյուսակ 2

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2-ՐԴ ԿՈՒՐՍԻ ՀՐԵՏԱՆԱՎՈՐ ԿՈՒՐՍԱՆՏՆԵՐԻ

Որակներ	Տվյալներ և հմտություններ	Ժամկետ	Ցուցանիշներ					
			ստուգողական			փորձարարական		
			x± m*	t	P	x± m	t	P
Ֆիզիկական զարգացում	հասակ (սմ)	սկիզբ	172,6/1,1	1,5	<5	172,9/1,13	1,5	<5
		ավարտ	174,7/0,9			174,9/0,9		
	մարմնի զանգված (կգ)	սկիզբ	64,1/0,7	2,1	<5	64,2/0,9	1,9	<5
		ավարտ	66,0/0,5			65,3/0,9		
	կրծքավանդակի շրջագիծ (սմ)	սկիզբ	85,3/0,7	3,1	>1	85,0/0,6	3,7	>1
		ավարտ	88,8/0,8			88,3/0,6		
Շարժողական ընդունակություններ	վերցատկ տեղից (սմ)	սկիզբ	46,2/0,7	3,1	>1	46,0/0,7	7,5	>0,1
		ավարտ	50,4/0,6			54,6/0,9		
	հեռացատկ տեղից (սմ)	սկիզբ	217,1/1,4	2,4	>5	215,2/ 1,06	4,9	>0,1
		ավարտ	220,8/0,9			225,0/1,7		
	սեղմումներ գետնի վրա	սկիզբ	35,1/0,6	4,7	<0,1	34,7/0,8	9,7	>0,1
		ավարտ	40,4/093			46,7/0,96		
	ՀՍԹ (միավ.)	սկիզբ	65,6/0,7	3,8	>1	65,1/0,7	6,8	>0,1
		ավարտ	69,6/0,8			71,8/0,7		
Ռազմակիրառական հմտություններ	վարժություն 17	սկիզբ	153,8/1,3	3,7	>1	150,0/1,2	6,9	>0,1
		ավարտ	147,9/1,1			138,6/1,1		
	վարժություն 18	սկիզբ	208,1/1,2	3,5	>1	208,3/1,2	11,2	>0,1
		ավարտ	202,9/0,9			192,7/0,7		
	վարժություն 21	սկիզբ	281,8/1,4	4,8	>0,1	285,2/1,2	11,1	>0,1
		ավարտ	275,0/1,3			267,1/1,1		

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Զինծառայողների ռազմակիրառական հմտությունների կատարելագործմանը նպատակաուղղված հիմնավոր ֆիզիկական մարզումը, որը կազմակերպվում է նպատակային վարժությունների կիրառմամբ, էականորեն ավելացնում է նրանց շարժունակությունը, արագաշարժությունը, կողմնորոշման արագությունը, դիմացկունությունն ու մյուս արագաուժային կարողությունները, ինչպես նաև կամային հատկությունները:

* Այստեղ x-ը միջին թվաբանական արժեքն է, m-ը՝ շեղումը, t-ն՝ Ստյուդենտի չափանիշի ստանդարտ արժեքները, P-ն արժեքների տարբերության նշանակալիության մակարդակը:

Այդ գործընթացի հաջողությունը մեծապես կախված է մարզումների ընտրված մեթոդաբանությունից ու վարժություններից:

Ըստ այդմ ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան համալսարանում կուրսանտների ֆիզիկական պատրաստման դասընթացի արդյունավետության մեծացման նպատակով կատարվել է երկամյա գիտափորձ՝ ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ: Այդ գիտափորձով հիմնավորվել է կուրսանտների, մասնավորապես՝ ապագա հրետանավորների անհրաժեշտ ընդունակությունների ու ռազմակիրառական հմտությունների արագ բարելավման համար մշակված մեթոդաբանության լիարժեք պիտանիությունը: Ուստի կարծում ենք, որ գիտափորձում կիրառված ծրագրի ներդրումը ՀՀ ՊՆ ռազմաուսումնական հաստատություններում ու զորքերում շոշափելի կերպով կնպաստի ՀՀ Զինված ուժերի անձնակազմի կարողությունների բարելավմանը՝ ի պետս իրենց հայրենանվեր առաքելության:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ РАЗВИТИЯ ВОЕННО-ПРИКЛАДНЫХ НАВЫКОВ НА ПРИМЕРЕ ФИЗИЧЕСКИХ ТРЕНИРОВОК КУРСАНТОВ-АРТИЛЛЕРИСТОВ

Б. Л. ЕРИЦЯН, кандидат педагогических наук, профессор, лектор Военного университета имени В. Саргсяна МО РА

РЕЗЮМЕ

Основательная физическая тренировка, направленная на совершенствование военно-прикладных навыков военнослужащих и организуемая с применением целевых упражнений, развивает мобильность, ловкость, быстроту ориентирования, выносливость и другие скоростно-силовые умения, а также волевые качества личного состава.

Успешность этого процесса в значительной степени зависит от выбора методологии и тренировочных упражнений.

В Военном университете имени В. Саргсяна МО РА в целях повышения эффективности курса физической подготовки курсантов был проведен двухгодичный научный эксперимент с применением современных информационных технологий. Данный научный эксперимент подтвердил всецелую пригодность разработанной методики для быстрого повышения необходимой сноровки и военно-прикладных навыков курсантов, в том числе будущих артиллеристов. Внедрение апробированной программы в военно-образовательных институтах МО РА и войсках в значительной степени будет способствовать повышению сноровки личного состава Вооруженных сил РА в интересах повышения их боевого потенциала и обеспечения обороноспособности государства.

SOME ISSUES OF DEVELOPING MILITARY-APPLIED SKILLS: CASE STUDY OF PHYSICAL TRAINING OF CADET ARTILLERISTS

B. L. YERITSYAN, PhD in Pedagogy, Professor, Lecturer, Vazgen Sargsyan Military University, MOD, RA

SUMMARY

The substantial physical training, aimed at the improvement of servicemen's military-applied skills and organized through the task-oriented physical training, improve personnel's mobility, agility, rapid orientation, endurance and other speed-strength abilities, as well as strong-willed qualities.

Success in this process greatly depends on the chosen training methodology and exercises.

In order to improve the efficiency of the cadet physical preparation course, a 2-year scientific experiment with the use of modern information technologies was carried out in the Vazgen Sargsyan Military University, MOD, RA. This scientific experiment proves the complete appropriateness of the developed methodology for quick improving cadets', including the future artillerists' necessary dexterity and military-applied skills. The implementation of the approbated program into the MOD RA military-educational institutions and troops will significantly contribute to the improvement of the RA Armed Forces personnel dexterity in favor of raising their combat potential and ensuring the national defense capability.

ԷՅՆՇՏԵՅՆԸ ԵՎ ՈՐՈՇ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ*

Ա. Հ. ՄԵԼԻՔՅԱՆ, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի առաջատար գիտաշխատող, ԵՊՀ պրոֆեսոր, «ՀԲ» ՈԳՀ ԳԽԽ անդամ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քսաներորդ դարի առաջին կեսը դարձավ ֆիզիկայի բնագավառում վճռորոշ հայտնագործությունների դարաշրջան, ինչն ստիպեց լիովին վերանայել բնության մասին դասական գիտության պատկերացումները: Որպես այդ վերանայման արդյունք՝ ծնվեցին հարաբերականության տեսությունը և քվանտային տեսությունը: Սույն ակնարկը շարունակում է հանդեսի նախորդ համարներում հրապարակված հոդվածաշարը՝ նվիրված ժամանակակից ռազմական տեխնոլոգիաների զարգացման գործում հիմնարար գիտությունների դերին[1]: Այստեղ մենք կպատմենք այն մասին, թե ինչպես են միջուկային էներգետիկայի և լազերային տեխնոլոգիաների ստեղծմանը նպաստել մեծագույն ֆիզիկոսներից մեկի՝ Ալբերտ էյնշտեյնի աշխատանքները:

1. ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1.1. Հարաբերականության տեսությունը

Հարաբերականության տեսությունը, անկասկած, գիտության գլուխգործոցներից մեկն է: Այն հիմնված է էյնշտեյնի անունը կրող երկու կանխադրույթների վրա:

*1. Վակուումում լույսի արագությունը բոլոր իներցիալ (իներցիական) համակարգերում*** *ունի միևնույն արժեքը:* Այլ կերպ ասած՝ լույսի արագությունը կախված չէ աղբյուրի կամ ընդունիչի արագությունից: Այս կանխադրույթը հնարավորություն է տալիս բացատրելու երկնային մարմինների շարժման բավական նուրբ առանձնահատկությունները:

---

* Հոդվածը նախնական տեսքով ներկայացվել է 11.10.2022: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 15.12.2022:

[1] Տես *Ա. Հ. Մելիքյան,* Ռազմական նպատակներով նանոտեխնոլոգիայի կիրառման որոշ հարցեր: «ՀԲ», 2021, հմ. 4, *նույնի*՝ Ռազմական բժշկության բնագավառում որոշ էլեկտրամագնիսական երևույթների կիրառության վերաբերյալ: «ՀԲ», 2022, հմ. 2:

** Իներցիալ համակարգ կոչվում են հաշվարկման այն համակարգերը, որոնցում կատարվում է Նյուտոնի առաջին օրենքը, այսինքն՝ ազատ մարմինները շարժվում են ուղղագիծ և հավասարաչափ կամ գտնվում են դադարի վիճակում:

2. Բնության բոլոր երևույթները տարբեր իներցիալ համակարգերում միատեսակ են ընթանում: Այս կանխադրույթի իմաստը հետևյալն է: Եթե մենք գտնվում ենք որոշակի իներցիալ համակարգում և չունենք շրջապատի հետ տեղեկույթ փոխանակելու հնարավորություն, ապա չենք կարող որոշել մեր համակարգի շարժման վիճակը: Օրինակ՝ եթե մենք գտնվում ենք հաստատուն արագությամբ թռչող ինքնաթիռում, որի լուսամուտները փակ են, ապա ոչ մի փորձով չենք կարող որոշել ինքնաթիռի արագությունը: Սույն կանխադրույթը վերացնում է այն հակասությունը, որը գոյություն ուներ առաջին կանխադրույթի և էլեկտրադինամիկայի՝ Մաքսվելի անունը կրող գլխավոր հավասարումների միջև:

Զարմանալի է, բայց այս երկու պնդումները, որոնք չեն արտահայտվում որևէ բանաձևով և ձևակերպված են առանց դպրոցական ֆիզիկայի բառապաշարի սահմաններից դուրս գալու՝ պարզ բառերով, ունեն շատ կարևոր հետևություններ: Մասնավորապես՝ 1-ին կանխադրույթի հիման վրա կարելի է ապացուցել, որ ոչ մի ազդանշան չի կարող տարածվել լույսի արագությունից մեծ արագությամբ, կամ ոչ մի մարմին չի կարող շարժվել լույսի արագությունը գերազանցող արագությամբ: Բոլոր հետևությունների քննարկումը մեր նպատակը չէ, այդ իսկ պատճառով կենտրոնանանք դրանցից մեկի վրա:

1.2. Նյութի զանգվածի և էներգիայի կապը

Բնական գիտություններում գոյություն ունի դատողության մի հայտնի հնար, որն անվանում են «մտովի գիտափորձ» և որը գիտական ճանաչողության մեթոդ է[2]: Դրա էությունն այն է, որ մշակվում է որոշակի ֆիզիկական մոդել, որի վարքը դիտարկվում է տարբեր երևակայական պայմաններում: Այդ հնարքը կիրառել են Գալիլեյը, Հյույգենսը, Կառնոն, Կիրխհոֆը, էյնշտեյնը, Շրյոդինգերը և ուրիշներ:

Զարծարծելով էյնշտեյնի դիտարկած մոդելի մանրամասների հարցը՝ ասենք միայն, որ բավական նուրբ դատողությունների շնորհիվ նա արտածել է իր հռչակավոր $E=mc^2$ բանաձևը, որտեղ E-ն համակարգի ներքին էներգիան է, m-ը՝ համակարգի զանգվածը, c-ն՝ վակուումում լույսի արագությունը: Հիշեցնենք, որ ներքին էներգիան համակարգի մասնիկների կինետիկ էներգիաների և միմյանց հետ նրանց փոխազդեցության պոտենցիալ էներգիաների գումարն է այն դեպքում, երբ համակարգի զանգվածների կենտրոնը անշարժ է և իմպուլսի մոմենտը զանգվածների կենտրոնի նկատմամբ հավասար է զրոյի: Ըստ էության, էյնշտեյնի տվյալ բանաձևը հռչակում է նյութի զանգվածի և էներգիայի համարժեքությունը:

Որպեսզի հետագա շարադրանքն ավելի ընկալելի լինի, ներկայացնենք ատոմի միջուկի կառուցվածքի մասին ամենակարևոր փաստերը:

Ատոմի միջուկը 1911 թ. հայտնաբերվել է էռնեստ Ռեզերֆորդի կատարած գիտափորձերով: Մի քանի տասնամյակների ընթացքում ֆիզիկոս-

[2] Մտովի գիտափորձի մասին հանգամանորեն տես, օրինակ, *В. С. Стёпин. В. Л. Абушенко. Ф. Н. Голдберг.* Эксперимент мысленный. «Гуманитарный портал», 18.11.2022 (https://gtmarket.ru/concepts/7006):

ներին հաջողվել է պարզել միջուկի կառուցվածքի ամենակարևոր առանձնահատկությունները: Այսպես. միջուկի շառավիղը մոտավորապես 10^4 անգամ փոքր է ատոմի շառավղից, ընդսմին միջուկն ինքը կազմված է շատ փոքր մասնիկներից՝ պրոտոններից և նեյտրոններից: Պրոտոնի և նեյտրոնի զանգվածները իրար շատ մոտ են և կազմում են էլեկտրոնի մոտավորապես 1840 զանգված: Բացի այդ, պրոտոնը կրում է դրական տարրական էլեկտրական լիցք, իսկ նեյտրոնը չեզոք մասնիկ է: Այս երկու մասնիկներին շնորհվել է ընդհանուր անվանում՝ նուկլոն[3]:

Այստեղ անմիջապես հարց է ծագում, թե ինչպես են նույնանուն լիցք կրող մասնիկներն իրար հետ «լեզու գտնում», քանի որ դրանց միջև գործում է վանողական ուժ: Որպես այս հարցի պատասխան՝ առաջ քաշվեց միջուկային ուժերի գաղափարը, որը հաստատվեց բազմաթիվ փորձերով: Երկու նուկլոնների միջև ազդում է մի ուժ, որը շատ փոքր միջմասնիկային հեռավորությունների դեպքում ունի վանողական բնույթ, իսկ 10^{-12} սմ և ավելի հեռավորությունների դեպքում դառնում է կուլոնյան ուժից մոտ 100 անգամ մեծ ձգողական ուժ: Ընդ որում, պրոտոն-պրոտոն, պրոտոն-նեյտրոն և նեյտրոն-նեյտրոն զույգերում փոխազդեցությունը նույնն է: Պարզագույն միջուկը ջրածնի ատոմի միջուկն է, որը բաղկացած է միայն մեկ պրոտոնից: Հաջորդ տարրերի միջուկներում նեյտրոնների թիվը մոտավորապես հավասար է պրոտոնների թվին կամ գերազանցում է այն: Սակայն, ինչպես կարելի է նկատել ուսումնասիրելով Մենդելեևի աղյուսակը, պրոտոնների թվի աճման համեմատ աճում է նաև նեյտրոնների և պրոտոնների թվերի տարբերությունը: Դա բացատրվում է այսպես: Կուլոնյան ուժը հեռազդու ուժ է, և յուրաքանչյուր պրոտոն զգում է միջուկի բոլոր պրոտոնների կուլոնյան վանողականության ազդեցությունը: Սակայն միջուկային ուժի ազդեցությունը էական է միայն փոքր հեռավորությունների դեպքում, և այդ պատճառով յուրաքանչյուր նուկլոն զգում է միայն թվով 5-6 մերձավոր հարևանների ձգողականությունը: Որպեսզի միջուկն այդ վանողական ուժերի ազդեցությամբ չքայքայվի, ձգողական ուժը պետք է գերակշռի վանողականին, իսկ դրա համար անհրաժեշտ է, որ միջուկի կազմում նեյտրոնները պրոտոններից շատ լինեն. ծանր տարրերի միջուկներում նեյտրոնների թիվը արդեն մոտ մեկ և կես անգամ մեծ է պրոտոնների թվից:

Այժմ անցնենք ամենակարևոր փաստի քննարկմանը: Պարզվում է, որ միջուկի զանգվածը փոքր է այն կազմող նուկլոնների զանգվածների գումարից: Հենց այստեղ է, որ էյնշտեյնի բանաձևն ասում է իր ծանրակշիռ խոսքը՝ բացատրելով այդ տարբերությունը: Սակայն այդ խոսքը ճիշտ ընկալելու համար պետք է ընթերցողին հիշեցնել պոտենցիալ էներգիայի մեկ կարևոր հատկություն. ձգողականության պոտենցիալ էներգիան բացասական է, իսկ վանողականության՝ դրական[4]: Այժմ միջուկի էներգիան նշագրենք E_n, զանգվածը՝ M, մեկ նուկլոնի զանգվածը միջուկում՝ m, նուկլոնների թիվը՝ A:

[3] Ատոմի և նրա միջուկի կառուցվածքի մասին հանգամանորեն տես *Մ. Борн.* Атомная физика. М., 1965:

Ունենք՝ $M < Am$, կամ՝ $E_n < Amc^2$: $Am - M \equiv \Delta M$ դրական մեծությունը կոչվում է միջուկի զանգվածի արատ:

Այժմ հարաբերականության տեսության ոգով մեկնաբանենք $E_n < Amc^2$ անհավասարությունը՝ հիմնվելով էյնշտեյնի բանաձևի վրա: E_n-ը, ինչպես ասվեց վերևում, համակարգի մասնիկների կինետիկ էներգիաների և միմյանց հետ փոխազդեցության պոտենցիալ էներգիաների գումարն է: Ընդ որում, կուլոնյան փոխազդեցության պոտենցիալ էներգիան մի քանի կարգով փոքր է միջուկային փոխազդեցության պոտենցիալ էներգիայից, որը, ինչպես շեշտվեց, բացասական է: Դա է պատճառը, որ միջուկի զանգվածը փոքր է նրա ազատ վիճակում եղած նուկլոնների գումարային զանգվածից:

$\Delta Mc^2 \equiv E$ մեծությունը կոչվում է միջուկի կապի էներգիա, որի ֆիզիկական իմաստը շատ պարզ է. դա այն աշխատանքն է, որը պահանջվում է միջուկը առանձին նուկլոնների տրոհելու համար: Իսկ $E/A \equiv \varepsilon$ մեծությունը կոչվում է միջուկի կապի տեսակարար էներգիա, կամ կապի՝ մեկ նուկլոնին հասանելիք էներգիա:



Նկ. 1. Միջուկի կապի տեսակարար էներգիայի կախումը նուկլոնների թվից

Նկ. 1-ում պատկերված է տեսակարար կապի էներգիայի կախումը նուկլոնների թվից: Կախումն ունի մաքսիմում $A=58$ կետում, որը համապատասխանում է երկաթի միջուկին: Կապի էներգիայի արժեքները տրված են էլեկտրոն-Վոլտ (էՎ) միավորով, ընդ որում՝ 1 էՎ=1,6·10^{-19}Ջ: Համեմատության համար ասենք, որ կապի ամենամեծ էներգիայով օժտված մոլեկուլի համար այն կազմում է ընդամենը 6 էՎ, ինչը անհամեմատ փոքր է երկաթի միջուկի կապի էներգայից, որը հավասար է 8 էՎ-ի: Տեսնում ենք, որ ատոմի միջուկում կուտակված է հսկայական էներգիա, որի օգտագործման համար կառուցվում է միջուկային ռեակտոր կոչվող հատուկ սարքավորանքը:

Չխորանալով տեխնիկական մանրամասների մեջ՝ բացատրենք միջուկային էներգիայի օգտագործման ֆիզիկական սկզբունքները:

Հայտնի է, որ միջուկների մի զգալի մասը ոչ կայուն է, այսինքն՝ տրոհվում է՝ վերածվելով այլ միջուկների, որոշ դեպքերում էլ բեկորների թվում կարող են լինել նաև պրոտոններ և նեյտրոններ:

Դիտարկենք պարզագույն տարբերակը, երբ A_1 նուկլոններից բաղկացած միջուկը տրոհվում է երկու այլ միջուկների, որոնց նուկլոնների թվերը կլինեն, համապատասխանաբար, A_2 և A_3: Սկզբունքային դեր է խաղում այդ միջուկների ընտրությունը նկ. 1-ում: Անհրաժեշտ է, որ երեք միջուկներն էլ լինեն այդ գրաֆիկի աջ թևում, որտեղ կապի տեսակարար էներգիան նվազում է նուկլոնների թվի աճմանը զուգընթաց: Այդ պրոցեսի նկատմամբ կիրարկենք էներգիայի պահպանման օրենքը: Սկզբնական վիճակի էներգիան կլինի $A_1(mc^2 - \varepsilon_1)$, իսկ վերջնական վիճակինը՝ $A_2(mc^2 - \varepsilon_2) + A_3(mc^2 - \varepsilon_3)$, ընդ որում՝ $A_1 = A_2 + A_3$: Այժմ գտնենք այդ էներգիաների տարբերությունը՝ $\Delta E = A_1(mc^2 - \varepsilon_1) - A_2(mc^2 - \varepsilon_2) - A_3(mc^2 - \varepsilon_3) = A_2\varepsilon_2 + A_3\varepsilon_3 - A_1\varepsilon_1$, կամ նուկլոնների թվի պահպանման հաշվառմամբ՝

$$\Delta E = A_2(\varepsilon_1 - \varepsilon_2) + A_3(\varepsilon_3 - \varepsilon_1) > 0:$$

Ո՞ր է կորչում էներգիայի ավելցուկը: Այն չի կորչում, այլ վերափոխվում է բեկորների կինետիկ էներգիայի, որը մեկ այլ սարքի միջոցով վերածվում է ջերմության: Բերենք կոնկրետ թվեր: Կիրառական նշանակություն ունեցող ամենահայտնի ռեակցիան ուրանի միջուկի տրոհման ռեակցիան է: Մեկ կիլոգրամ ուրանի տրոհման հետևանքով անջատվող էներգիան (բեկորների թվում կան նաև նեյտրոններ) 2 500 000 անգամ մեծ է 1 կիլոգրամ ածխի այրման ժամանակ անջատվող էներգիայից[4]: Թվերը, անկասկած, շատ տպավորիչ են: Պատկերը ամբողջացնելու համար նշենք նաև, որ միջուկի բեկորները, բախվելով հարևան միջուկների հետ, խթանում են նաև դրանց տրոհումը, և այդ պրոցեսի շարունակականությունը առաջացնում է այսպես կոչված շղթայական ռեակցիա: Այն կարող է հանգեցնել գերհզոր պայթյունի, որի հետևանքները մարդկությունն զգացել է Ճապոնական Հիրոսիմա և Նագասակի քաղաքների ամերիկյան ռմբակոծության օրինակով: Սակայն շղթայական ռեակցիան կարելի է դարձնել կառավարելի և անջատվող էներգիան վերածել էլեկտրական հոսանքի էներգիայի:

Բացի տրոհման ռեակցիաներից, էներգիա է անջատվում նաև համադրման (սինթեզի) ռեակցիաներում: Եթե նկ. 1-ում պատկերված գրաֆիկի ձախ թևում գտնվող երկու միջուկներ մոտենան իրար, ապա հնարավոր է դրանց միացումը, ինչը անվանում են համադրման ռեակցիա, որի ժամանակ առաջանում է ավելի ծանր միջուկ: Սակայն հնարավոր է նաև այնպիսի միավորում, որի դեպքում, բացի այլ միջուկներից, ծնվեն պրոտոններ կամ նեյտրոններ: Այդպիսի ռեակցիայի իրագործումը ծայրաստիճան բարդ

[4] Տես *Ю. М. Широков, Н. П. Юдин.* Ядерная физика. М., 1989:

խնդիր է: Բանն այն է, որ սկզբնական միջուկներն իրար մոտեցնելու համար պետք է հաղթահարել դրանց միջև ազդող կուլոնյան վանողականության ուժը: Մյուս բարդությունը կապված է համադրման ռեակցիաների կառավարելիության խնդրի լուծման դժվարությունների հետ: Այնուամենայնիվ, այդ դժվարությունների հաղթահարման ուղղությամբ կատարվող աշխատանքները շարունակվում են, քանի որ համադրման ռեակցիան ունի մի կարևոր առանձնահատկություն. դրան մասնակցում են շատ թեթև միջուկներ, ի տարբերություն տրոհման ռեակցիաներից, որոնց մասնակից միջուկները բաղկացած են ավելի քան 200 նուկլոններից:

Հարկ է նշել, որ էյնշտեյնը խաղաղասեր մարդ էր, և միջուկային զենքի օգտագործման վերաբերյալ նրա կարծիքը խիստ բացասական էր, ինչը հայտնի է նրա հրապարակային ելույթներից: Նա իր ստորագրությունն է դրել մի խումբ գիտնականների՝ ԱՄՆ-ի Նախագահ Ֆ. Ռուզվելտին ուղղված նամակ-բողոքի տակ: Իսկ ռազմական նպատակով այդ ռեակցիայի՝ միջուկային զենքի գործածությունից հետո, որը պատմության մեջ առաջին ու բարեբախտաբար վերջին դեպքն էր, նա մի նամակում այդ զենքն անվանել է «մարդկության համար ահավոր սպառնալիք»[5]:

2. ՃԱՌԱԳԱՅԹՄԱՆ ՔՎԱՆՏԱՅԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԼԱԶԵՐԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ

Ճառագայթման քվանտային տեսության (ՃՔՏ) հիմքում դրված են նյութի և լույսի մասին լիովին նոր պատկերացումները, որոնք մշակել են առաջին հերթին Ա. էյնշտեյնը, Մ. Պլանկը, Ն. Բորը և է. Շրյոդինգերը:

Ջերմային ճառագայթման առանձնահատկությունները բացատրելու համար Մաքս Պլանկն առաջ է քաշել մի զարմանալի վարկած, որի բովանդակությունը այսպիսին է. ներդաշնակ տատանակի էներգիան կարող է ընդունել միայն ընդհատուն (դիսկրետ) արժեքներ, որոնք կարելի է արտահայտել հետևյալ բանաձևով՝

$$E_n = n\varepsilon,$$

որտեղ՝ E_n-ը էներգիան է, n-ը ամբողջ թիվ է կամ զրո, ε-ը հաստատուն է, որը բնութագրում է տատանակը և համեմատական է դրա տատանումների հաճախականությանը:

Այս բանաձևից և էներգիայի պահպանման օրենքից հետևում է, որ տատանակը կարող է լույս կլանել կամ արձակել միայն էներգիայի որոշակի չափաբաժիններով:

Հետագայում այդ գաղափարն ընդհանրացրել է Նիլս Բորը, որը դրա հիման վրա մշակել է ջրածնի ատոմի առաջին տեսությունը, իսկ ավելի ուշ էրվին Շրյոդինգերն ստացել է այն հավասարումը, որի լուծմամբ հնարավոր է գտնել կամայական պոտենցիալ դաշտում շարժվող մասնիկի էներգիական

[5] Տես *Ф. Гернек.* Альберт Эйнштейн. Жизнь во имя истины, гуманизма и мира. М., 1966:

սպեկտրը: Շեշտենք նաև, որ այդ հավասարման լուծումները մաթեմատիկորեն համընկնում են ալիքային շարժումը նկարագրող բանաձևերի հետ:

Ալբերտ Էյնշտեյնը ճառագայթման քվանտային տեսության մեջ ներմուծել է երկու հիմնարար գաղափար: Առաջինը կապված է ֆոտոէֆեկտին[4] վերաբերող փորձարարական արդյունքների հետ, որոնք դասական էլեկտրադինամիկայի տեսակետից անհասկանալի էին: Էյնշտեյնը ենթադրել է, որ լույսը ոչ միայն առաքվում և կլանվում է փոքր չափաբաժիններով, այլև ընդհանրապես գոյություն ունի որպես մասնիկների հոսք: Այդ մասնիկներն ստացել են «ֆոտոն» անվանումը: Այս ծայրաստիճան համարձակ ենթադրությունը հնարավորություն է տալիս մեկնաբանելու ֆոտոէֆեկտի բոլոր առանձնահատկությունները, ինչի համար Էյնշտեյնն արժանացել է Նոբելյան մրցանակի: Ըստ Էյնշտեյնի՝ ֆոտոնն օժտված է $\hbar\omega$ էներգիայով, որտեղ $\hbar$-ը Պլանկի հաստատունն է, ω-ն՝ լուսային ալիքի հաճախականությունը: Հետագայում Արթուր Քոմպտոնի կատարած գիտափորձերում հաստատվել է նաև ֆոտոնի իմպուլսի գոյությունը: Բացի այդ, ֆոտոնն օժտված է սպինով՝ իմպուլսի սեփական մոմենտով, իսկ նրա դադարի զանգվածը հավասար է զրոյի: Այսպիսով՝ ֆոտոնը դարձել է լիիրավ մասնիկ:

Այժմ խոսենք այն մասին, թե որն էր Էյնշտեյնի համարձակությունը, երբ նա առաջ քաշեց լույսի մասնիկային բնույթի գաղափարը: Բանն այն է, որ օպտիկայի ամենակարևոր հասկացություններից մեկը՝ ալիքների ինտերֆերենցիան, դառնում էր անմեկնելի, քանի որ ինտերֆերենցիան զուտ ալիքային երևույթ է, և շատ դժվար է պատկերացնել մասնիկների ինտերֆերենցիան: Լույսի ինտերֆերենցիան՝ որպես քվանտային երևույթ, վերջնականապես մեկնաբանվեց միայն էլեկտրամագնիսական դաշտի քվանտային տեսության շնորհիվ:

Էյնշտեյնի երկրորդ հիմնարար գաղափարը անմիջականորեն տանում է դեպի լազերային տեխնոլոգիաներ: Այս պնդումն ավելի պարզ դարձնելու համար նշենք, որ Պլանկը 1900 թ. ներկայացրել էր ջերմային ճառագայթման սպեկտրի բանաձևը, որը խարսխել էր իր վարկածի վրա, և որի արտածման ժամանակ նա կիրառել էր թերմոդինամիկայի երկրորդ օրենքը[*]: Այնուհետև Մաքս Բոռնը կատարելագործել է Պլանկի բաշխման բանաձևի արտածումը՝ այն դարձնելով ներքուստ ավելի ինքնահամաձայնեցված: Էյնշտեյնը 1916 թ. հրապարակած հոդվածում[6] դիտարկել է մի մոդելային համակարգ՝ բաղկացած ընդամենը երկու վիճակ ունեցող միատեսակ ատոմներից և ճառագայթման դաշտից: Վերջինիս սպեկտրը պարունակում է բոլոր հաճախականությունները, սակայն յուրաքանչյուր ատոմ փոխազդում է միայն որո-

[*] Թերմոդինամիկայի երկրորդ օրենքը սահմանում է էնտրոպիայի՝ որպես թերմոդինամիկական համակարգի վիճակի ֆունկցիայի գոյությունը և մտցնում է բացարձակ թերմոդինամիկական ջերմաստիճանի հասկացությունը:

[6] Տես *Альберт Эйнштейн.* К квантовой теории изучения. «Собрание научных трудов», т. 3: «Работы по кинетической теории, теории излучения и основам квантовой механики 1901-1955». М., 1966, сс. 393–406:

շակի հաճախականությամբ մեկ ալիքի հետ: Փաստորեն, էյնշտեյնն իր մոդելում կիրառել է Նիլս Բորի կանխադրույթները, որոնց ձևակերպումը մենք կբերենք հիշեցման կարգով:

1. Ատոմը կարող է անորոշ երկար ժամանակ գտնվել միայն այսպես կոչված ստացիոնար վիճակներում: Այլ վիճակներ ատոմի համար գոյություն չունեն:
2. Ատոմը կարող է անցում կատարել մի վիճակից մեկ այլ վիճակի՝ արձակելով կամ կլանելով մեկ ֆոտոն: Այդ պրոցեսում պետք է տեղի ունենա էներգիայի պահպանման օրենքը, այն է՝

$$E_m = E_n + \hbar\omega, \quad E_n + \hbar\omega = E_m, \quad E_m > E_n, \qquad (1)$$

որտեղ E_m-ն ու E_n-ն՝ ստացիոնար վիճակների էներգիաներն են, $\hbar\omega$-ն՝ ֆոտոնի էներգիան:

Այստեղ հավասարումների ձախ կողմերում ներկայացված են համակարգի սկզբնական վիճակները, աջ կողմերում՝ վերջնական վիճակները: Պարզ է, որ առաջին հավասարումը վերաբերում է ճառագայթման պրոցեսին, երկրորդը՝ կլանման: Ըստ Բորի՝ ատոմը փոխազդում է միայն այն ֆոտոնների հետ, որոնց համար բավարարվում են բերված առնչությունները: Նշենք նաև, որ ամենացածր էներգիայով վիճակում գտնվող ատոմը կարող է այնտեղ մնալ անվերջ երկար ժամանակ, եթե շրջակայքում չհայտնվի կլանման պայմանին բավարարող ֆոտոն:

Այնուհետև էյնշտեյնը կիրառել է այսպես կոչված կինետիկական հավասարումների մեթոդը, որը հիմնված է հետևյալ դատողությունների վրա: Նշանակենք E_1 էներգիայով վիճակում գտնվող ատոմների թիվը N_1, իսկ E_2 էներգիայով վիճակում՝ N_2: Այդ թվերը ժամանակի ընթացքում փոփոխվում են էներգիայի կլանման և առաքման հետևանքով: Բնական է, որ կլանման հավանականությունը պետք է համեմատական լինի ճառագայթման էներգիայի սպեկտրալ խտությանը, որը սահմանվում է որպես միավոր ծավալում և հաճախականությունների միավոր ընդմիջակայքում պարունակվող էներգիա: Սակայն առաքման պրոցեսի համար էյնշտեյնը դիտարկել է երկու հնարավորություն: Բանն այն է, որ եթե ատոմը գտնվում է E_2 վիճակում և ճառագայթման դաշտը բացակայում է, ատոմը, ըստ Բորի երկրորդ կանխադրույթի, կճառագայթի ֆոտոն՝ անցում կատարելով E_1 վիճակի: Այդ պրոցեսը կոչվում է ինքնաբերական (սպոնտան) ճառագայթում: Բացի այդ, ատոմը կարող է ֆոտոն ճառագայթել արտաքին դաշտի ազդեցությամբ: Այդպիսի պրոցեսը կոչվում է ստիպողական ճառագայթում, և դրա հավանականությունը համեմատական է արտաքին դաշտի էներգիայի սպեկտրալ խտությանը: Ինքնաբերական և ստիպողական ճառագայթումների այս տարանջատումը վճռական դեր է խաղացել օպտիկայի հետագա զարգացման գործում: Դրա շնորհիվ ծնվել է օպտիկայի հսկայական կիրառական նշանակություն ունեցող մի նոր ուղղություն, որը կոչվում է *ոչ գծային օպտիկա*: Եվ, վերջապես, դրանով սկիզբ է դրվել անցյալ դարի վաթսունական թվականներին լազերային տեխնոլոգիաների բուռն զարգացմանը, որը շարունակվում է մինչ օրս:

Բերված հասկացությունների օգնությամբ դժվար չէ էյնշտեյնի մոդելի համար դուրս բերել հավասարակշռության պայմանը, որի իմաստը հետևյալն է: Ճառագայթման այն էներգիան, որը միավոր ժամանակում կլանել են ատոմները, հավասար է միավոր ժամանակում առաքվող ֆոտոնների էներգիային: Դուրս գրենք այդ պայմանը՝ նկատի ունենալով, որ կլանման հավանականությունը համեմատական է նաև կլանող ատոմների թվին, ինչպես և ճառագայթման հավանականությանը: Բացի այդ, հավասարակշռության վիճակում ատոմները պետք է ենթարկվեն Բոլցմանի բաշխմանը, այն է՝ E_1 վիճակում գտնվող ատոմների թիվը պետք է համեմատական լինի $\exp(-E_1/kT)$-ի, որտեղ *k*-ն Բոլցմանի հաստատունն է, *T*-ն՝ համակարգում հաստատված ջերմաստիճանը: Նույնը կարելի է ասել նաև E_2 վիճակի համար.

$$B_{12}N_1u(\omega) = (B_{21}u(\omega) + A_{21})N_2 \;\rightarrow\; B_{12}e^{\hbar\omega/kT}u(\omega) = \\ = B_{21}u(\omega)+A_{21}: \qquad (2)$$

Այստեղ A_{21}-ը և B_{12}-ը կոչվում են էյնշտեյնի գործակիցներ, համապատասխանաբար, ինքնաբերական և ստիպողական ճառագայթումների համար, իսկ $u(\omega)$ մեծությունը ճառագայթման դաշտի էներգիայի սպեկտրալ խտությունն է: Բացի այդ, հաշվի է առնված նաև, որ $E_2 - E_1 = \hbar\omega$:

Փորձից հայտնի է, որ երբ ջերմաստիճանը անվերջ աճում է, անվերջության է ձգտում նաև էներգիայի սպեկտրալ խտությունը: Ուստի (2) հավասարումից ստանում ենք, որ $B_{12} = B_{21}$, և՝

$$u(\omega) = \frac{A_{21}/B_{21}}{exp(\hbar\omega/kT)-1}: \qquad (3)$$

Համարիչում գրված հարաբերությունը կարելի է գտնել, եթե նկատի ունենանք, որ բարձր ջերմաստիճաններում քվանտային հատկությունների դրսևորումը թուլանում է, և $u(\omega)$-ի համար կստանանք դասական ֆիզիկայից բխող արտահայտություն:

Այժմ պարզենք ստիպողական ճառագայթման դերը: Պատկերացնենք, որ փակ անոթում ունենք որոշակի թվով ատոմներ E_2 վիճակում, իսկ ֆոտոններ չկան: Ընդ որում, յուրաքանչյուր ատոմ կարող է առաքել մեկ ֆոտոն՝ անոթում ստեղծելով ճառագայթման դաշտ, որն ինքն էլ կարող է առաջացնել ստիպողական առաքում: Ճառագայթման հաջորդ պրոցեսն արդեն կլինի ստիպողական և ինքնաբերական պրոցեսների վրադրում, որի հետևանքով անոթում ֆոտոնների թիվը կավելանա ևս մեկով: Շարունակելով այդ շղթան՝ մենք կտեսնենք, որ դաշտի էներգիայի սպեկտրալ խտությունը անընդհատ աճում է, հետևաբար՝ ստիպողական առաքման պրոցեսները կդառնան ավելի հաճախակի, իսկ ինքնաբերական առաքումը տեղի կունենա նույն արագությամբ: Եթե անոթի պատերից մեկում բացենք պատուհան, այնտեղից դուրս կճայթի հզոր լուսային իմպուլս: Սա է լազերի աշխատանքի հիմնական ֆիզիկական սկզբունքը[7]:

[7] Լազերների աշխատանքի սկզբունքի մասին ավելի հանգամանորեն տես, օրինակ,

Մեծ էներգիայով լուսային փնջեր ստանալու համար ժամանակակից լազերների հնարավորությունները բավական տպավորիչ են: Անցյալ դարի վերջում հաջողվել է ստանալ կարճատև լուսային իմպուլսներ, որոնցում էլեկտրական դաշտի լարվածությունը գերազանցել է ատոմի մեջ գտնվող էլեկտրոնի վրա միջուկի ազդեցության դաշտը: Կան լազերներ, որոնց արձակած լույսի հաճախականությունների սպեկտրն այնքան նեղ է, որ ծառայում է որպես ժամանակի չափանմուշ: Հայտնի է նաև լազերների կիրառումը ռազմական բնագավառում: Դրանք տեղ են գտել նշանառվական ու հեռաչափական սարքերում, կապի և ուղղորդիչ համակարգերում, կիրառվում են հակառակորդի ՍՈՏ օպտիկական համակարգերը խոցելու համար, շարունակվում են աշխատանքները լազերային զենքի զարգացման ուղղությամբ:

Վերադառնալով էյնշտեյնի թեմային՝ ասենք նաև, որ նա քվանտային տեսության զարգացման առաջին փուլում հիացմունքով է ընդունել նոր ֆիզիկական գաղափարները: Սակայն խիստ դեմ է եղել այդ տեսության հիմնադրույթներից մեկին, որը հռչակում էր փորձարարական արդյունքները մեկնաբանելու համար հավանականության գաղափարի ներմուծման անհրաժեշտությունը: Այնուամենայնիվ, էյնշտեյնի դերը ինչպես լույսի ճառագայթման տեսության կայացման գործում, այնպես էլ դրա հսկայական կիրառական ներուժը բացահայտելու գործում հիրավի անգնահատելի է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Պատմական գիտության ամենահետաքրքիր թեմաներից է անհատի դերը պատմության մեջ: Որպես կանոն, քննարկվում է մեծ զորավարների և ականավոր քաղաքական գործիչների գործունեությունը: Էյնշտեյնը իր ամբողջ կյանքը նվիրել էր գիտությանը, և ֆիզիկայում նրա ներդրումը այնպիսին էր, որ անդրադարձավ պետությունների հարաբերությունների վրա: Բանն այն է, որ այդ հարաբերություններում ամենակարևոր գործոնը ուժն է, կամ զենքը: Սակայն էյնշտեյնն իրեն դրսևորեց նաև որպես մեծ քաղաքացի, որը մշտապես հրապարակավ հայտնում էր իր կարծիքը այս կամ այն քաղաքական հարցի վերաբերյալ: Այսպես, 1933 թ, նա հրաժարվեց Գերմանիայի քաղաքացիությունից՝ տեսնելով գերմանացի ազգայնամոլների հանցագործությունները: Միևնույն ժամանակ, նա հրաժարվեց նաև Պրուսիայի և Բավարիայի ակադեմիաների անդամությունից և տեղափոխվեց ԱՄՆ, որտեղ նրան ընդունեցին մեծ պատվով: Մինչ այդ էլ էյնշտեյնը մեծ հարգանք էր վայելում ԱՄՆ-ում, ինչի վկայություններից է 1916 թ. «Նյու-Յորք թայմսում» հարաբերականության ընդհանուր տեսության մասին նրա դասախոսությունների հրապարակումը:

Էյնշտեյնին լրջորեն անհանգստացնում էին միջուկային զենք ստեղծելու գերմանացի ֆիզիկոսների փորձերը: Նրա հեղինակությունը ամբողջ աշխարհում անվիճելի էր: 1952 թ. Իսրայելի վարչապետ Դավիդ Բեն Հու-

А. Л. Микаэлян, М. Л. Тер-Микаелян, Ю. Г. Турков. Оптические генераторы на твердом теле. М., 1967:

րիոնը դիմում է էյնշտեյնին՝ պետության նախագահի պաշտոնն զբաղեցնելու առաջարկությամբ: Էյնշտեյնը հրաժարվում է այդ պաշտոնից՝ պատճառաբանելով, որ չունի մարդկանց հետ աշխատելու փորձ:

Էյնշտեյնի մահվան հաջորդ օրը ԱՄՆ-ի լրագրերից մեկում հայտնվում է մի նկար, որում պատկերված էր արեգակնային համակարգն իր բոլոր մոլորակներով, իսկ երկրագնդի վրա պատկերված էր մի հուշատախտակ հետևյալ գրառմամբ.

«ԱՅՍՏԵՂ ԱՊՐԵԼ Է ԷՅՆՇՏԵՅՆԸ»:

ВОЕННАЯ ИНЖЕНЕРИЯ

ЭЙНШТЕЙН И НЕКОТОРЫЕ СОВРЕМЕННЫЕ ТЕХНОЛОГИИ

А. О. МЕЛИКЯН, член-корреспондент НАН РА, доктор физико-математических наук, ведущий научный сотрудник Института прикладных проблем физики НАН РА, профессор ЕГУ, член НКС ВНЖ «Айкакан банак»

РЕЗЮМЕ

Жизнь показывает, что не все ученые являются пацифистами. Известно немало примеров, когда выдающиеся ученые ставили свой талант на службу авантюрным замыслам правителей, которые стремились овладеть миром, шагая по трупам. К сожалению, опасность подобной агрессии в настоящее время достаточно велика, а результат военного столкновения, с учетом возможностей современной военной техники, может оказаться губительным не только для обороняющейся стороны. Поэтому к работам по созданию надежной оборонной системы в развитых странах привлекают самых опытных специалистов – физиков и инженеров. По известным и понятным причинам у нас их становится все меньше и меньше, так что подготовка специалистов является первоочередной задачей. Вместе с тем, наблюдается активность людей, которые, стремясь прослыть спасителями Отечества, но не имея достаточного запаса знаний и опыта, заявляют о готовности разработать для нужд армии различные средства обороны. Государственные органы должны сказать свое веское слово по поводу такой самодеятельности, которая вряд ли может оказать положительное влияние на обороноспособность страны.

В то же время следует особо подчеркнуть роль фундаментальных исследований в развитии прикладных наук. Ярким примером этому служит научная деятельность одного из выдающихся физиков XX в. – Альберта Эйнштейна. Его имя в первую очередь связывается с созданием теории относительности и фотоэффектом.

В основу теории относительности Эйнштейн заложил два постулата, известных под его именем.

Первый постулат гласит: во всех инерциальных системах скорость света в вакууме является величиной постоянной. Второй постулат утверждает, что все природные явления в различных инерциальных системах протекают одинаково. Оба постулата имеют очень важные следствия. В частности, из первого следует, что никакой сигнал не может распространяться со скоростью, превышающей скорость света в вакууме.

Эйнштейн также вывел зависимость между массой вещества и энергией – $E=mc^2$, имеющую исключительную важность не только в физике, но и для всей философии познания природы.

Существенный вклад внес Эйнштейн и в понимание физических процессов, изучаемых физикой атома, приведших к созданию ядерного оружия. Однако Эйнштейн, будучи человеком глубоко гуманным, в своих выступлениях и обращениях называл ядерное оружие «страшной угрозой для всего человечества».

Одним из величайших достижений Эйнштейна является разработка теории фотоэффекта, т. е. взаимодействия электромагнитного излучения (света) с веществом, нашедшей широкое применение в различных дисциплинах, в частности, в биологии и химии. Одним из следствий этой теории стало создание лазеров и целой области физики – нелинейной оптики.

MILITARY ENGINEERING

EINSTEIN AND SOME OF THE MODERN TECHNOLOGIES

A. H. MELIKYAN, Corresponding Member, NAS, RA, Doctor of Physical and Mathematical Sciences, Leading Research Fellow, Institute of Applied Problems in Physics, NAS, RA, Professor, YSU, Member, Academic-Advisory Council, "Haikakan Banak" DAJ

SUMMARY

Life shows that not all scientists are pacifists. Examples, when outstanding scientists have put their talent in service of the adventurous plots of the rulers, who seek to overtake the world by walking over corpses, are numerous. Unfortunately, at present the danger of suchlike aggression is rather high, and the aftermath of a military clash, with regard to the opportunities of modern military equipment, can be disastrous not only for the defensive side. That's why in developed countries the most experienced specialists, physicists and engineers are involved in designing a reliable defense system. For the reasons well-known and understandable, these people become fewer and fewer in Armenia, therefore, training specialists is a primary task. Simultaneously,

we witness the activity of people who, in pursuit of being reputed for the saviors of the Motherland, however, lacking sufficient store of knowledge and experience, declare their readiness to develop various defense means for the army needs. Public authorities should pronounce on such an initiative, which is unlikely to have a positive impact on the country's defense capability.

Meanwhile, the role of fundamental research in the development of applied sciences should also be underlined. A vivid example of this is the scientific activity of Albert Einstein, one of the 20th century outstanding physicists. His name is primarily associated with the development of the theory of relativity and the photoelectric effect.

Two postulates, known by Einstein’s name, underlie the theory of relativity.

The first postulate holds that in all inertial frames, the speed of light in a vacuum is a constant value. The second postulate states that in different inertial frames all natural phenomena take place in the same way. Both postulates come up with very important effects. In particular, it follows from the first one that no signal can travel at the speed exceeding the speed of light in a vacuum.

Einstein also derived the relativity between the mass of the substance and energy – $E= mc^2$, which is of key importance not only in physics, but also for the entire philosophy of nature cognition.

He had a significant input in the understanding of the physical processes studied by atomic physics that have led to the creation of nuclear weapons. However, being a profoundly humane person, in his speeches and addresses Einstein used to call the nuclear weapon "a terrible threat to the entire mankind".

Einstein’s one of the greatest achievements was his development of the theory of photoelectric effect, i.e., the interaction of the electro-magnetic radiation (the light) with the substance, a theory which further was widely applied in various disciplines, namely, in biology and chemistry. One of the outcomes of this theory was the creation of lasers and a whole field of physics – the nonlinear optics.

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ՝ ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՐԵԱՅԻ ՕՐԻՆԱԿՈՎ*

Ա. Մ. ԿՅՈՒՐԵՂՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՈՀԻ-ի Ռազմավարական խաղերի և մոդելավորման խմբի պետ,
Լ. Մ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, «Թրասթ Աուդիտ» ՓԲԸ աշխատող, Հայ-ռուսական համալսարանի հայցորդ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից տնտեսագիտական ուսումնասիրությունների ուշադրության կենտրոնում են ինչպես 20-րդ դարի երկրորդ կեսից 21-րդ դարի սկիզբն ընկած ժամանակահատվածում Արևելյան ու Հարավարևելյան Ասիայի մի շարք պետությունների արագ տնտեսական զարգացումը, այսպես կոչված՝ «տնտեսական հրաշքը»**, այնպես էլ Արևելյան Եվրոպայի ու ԱՊՀ մի շարք պետություններում տնտեսական բարեփոխումների բացասական արդյունքները: Պետք է նշել, որ այն պետություններից մեկը, որն ունեցել է մեծ տնտեսական առաջընթաց («Երրորդ աշխարհից ցատկել է դեպի Առաջին աշխարհ») Կորեայի Հանրապետությունն է, կամ Հարավային Կորեան, որը 20-րդ դարի երկրորդ կեսից մարմնավորում է դինամիկորեն զարգացող ասիական պետությունը, հետևաբար նրա տնտեսության արագ և արդյունավետ զարգացման պատճառների ու նպաստող գործոնների ուսումնասիրությունը ներկայացնում է զգալի տեսական և գործնական հետաքրքրություն:

Հարավային Կորեային հաջողվել է երկար տարիներ ապահովել մեծ տնտեսական աճ, ինչն էլ հանգեցրել է բնակչության կենսամակարդակի զգալի բարձրացմանը: Ըստ այդմ սույն հոդվածում ուսումնասիրվում են Հարավային Կորեայի կառավարության վարած տնտեսական քաղաքականությունը և տնտեսության պետական կարգավորման առանցքային միջոցառումները (զարգացման հնգամյա պլաններ, հակակոռուպցիոն քաղաքակա-

* Հոդվածը նախնական տեսքով ներկայացվել է 03.08.2022: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 23.11.2022:

** «Տնտեսական հրաշք» կոչվում է տնտեսության արագացված երկարաժամկետ զարգացումը, որը հանգեցնում է արմատական որակական դրական փոփոխությունների տվյալ երկրի համար:

նություն, խոշոր կորպորացիաների ստեղծում, ինչպիսին է՝ «Չեբոլները»), որոնց շնորհիվ է տեղի ունեցել «տնտեսական հրաշքը»:

Հարավային Կորեայի կառավարության հիմնական նպատակներից են եղել արդյունաբերության զարգացումը, գործազրկության մակարդակի նվազեցումը և արտահանման ծավալների մեծացումը, իրականացվող սոցիալ-տնտեսական բարեփոխումների շնորհիվ բնակչության կենսամակարդակի բարձրացումը, պետության վարկանիշի բարելավումը:

Ըստ մասնագետների պնդումների՝ Հարավային Կորեայում հակակոռուպցիոն քաղաքականությունը հաջողվել է, քանի որ իրականացվել են այնպիսի միջոցառումներ, որոնք ուղղված են եղել պետական կառավարման համակարգի կարգավորմանը, կոռուպցիայի վերաբերյալ տեղեկությունների հավաքման և վերահսկողության արդյունավետ համակարգերի ներդրմանը, քաղաքացիական ծառայողների աշխատանքի թափանցիկության աստիճանի բարձրացմանը և պետական հատվածում ակտիվ գործունեության ծավալմանը[1]: Ըստ այդմ հոդվածում կոռուպցիայի ընկալման և կոռուպցիոն ռիսկերի դեմ պայքարի համատեքստում վերլուծել ենք պետական կառավարման ծախսերի, ապրանքների և ծառայությունների գծով ծախսերի, աշխատավարձի ցուցանիշները և ստացված արդյունքների հիման վրա դիտարկումներ ենք կատարում ՀՀ-ում Հարավային Կորեայի փորձի տեղայնացման հնարավորությունների վերաբերյալ:

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՐԵԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ»

Հարավային Կորեան 30 տարվա ընթացքում անցել է տնտեսության զարգացման այնպիսի ճանապարհ, որը զարգացած պետություններն անցնում են 100 տարվա ընթացքում: Դա հիմնականում պայմանավորված էր կորեական կառավարության մշակած տնտեսական զարգացման արտաքին ռազմավարությամբ, որակյալ աշխատուժի և տեխնոլոգիական նորամուծությունների առկայությամբ[2]:

1960-ական թվականներին Հարավային Կորեան տնտեսապես չի զարգացել, քանի որ բոլոր ոլորտներում տեղի են ունեցել էական ձախողումներ: Մասնավորապես՝ Կորեայի մասնատումից հետո (1950–1953 թթ.) Հարավային Կորեան մի աղքատ, հետամնաց ենթակառուցվածքներով ագրարային պետություն էր, քանի որ զրկվել էր արդյունաբերության այն ճյուղերից, որոնք կնպաստեին տնտեսության զարգացմանը, մասնավորապես՝ մետաղագործությունից, քիմիական նյութերի արտադրությունից: 1960-ական թվա-

[1] Տես “Corruption Perceptions Index”. “Transparency International” (https://www.transparency.org/en/cpi/2021); «Южная Корея - Индекс экономической свободы, общая оценка» (https://knoema.com/atlas/Republic-of-Korea/topics/World-Rankings/World-Rankings/Index-of-economic-freedom):

[2] Տես *Ա. Զախարյան,* Հարավային Կորեայի «տնտեսական հրաշքը»: «Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում»: Գիտական հոդվածների ժողովածու, հ. 1: Ե., 2020, էջ 262:

կանների սկզբներին Հարավային Կորեայի մեկ շնչին բաժին հասնող ՀՆԱ-ն կազմում էր 158,2 դոլար[3]: Այս ցուցանիշով նա հետ էր մնում ոչ միայն Մեքսիկայից ու Նիգերիայից, այլև Պապուա Նոր Գվինեայից[4]: Բացի այդ, գործնականում չկային բնական ռեսուրսներ (բացառությամբ անորակ ածխի նվազ պաշարների, որի արդյունահանումը անշահավետության պատճառով վաղուց դադարեցվել էր), գյուղացիների մի զգալի մասը հատկապես գարնանը թերսնվում էր, էլեկտրաէներգիան անկանոն կերպով էր մատակարարվում անգամ Սեուլում[5]: Հետևաբար լուրջ ուսումնասիրության է արժանի, թե ինչպես Հարավային Կորեան կարողացավ զգալի հաջողությունների հասնել սոցիալ-տնտեսական զարգացման գործում՝ այսօր դառնալով չորս «ասիական վագրերից» մեկը[6]:

1954–1958 թթ. Հարավային Կորեան դեռ գերազանցապես գյուղատնտեսական պետություն էր: Միակ ռեսուրսը, որը կարող էր հնարավորություն տալ ձեռնարկելու փոփոխություններ, մարդկային ռեսուրսն էր, ինչպես նաև «Բոնուսի» տեսքով արտաքին աշխարհի շահերի նպաստավորությունը:

1961 թվականին Հարավային Կորեայում իշխանության եկավ Պակ Չոն Հինը, որի կառավարման 18 տարվա ժամկետը բավարար եղավ լուրջ փոփոխություններ կատարելու համար: Բռնապետի որդեգրած տնտեսական քաղաքականության հաջողության գաղտնիքն առաջին հերթին նրա ստացած աշխատանքային ռեսուրսներն էին, ինչպես նաև երկար տարիների ընթացքում ձևավորած բարձր աշխատանքային կարգապահությունը[7]: Որպես արդյունաբերության կարևոր ճյուղեր դիտվեցին էլեկտրոնիկան, նավաշինությունը և ավտոմոբիլային արդյունաբերությունը: Որպես արդյունք՝ 1979 թվականին մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն հասավ 1783,6 ԱՄՆ-ի դոլարի՝ 19 տարվա ընթացքում աճելով 11,2 անգամ[8]:

«Տնտեսական հրաշքում» կարևոր դեր կատարեցին «Չեբոլները»: Մասնավորապես՝ Պակ Չոն Հինի կառավարությունը պետական աջակցություն տրամադրեց ձեռներեցության զարգացմանը, որը հիմնված էր աստիճանակարգության սկզբունքի վրա. վերին օղակներում գտնվում էին 4-5 խոշոր արդյունաբերական կազմակերպությունների խմբեր, որոնց հաջորդում

[3] Տես “GDP per capita (current US$) - Korea, Rep.”. “The World Bank” (https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?locations=KR):

[4] Տես “GDP per capita (current US$) - Mexico, Nigeria, Papua New Guinea”. “The World Bank” (https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?locations=MX-NG-PG):

[5] Տես «Южная Корея – рецепт экономического чуда», 07.06.2016 (https://nstarikov.ru/yuzhnaya-koreya-recept-yekonomicheskogo-ch-66683):

[6] Տես “Building a national innovation system: What can we learn from Korea?”. “Theconversation”, 10 September 2012 (http://theconversation.com/building-a-national-innovation-system-what-can-we-learn-from-korea-9449):

[7] Տես *В. Федин.* Экономическое чудо Южной Кореи, 17.01.2016 (http://fedin.org/ekonomika/chudo-yuzhnoj-korei.html):

[8] Տես “GDP per capita (current US$) - Korea, Rep.” (https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?locations=KR):

էին շուրջ 40 ավելի մանր արդյունաբերական կազմակերպություններ: «Չեբոլները» բազմազանեցված խոշոր կորպորացիաներ են, որոնք հիմնել է հենց պետությունը: Ըստ էության, «Չեբոլները» կապիտալը և որակավորված անձնակազմը կենտրոնացրել են մեկ տեղում և գոյություն ունեն մինչ օրս:

Խոշոր «Չեբոլների» վերահսկողությունը պետությանը հնարավորություն է տվել ավելի ճշգրիտ կերպով կարգավորելու և խստիվ վերահսկելու տնտեսական գործունեությունն ու փոփոխությունների ընթացքը:

Դասական «Չեբոլները» բաղկացած են ավելի քան 20 ձեռնարկություններից, որոնք գործում են արդյունաբերության նավաշինական, ավտոմոբիլային, էլեկտրոնային, քիմիական և մանվածագործական ճյուղերում, ընդ որում, միևնույն ճյուղում կարող են գործել մի քանի «Չեբոլներ», ինչպես նաև ընդգրկված ձեռնարկությունները կարող են իրականացնել միևնույն գործունեությունը՝ ապահովելով մրցակցության աճում (օրինակ՝ **«Սամսունգ», «Հունդայի», «Լակի - Գոլդստար» (այժմ «LG»)** ընկերությունները):

Այս խոշոր կորպորացիաների հետագա զարգացումը Հարավային Կորեային դարձրել է բարձր տեղեկատվական տեխնոլոգիաներ մատակարարող պետություն: Ինչպես ցույց են տալիս 1-ին գծապատկերում արտացոլված տվյալները, Հարավային Կորեան 2020 թվականին եղել է այդպիսի պետությունների առաջին հնգյակում:



Գծ. 1. 2020 թվականին բարձր տեղեկատվական տեխնոլոգիաների արտահանումը (մլրդ ԱՄՆ-ի դոլար)[9]

[9] Տես “High-technology exports (current US$) - Kenya, Korea, Rep., Germany, American Samoa, Singapore, Hong Kong SAR, China”. “The World Bank” (https://data.worldbank.org / indicator / TX.VAL.TECH.CD? locations = KE-KR-DE-AS-SG%20); «Китай: Экспорт высоких технологий (хай-тека)» (https://ru.theglobaleconomy.com/China/High_tech_exports/-SG-HK):

Պակ Չոն Հինի ռազմական վարչակարգը մշակել է տնտեսության զարգացման հնգամյա պլաններ, որոնք հետագայում դարձել են տնտեսական քաղաքականության բաղկացուցիչ մաս[10]:

Առաջին հնգամյա տնտեսական պլանը *(1962–1966 թթ.)* ներառել է նախնական քայլեր՝ ուղղված արդյունաբերության ոլորտի զարգացմանը, շեշտը դնելով արդյունաբերության ենթակառուցվածքային զարգացման վրա (էլեկտրաէներգիայի, հանքային պարարտանյութերի և ցեմենտի արտադրություն, նավթաքիմիական արդյունաբերություն):

Երկրորդ հնգամյա պլանը *(1967–1971 թթ.)* ներառել է պողպատի արտադրության, մեքենաշինության, ինչպես նաև քիմիական արդյունաբերության արդիականացումը և զարգացումը:

Երրորդ հնգամյա պլանը *(1972–1976 թթ.)* ներառել է գերազանցապես ծանր և քիմիական արդյունաբերության արտադրանքի արտահանումը (մեքենաշինություն, էլեկտրոնիկա և նավաշինություն):

Չորրորդ հնգամյա պլանի *(1977–1981 թթ.)* շրջանակներում Հարավային Կորեան սկսել է արտադրել այնպիսի ապրանքներ, որոնք համաշխարհային շուկաներում եղել են մրցունակ: Որպես ռազմավարական ուղղություն է սահմանվել գիտատար, ինտենսիվ և բարձրտեխնոլոգիական արդյունաբերությունը (մեքենաշինություն, էլեկտրոնիկա, նավաշինություն, քիմիական արդյունաբերություն):

Հինգերորդ և վեցերորդ հնգամյա պլաններով *(1982–1991 թթ.) նախատեսվում էր* ծանր և քիմիական արդյունաբերության ոլորտներից անցում կատարել դեպի բարձր տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառ՝ որպես գերակա ոլորտ:

Յոթերորդ *(1992–1996 թթ.) և հետագա հնգամյա պլանները* շարունակում են այս ուղղությունը մինչ օրս[11]:

Այսպիսով՝ տվյալ պլանների իրականացումը ապահովել է տնտեսության կայուն զարգացումը, այսինքն՝ եթե 1999 թվականին մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ն կազմել է 10672 ԱՄՆ-ի դոլար, ապա 2021 թվականին այն հասել է 34757,7 ԱՄՆ-ի դոլարի[12], միաժամանակ նվազել է նաև աղքատության մակարդակը, մասնավորապես՝ 2020 թվականին աղքատության մակարդակը եղել է 15,3 %, որը նախորդ տարվա համեմատությամբ նվազել է 6,13 տոկոսով:

---

[10] Տես *В. Д. Иргебаев, В. И. Осипов.* Южная Корея. М., 1990, с. 29:

[11] Տես «Экономика Республики Корея (Экономика Южной Кореи)». «Ereport.ru» (http://www.ereport.ru/articles/weconomy/skorea.htm):

[12] Տես “GDP per capita (current US$) - Korea, Rep.” (https://data.worldbank.org/indicator/NY.GDP.PCAP.CD?locations=KR):

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՐԵԱՅԻ «ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀՐԱՇՔԸ» ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԱՅՆԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Կոռուպցիան ժամանակակից հասարակության ամենամեծ պրոբլեմներից է: Այն ունի ընկալման տարբեր մակարդակներ և բնորոշվում է որպես խիստ բացասական երևույթ, որի դեմ պայքարը պահանջում է օրենսդրության, արդարադատության և պետական կառավարման համակարգերում նպատակային բարեփոխումների իրականացում և հակակոռուպցիոն մեխանիզմների ներդրում: Կոռուպցիայի չեզոքացման արդյունավետ մեխանիզմների մշակման և ներդրման առումով արժեքավոր է Հարավային Կորեայի հաջողված փորձը:

Անցյալ դարի կեսերին Հարավային Կորեան մի պետություն էր, որտեղ առկա էին շատ բարձր մակարդակի կոռուպցիա և թույլ կառավարություն: Իր ընդհանուր տեսքով այս պետության զարգացման պատմությունը կարելի է բաժանել չորս ժամանակահատվածների, որոնցից առավել հատկանշական է չորրորդ շրջանը, որն սկսվել է 1997 թվականին և շարունակվում է մինչ օրս: Այն ներառում է բարեփոխումներ, որոնք իրագործվում են կորպորատիվ և ֆինանսական հատվածներում, հասարակական գործընթացների բարոյական կարգավորում, ինչպես նաև կոռուպցիայի դեմ ակտիվ պայքար[13]: Ըստ այդմ՝ Սեուլի քաղաքային վարչակազմի մշակած հակակոռուպցիոն ռազմավարությունն իրականացվել է չորս հիմնական ուղղություններով:

Առաջին ուղղությունը ներառել է միջոցառումներ՝ միտված կառավարության կարգավորումների նվազեցմանը:

Երկրորդ ուղղությունը ներառել է կոռուպցիայի վերաբերյալ տվյալների հավաքման և վերահսկողության համակարգերի ներդրումը:

Երրորդ ուղղությունը ներառել է «ՕՓԵՆ» *("OPEN" –Online Procedures Enhancement for Civil Applications* (Քաղաքացիական դիմումների առցանց ընթացակարգերի բարելավում)) համակարգի ներդրումը: Դրա էությունը քաղաքացիների դիմումների քննարկման կարգի և ժամկետների վերահսկումն է, ընդ որում, բոլոր դիմումները կարող էին ներկայացվել առցանց դիմումային համակարգով: Սեուլի բնակիչների շրջանում անցկացված հարցումների համաձայն՝ այս նորամուծությունը հանգեցրել է քաղաքացիական ծառայողների աշխատանքի թափանցիկության մեծացմանը[14]:

[13] Տես *Jong-sung You.* Development of control of corruption in South Korea. GIGA German Institute of Global and Area Studies. 28 May 2015, PP. 2–3 (https://www.againstcorruption.eu/wp-content/uploads/2015/05/D3-South-Korea_You.pdf):

[14] Տես «Письмо Постоянного представителя Республики Корея при Организации Объединенных Наций от 23 октября 2001 года на имя Генерального секретаря», с. 7 (http://unpan1.un.org/intradoc/groups/public/documents/un/unpan010947.pdf):

Չորրորդ ուղղությունը ներառել է պաշտոնատար անձանց՝ ազնվության համաձայնագրի ստորագրումը, ըստ որի՝ նրանք պարտավորվել են կաշառք չվերցնել և ծանուցվել են պայմանագրի պահանջները խախտելու դեպքում համապատասխան պատժի ենթարկվելու մասին:

Հարկ է նշել, որ Հարավային Կորեայում 2002 թվականի հունվարի 1-ին ընդունված «Հակակոռուպցիոն քաղաքականության մասին» օրենքի համաձայն՝ հիմնական հակակոռուպցիոն մարմինը պարտավոր է նախաքննություն սկսել ցանկացած անձի բողոքի հիման վրա, իսկ կոռուպցիայի հետ կապված կեղծ մեղադրանքների դեպքում սահմանվում է խստագույն պատիժ[15]:

«Թրանսպարենսի ինտերնեյշնլ» զեկույցի համաձայն՝ 1997–2020 թվականների ընթացքում կոռուպցիայի ընկալման ինդեքսի* վարկանիշային աղյուսակում Հարավային Կորեայում ամենացածր ցուցանիշը գրանցվել է 1999 թվականին (38 միավոր), իսկ ամենաբարձր ցուցանիշը՝ 2020 թվականին (61 միավոր)[16]: Միևնույն ժամանակ, վերջին տասը տարիների ընթացքում կոռուպցիայի ընկալման ինդեքսի ամենացածր ցուցանիշը գրանցվել է 2016 թվականին (53 միավոր)[17], ինչը հիմնականում պայմանավորված է եղել երկրում բիզնես վարելու պատմական առանձնահատկություններով, մասնավորապես՝ արդեն տասնամյակներ է, ինչ ընկերներին և ընտանիքի անդամներին բիզնեսում ներգրավելու պրակտիկան դարձել է հիմնական նորմերից մեկը:

Պետք է նշել, որ 1997–2020 թվականների ընթացքում տնտեսական ազատության ինդեքսի ամենացածր ցուցանիշը գրանցվել է 2005 թվականին՝ 66,4 միավոր, իսկ ամենաբարձր ցուցանիշը՝ 2017 թվականին՝ 74,3 միավոր (տես գծ. 2):

Ըստ գծապատկեր 3-ի՝ Հարավային Կորեայում 2020 թվականին և՛ աշխատավարձի ֆոնդը, և՛ ապրանքների ու ծառայությունների գծով ծախսը 2009 թվականի համեմատությամբ ավելացել են (համապատասխանաբար՝ 548 մլն դոլարով և 27979 մլն դոլարով): Պետք է նշել, որ 2020 թվականին

[15] Տես *P. A. Baklanova.* The information and Analytical Collection on Prevention of Corruption Offenses. Edition of the Federation Council of Federal Assembly of Russia. M., 2011, P. 92:

* Գնահատական, որը մասնագիտացված «Թրանսպարենսի ինտերնեյշնլ» միջազգային կազմակերպությունը տվյալ պետության փորձագետների ու գործարար շրջանների հարցումների հիման վրա տալիս է պետական կառավարման համակարգին կամ գործարար կլիմային՝ դրանց կոռումպացվածության տեսակետից:

[16] Տես “Corruption Perceptions Index”. “Transparency International” (https://www.transparency.org/en/cpi/2021); “Republic of Korea - Index of economic freedom (100 represents the maximum freedom)” (https://knoema.com/atlas/Republic-of-Korea/topics/World-Rankings/World-Rankings/Index-of-economic-freedom):

[17] Տես “Corruption Perceptions Index”. “Transparency International”, 2016 (https://www.transparency.org/en/cpi/2016/index/nzl):

աշխատավարձի ֆոնդը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 2053 մլն դոլարով, ինչը հանգեցրել է պետական կառավարման ծախսերի ավելացմանը 10040 մլն դոլարով, այսինքն՝ եթե պետական կառավարման ծախսերն աճում են, ապա դա նշանակում է, որ պետական բյուջեի եկամտային մասն էլ պետք է համարժեք կերպով աճի, իսկ եթե եկամտային մասը չի աճում, այլ աճում են ծախսերը, ապա դա նշանակում է, որ պետական բյուջեում առաջանում է սեկվեստր* (եթե պետական աշխատավարձի ֆոնդը X գումար է սահմանվում, ապա ծախսերը պետք է նվազեցվեն և սահմանվեն X-1 գումար), հետևաբար այս խնդրից զերծ մնալու համար Հարավային Կորեայում



Գծ. 2. Հարավային Կորեայում 1997–2020 թթ. կոռուպցիայի ընկալման ինդեքսի և տնտեսական ազատության ինդեքսի ցուցանիշները[18]

եկամուտներն էլ են ավելանում, զարկ է տրվում տնտեսության զարգացմանը, որպեսզի հնարավոր լինի պետական ծախսերը կատարել հարկային եկամուտների հաշվին: Ի տարբերություն Հարավային Կորեայից, Հայաստանի Հանրապետությունում պետական ծախսերը, մասնավորապես՝ գործառական և սոցիալ-տնտեսական նշանակությամբ ծախսերը, արագորեն չեն արձագանքում հարկային եկամուտների աճմանը: Դեռ ավելին. պետական ծախսերի աճումն ուղեկցվում է գնաճով: Հարկային եկամուտների աճումը չի ուղեկցվում պետական ծախսերի համարժեք աճմամբ, այսինքն՝ պետական ծախսերն աճում են ավելի դանդաղ, քան հարկային եկամուտները:

* Սեկվեստր (տնտ.)՝ ծախսերի կրճատում օբյեկտիվ (ֆորսմաժորային) կամ բյուջեի կազմման ժամանակ թույլ տված սխալների պատճառով:

[18] Տես “Corruption Perceptions Index”. “Transparency International”, 2021 (https://www.transparency.org/en/cpi/2021); “Republic of Korea - Index of economic freedom (100 represents the maximum freedom)” (https://knoema.com/atlas/Republic-of-Korea/topics/World-Rankings/World-Rankings/Index-of-economic-freedom):



Գծ. 3. Հարավային Կորեայում 2009 – 2020 թթ. պետական կառավարման ծախսերը, աշխատավարձը, ապրանքների և ծառայությունների գծով ծախսը (մլն դոլար)[19]

Նույն ժամանակահատվածում ավելացել են նաև ապրանքների և ծառայությունների գծով ծախսերը՝ 591 մլն դոլարով: Ապրանքների և ծառայությունների գծով ծախսը բնակչության ձեռք բերած ապրանքներն ու ծառայություններն են: Եթե այս ծախսը ավելանում է, ապա պետք է համարժեք կերպով ավելանան նաև եկամուտները, իսկ եկամուտների ավելացումը կհանգեցնի մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ավելացման: Հարավային Կորեայում ՀՆԱ-ի աճը և պետական ծախսերի ավելի արդյունավետ օգտագործումը հանգեցնում են բնակչության կենսամակարդակի բարձրացմանը, կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանը, ինչպես նաև եկամուտների համահարթեցմանը: Հետևաբար պետք է նշել, որ Հարավային Կորեայում հակակոռուպցիոն քաղաքականությունը արդյունավետ է, քանի որ ներկայացված ցուցանիշների մակարդակների բարձրացումը հանգեցնում է ՀՆԱ-ի մակարդակի բարձրացմանը: Մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում համախառն ներքին արդյունքն աճում է քանակապես, բայց որակական տեսանկյունից տնտեսության վրա դրա ազդեցությունն զգալի չէ, այսինքն՝ կոռուպցիոն ռիսկերը գրեթե չեն նվազում, ապրանքների գները ավելանում են, մարդիկ գնում են նույն կամ ավելի քիչ քանակությամբ ապրանք, ինչն արհեստական ձևով ուռճացնում է ՀՆԱ-ն: Այս տեսանկյունից, որպեսզի Հարավային Կորեայի փորձը կիրառվի մեզանում, պետք է պետության առանցքային քաղաքականությունը ուղղված լինի ոչ թե միայն ՀՆԱ-ի աճմանը, այլև այդ աճմամբ պայմանավորված բնակչության կենսամակարդակի բարձրացմանը: Եթե այն ուղղված է աղքատության մակարդակի նվազեցմանը, ապա պետք է վերլուծել, թե արդյոք ՀՆԱ-ի 1 տոկոսով աճը բերում է

[19] Տես “South Korea: Government spending, in dollars” (https://www.theglobaleconomy.com/South-Korea/government_spending_dollars/); “Goods and services expense (current LCU) - Korea, Rep.” (https://data.worldbank.org/indicator/GC.XPN.GSRV.CN?locations=KR); “Global Knowledge Index” (https://knoema.com/aomssce/global-knowledge-index?Region=Korea%20(Republic%20of)&indicator=Global%20Knowledge%20Index):

աղքատության մակարդակի նվազման, թե ոչ, իսկ եթե ՀՆԱ-ի աճը հանգեցնում է աղքատության նվազմանը, ապա դա նշանակում է, որ պետական եկամուտների բաշխվածությունը հնարավորինս արդարացված է: Այսպիսով՝ մեր պետությունում ՀՆԱ-ի ավելացումը չի հանգեցնում բնակչության կենսամակարդակի բարձրացմանը: Ինչպես նշվեց, ՀՆԱ-ն ավելանում է ոչ թե որակապես, այլ միայն քանակապես, ուստի այս երկու ցուցանիշների միջև առկա է կապի էական խզում:

Ներկայումս գոյություն ունեն տարբեր մոտեցումներ, թե արդյոք կարելի է ՀՀ-ում ընդօրինակել կամ ներդրել այլ պետությունների հաջողված տնտեսական փորձը, կամ տնտեսական աճի մոդելը, թե՝ ոչ: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հարավային Կորեայի «տնտեսական հրաշքին» նպաստել է առկա ճգնաժամների հաղթահարումը, ուստի այժմյան փուլում ՀՀ-ում տնտեսական զարգացման գործում առաջնային է առկա երեք՝ անվտանգային, հոգեբանական և սոցիալ-տնտեսական ճգնաժամների հաղթահարումը: Դրա համար, մեր կարծիքով, անհրաժեշտ են այնպիսի միջոցառումներ, որոնց ամբողջականությունը և հետևողական իրագործումը, անկախ քաղաքական դիրքի և քաղաքական «ֆորմացիաների» փոփոխությունից, կարող են ծառայել որպես երկրի զարգացման հիմնական ուղեցույց (տես գծ. 4):



Գծ. 4. Պետական կառավարման համակարգում իրականացված միջոցառումները*

* Սույն գծապատկերը կազմել են հոդվածի հեղինակները՝ հիմնվելով Հարավային Կորեայի տնտեսության զարգացման փորձի իրենց կատարած վերլուծության արդյունքների վրա:

Այսպիսով՝ վերջին 40-50 տարիների ընթացքում Հարավային Կորեայի արագ տնտեսական զարգացմանը նպաստել են հետևյալ ձեռնարկումները.

- արդյունավետ սոցիալ-տնտեսական քաղաքականությունը, որի հիմնարար սկզբունքներն են տնտեսության զարգացման պլանային և շուկայական մեխանիզմների օպտիմալ համակցումը, տնտեսության կոշտ պետական կառավարումը, տրանսպորտային և բանկային համակարգերի ազգայնացումը,
- հասարակության ռեսուրսների և կարողությունների ուղղումը դեպի արտահանում կողմնորոշված ոլորտներ, ինչպես նաև ԱՄՆ-ի տրամադրած ռեսուրսների արդյունավետ օգտագործումը,
- արդյունավետ հակակոռուպցիոն քաղաքականության վարումը:

Ընդ որում, տնտեսական զարգացմանն ուղղված բարեփոխումների արդյունքները կարող են ակնթարթային չլինել, սակայն, միջնաժամկետ հեռանկարում շոշափելի արդյունքները տեսանելի կլինեն:

Կառավարության, տնտեսության և հասարակական պահանջմունքների բավարարման վրա տնտեսական հեղափոխության գործած արդյունքներն ու հետևանքները բերվել են աղ. 1-ում:

Աղյուսակ 1

ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՐԵԱՅՈՒՄ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ*

Դրական կողմեր
1. Տնտեսության զարգացման պլանային և շուկայական մեխանիզմների օպտիմալ համադրում:
2. Պետական ֆինանսական միջոցների օպտիմալ բաշխում՝ դեպի արտահանում կողմնորոշված ոլորտների գերակայությամբ:
3. Օտարերկրյա ներդրումների ներգրավում միայն գերակա ոլորտներում (մեքենաշինություն, էլեկտրոնիկա, քիմիա):
4. Պետության վերածում ագրարայինից արդյունաբերականի:
5. Կորպորացիաների՝ «Չեբոլների» ստեղծում, նոր արտաքին շուկաների նվաճում, պետության վերածում բարձր տեղեկատվական տեխնոլոգիաներ մատակարարողի և հայրենական արտադրության ապրանքների մրցունակության մեծացում:
6. Կառավարության որոշմամբ գործարարներին արտոնությունների շնորհում՝ պետական բանկերից արտոնյալ վարկերի և երաշխիքների տրամադրում, հարկային բեռի մեղմացում:
7. Արդյունաբերական ենթակառուցվածքներին պետական ֆինանսների տրամադրում:
8. Աշխատանքի արտադրողականության մեծացում:
9. Պետական հաստատությունների անխափան գործունեության ապահովում:
10. Առևտրային արգելքների կամ աշխատանքային սահմանափակումների վերացում:
11. Պետական հատվածում աշխատելու հակվածության մեծացում:
12. Քաղաքացիական ծառայողների աշխատանքի թափանցիկության մեծացում:
13. Բոլոր աշխատողների շահերի պաշտպանություն ոչ կոռուպցիոն մեխանիզմների գործադրմամբ:

* Հեղինակները աղյուսակը կազմել են՝ հիմնվելով Հարավային Կորեայի տնտեսության զարգացման փորձի իրենց վերլուծության արդյունքների վրա:

Բացասական կողմեր
14. Խիստ բարձր մակարդակի պետական կառավարում:
15. Աշխատուժի գնի նվազում:
16. Յուրաքանչյուր խոշոր ընկերության առանցքային պաշտոններում միևնույն ընտանիքի անդամների նշանակում:

ԱՄՓՈՓՈՒՄ

Այսպիսով՝ կառավարման սկզբնական կոշտ եղանակը, խոշոր ընկերությունների ստեղծումը, առկա բոլոր ռեսուրսների մոբիլիզացումը, քաղաքացիների աշխատանքային պայմանների և կենսակերպի հետագա փոփոխությունները, առաջատար տեխնոլոգիաների և ապրանքատեսակների զարգացումը, ավելի ճկուն և շարժունակ փոքր ու միջին բիզնեսի զարգացումը, ինչպես նաև զարգացած պետությունների աջակցությունը հիմք դարձան Հարավային Կորեայի տնտեսության արագընթաց զարգացման համար: Ըստ այդմ՝ Հարավային Կորեայի «տնտեսական հրաշքը» տեղի է ունեցել կոշտ հակակոռուպցիոն քաղաքականության, էժան աշխատուժի, աշխատանքին նվիրվածության և արտաքին աջակցության շնորհիվ: Հետևաբար Հայաստանի Հանրապետությունում Հարավային Կորեայի փորձի տեղայնացումը բնորոշվում է երկու հիմնական հանգամանքներով.

1. արդյոք ՀՀ ներքին տնտեսական քաղաքականությունը լուծում է տնտեսության մեջ առաջացած խնդիրները (պետական ծախսերով պետք է լուծվեն սոցիալական պրոբլեմները, հատկապես՝ անապահով խմբերի, բիզնեսի զարգացման համար նպաստավոր պայմանների ապահովման, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման խնդիրները),

2. արդյոք արտաքին քաղաքականությունը լուծում է պետության անվտանգության խնդիրը (արտաքին քաղաքականությունը պետք է հնարավորություն տա արտաքին ներդրումների հաշվին կամ արտաքին կապիտալի հոսունության հաշվին ստեղծելու նոր կորպորատիվ մշակույթի զարգացման համար բարենպաստ միջավայր):

Եթե այս երկու քաղաքականությունները բոլոր առումներով համապատասխանում են տվյալ պահանջներին, ուրեմն ոչ մի խնդիր չի կարող լինել, բայց եթե տնտեսական քաղաքականության գործադրման ժամանակ առաջացան խնդիրներ, այսինքն՝ այդ քաղաքականության լծակների և միջոցների կիրառումը լինի ոչ լիարժեք, ապա դա բացասաբար կազդի արտաքին քաղաքականության վրա: Այսպիսով՝ պարզ է դառնում, որ Հարավային Կորեայի փորձը կարող է կիրառվել երկու նպատակով՝ տնտեսական քաղաքականության արդյունավետության մեծացում պետության մեջ և արտաքին քաղաքականության շնորհիվ դիրքերի ամրապնդում արտաքին աշխարհում:

ОБОРОННАЯ ЭКОНОМИКА

ТЕНДЕНЦИИ РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ КАК ОСНОВЫ ОБОРОНОСПОСОБНОСТИ: НА ПРИМЕРЕ ЮЖНОЙ КОРЕИ

А. М. КЮРЕГЯН, кандидат экономических наук, начальник Группы стратегических игр и моделирования ИНСИ НИУО МО РА, Л. М. ПЕТРОСЯН, сотрудник ЗАО «Траст Аудит», соискатель Российско-Армянского университета

РЕЗЮМЕ

Жесткий способ управления экономикой посредством разработки и осуществления пятилетних планов, создание крупных компаний, мобилизация всех имеющихся ресурсов в целях дальнейшего изменения условий труда и образа жизни, развитие передовых технологий и производств товаров, развитие более гибкого и мобильного малого и среднего бизнеса, а также внешняя поддержка со стороны развитых государств стали основой для стремительного развития экономики Южной Кореи. При этом «экономическое чудо» Южной Кореи стало возможным благодаря жесткой антикоррупционной политике, дешевой рабочей силе, традиционной преданности работе и дисциплинированности. Приспособление опыта Южной Кореи к условиям Республики Армения характеризуется двумя обстоятельствами:

1. решает ли внутренняя экономическая политика РА сложившиеся в экономике задачи (социальные проблемы, в особенности – затрагивающие малообеспеченные группы, обеспечение благоприятных условий для развития бизнеса, снижение коррупционных рисков должны решаться за счет государственных затрат),
2. решает ли внешняя политика задачи безопасности государства (внешняя политика должна содействовать созданию благоприятной среды для развития новой корпоративной культуры за счет внешних вложений или за счет текучести внешнего капитала).

Если эти две политики будут во всех отношениях соответствовать данным требованиям, то никаких проблем не возникнет, но если же во время имплементации экономической политики возникнут проблемы, т. е. применение рычагов и средств экономической политики будет неполноценным, то это негативно скажется на внешней политике.

Из этого следует, что опыт Южной Кореи может быть использован в двух целях: повышение эффективности экономической политики внутри государства и усиление позиций на внешних рынках за счет внешней политики.

DEFENSE ECONOMICS

TENDENCIES OF DEVELOPING THE ECONOMY AS A BASIS FOR THE DEFENSE CAPABILITY: SOUTH KOREA CASE STUDY

A. M. KYUREGHYAN, PhD in Economics, Head, Strategic Games and Simulation Group, INSS, NDRU, MOD, RA, L. M. PETROSYAN, Employee, "Trust Audit" CJSC, Applicant, Russian-Armenian University

SUMMARY

A hard model of economy management through developing and implementing five-year plans, formation of major companies, mobilization of all the available resources for the purpose of further change in the citizens' working conditions and way of life, development of advanced technologies and product production, development of more flexible and mobile small and medium enterprises, as well as external support from the developed states, underlay the rapid development of the South Korean economy. Hence, South Korea's "economic miracle" became possible due to the tough anticorruption policy, cheap workforce, traditional commitment to work and discipline. The adaptation of South Korean experience to the conditions of the Republic of Armenia is characterized by two main consequences:

1. whether the RA domestic economic policy does solve issues existing in the economy (social problems, namely those, concerning low-income population, favorable conditions for business development, corruption risk reduction, should be solved via state expenses),
2. whether foreign policy does solve the state security issue (foreign policy should facilitate the creation of a favorable environment for the development of a new corporate culture at the expense of foreign investments or at the expense of the liquidity of foreign capital).

If these two policies comply with the given conditions in all aspects, then no problems will occur, but if issues rise when implementing the economic policy, i.e., the application of leverages and means of that economic policy is insufficient, then it will negatively affect the foreign policy.

Hence, it follows that South Korea's experience can be applied for two purposes: to increase the efficiency of economic policy in the state, and to enhance the state's positions in the foreign markets thanks to its foreign policy.

ԼԵՌՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆԸ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Ս. Ա. ՊԱՐԶՅԱՆ, պահեստազորի մայոր, ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի համազորային պատրաստության ցիկլի դասախոս,
Ա. Ռ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ, բ/ծ փոխգնդապետ, ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի բժշկական ծառայության կազմակերպման և մարտավարության ամբիոնի ավագ դասախոս,
Լ. Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, պահեստազորի բ/ծ մայոր, բժշկական գիտությունների թեկնածու, ԵՊԲՀ ռազմաբժշկական ֆակուլտետի ռազմադաշտային թերապիայի ամբիոնի դասախոս

ԼԵՌՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՄԱՆԸ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Լեռնային պայմաններում մարտական գործողությունների վարմանը զինծառայողների ուսումնավարժեցման համար, նախ, պետք է հստակ կերպով պատկերացնել, թե ինչ բարդություններ են առաջանում այդ գործողությունների ժամանակ: Այսպես. առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան և Կարպատյան ճակատներում, ինչպես նաև Միջին Ասիայի լեռնային շրջաններում ծավալված մարտական գործողությունների հիման վրա հայտնի ռուսական ու խորհրդային զորավար, տեսաբան ու մանկավարժ գնդապետ Նիկոլայ Կակուրինը գրել է. «Լեռնային թատերաբեմի բնորոշ առանձնահատկությունն է բարձր, կտրտված և դժվարամատչելի ռելիեֆը:... Լեռնային թատերաբեմերի բոլոր վերը նշված հատկություններն ազդում են լեռներում գործող զորամասերի կազմակերպվածքի վրա ...Ընդհանրապես կազմակերպման առումով այդ պայմանները պահանջում են՝ հատուկ զորային գրաստագումակ, բեռնակիր եղանակով տեղափոխվելու ունակ հրետանի (լեռնային), կտրուկ կերպով բարձրացող հետագծով սպառազինություն (զառիթափ բարձունքներ և մեծաթիվ մեռյալ տարածություններ) և, վերջապես, բոլոր մարտական միջոցների հնարավորինս լիարժեք ապակենտրոնացում՝ ճակատով և խորությամբ զորքերի ընդարձակ տարաբաշխման անհրաժեշտության հաշվառմամբ (որպես թատերաբեմի ճանապարհազրկության, սակավաբնակության և տեղական միջոցներով աղքատության հետևանքի»)[1]:

---

* Հոդվածի սկիզբը տես «ՀԲ», 2022, հմ. 3-ում:

[1] Տես *Н. Какурин.* Тактика отдельных отрядов в особых условиях обстановки. М.–Л., 1927 (https://archive.org/details/taktika_otdelnykh_otriadov_v_osobykh_usloviiakh_obstanovki):

Իհարկե, այս տողերը վերաբերում են անցած դարին, սակայն նկատենք, որ լեռներում մարտական գործողությունների վարման տեխնիկական միջոցներն էապես չեն փոխվել:

Մարտական առաջադրանքներ կատարելիս զինծառայողը կրում է 25-35 կգ-անոց ուսապարկ, զենք, տարաբնույթ տեխնիկական սարքեր և զինամթերք, պարենի պաշար, շարժվում է անհարմար տեղանքով՝ ժայռեր մագլցելու կամ դրանցից իջնելու ժամանակ հաճախ ստիպված լինելով դիմելու ձեռքերի օգնությանը իր հավասարակշռությունը պահպանելու համար: Բացի այդ, լեռներում հաճախ են պատահում այնպիսի վտանգավոր երևույթներ, ինչպիսիք են մառախուղը, ամպրոպը (կայծակ), ջրհեղեղը, քարավեժը, ձնահյուսքը, սողանքը, ցեխահեղեղը և այլն, որոնք լրջորեն սպառնում են նրա կյանքին: Լեռներին բնորոշ եղանակային պայմանների կտրուկ փոփոխությունները մարդուց պահանջում են արագ ու ճշգրիտ արձագանք: Ուստի դարձյալ լեռնահարմարման գործում հույժ կարևոր է մարդու (զինծառայողի) ֆիզիկական պատրաստության մակարդակը:

Ֆիզիկական պատրաստումը մեծացնում է մարդու դիմացկունությունը ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգեբանական գործոնների բացասական ազդեցության նկատմամբ, որովհետև հոգնած, ուժասպառ եղած մարդը հոգեպես ավելի մեծ չափով է ենթակա բացասական ազդեցություններին, հոգեբանորեն ավելի անկայուն է, քան ֆիզիկապես թարմ, ուժեղ անձնավորությունը[2]: Ֆիզիկական վարժանքների ընթացքում զարգանում են տարբեր մկանային խմբերի ուժը, արագագործությունը, դիմացկունությունը և այլ հատկություններ, միևնույն ժամանակ, դրական փոփոխություններ են նկատվում ոսկրերում և կապաններում, տեղի են ունենում մի շարք գործառութային, ձևաբանական (մորֆոլոգիական) և կենսաքիմիական փոփոխություններ, որոնք զգալիորեն մեծացնում են օրգանիզմի կենսաբանական հնարավորությունները: Այդ վարժանքների շնորհիվ բարելավվում է նաև շնչառության և արյան շրջանառության հարմարվողական մեխանիզմների կարգավորումը:

Լեռներում անհրաժեշտ և ամենակարևոր որակը դիմացկունությունն է, որը պայմանավորված է մարդու բոլոր օրգան-համակարգերի վիճակով: Տարբերում են հատուկ և ընդհանուր դիմացկունություն[3]:

Հատուկ դիմացկունությունը լեռնային խոչընդոտները երկար ժամանակ հաղթահարելու տեխնիկա է, որը զարգացվում է երկարատև արշավների և տարբեր զորաշարժերի միջոցով: Ընդսմին առավել արդյունավետ է դրանց կատարումը հենց լեռնային տեղանքում և հատուկ արգելքների հաղթահարման ձևով:

[2] Այս մասին տես, օրինակ, *С. В. Малегин.* Влияние занятий по физической подготовке на развитие и совершенствование морально-психологической устойчивости у курсантов и слушателей образовательных организаций системы МВД России. «Здоровье человека, теория и методика физической культуры и спорта», 2015, № 1 (http://hpcas.ru/article/view/888/pdf_34):

[3] Տես *Олег Янчевский.* Проблемы акклиматизации в горах (http://www.mountain.ru/article/article_display1.php?article_id=3777):

Ընդհանուր դիմացկունությունը մկանային համակարգի երկարատև ու չափավոր ինտենսիվությամբ աշխատանք կատարելու ունակությունն է: Դրա զարգացման համար անհրաժեշտ են մարզումներ քայլելու, վազելու, երթերի, դահուկավազքի, տարբեր բնական խոչընդոտների հաղթահարման ձևով:

Արագությունը և արագաշարժությունը անհրաժեշտ են լեռնային խոչընդոտները հաղթահարելու և վտանգներից խուսափելու համար: Դրանց զարգացման լավագույն միջոցներն են կարճ տարածություններով վազքը, հեռացատկը թափառով և տեղից, և այլն: Դրանով ապահովվում են

– հզոր սիրտ-անոթային համակարգ,
– մկանային ուժ և տոնայնություն,
– թոքերում և մկաններում արյան ուժեղ անոթների մեծաթիվություն, ինչն օգնում է թթվածինն արագ և արդյունավետ կերպով տեղափոխելուն,
– լյարդի՝ հեպատոցիտներով կլանված թթվածնի միջոցով կաթնաթթուն գլյուկոզայի վերածելու կարողություն:

Ներկայումս կենսաբանության և բժշկագիտության տարբեր ոլորտներում գիտնականները շարունակում են աշխատել հարմարման քրոնոկենսաբանական կողմերի պարզորոշման, տվյալների վերլուծության և համակարգման ուղղությամբ: Քրոնոկենսաբանական տվյալները նոր ուղիներ են բացում մարդու օրգանիզմի գործառական ռեսուրսների մեծացման, հոգեբանական վիճակի, ինչպես նաև ընդհանուր աշխատունակության բարելավման, օրվա ժամանակից դեղամիջոցների ազդեցության աստիճանի կախման և կենսառիթմերով պայմանավորված այլ երևույթների հետազոտության համար[4]:

ԼԵՌՆԵՐՈՒՄ ՄԱՐՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԻՑ

Մարդկության պատմության ընթացքում լեռնային տեղանքում մղվել են բազմաթիվ կարճատև ու երկարատև արյունալի պատերազմներ: Այդ տեղանքը կարող է լինել ինչպես «դաշնակից», այնպես էլ «վտանգավոր ախոյան»:

Հայաստանի ամբողջ պատմությունը լի է պատերազմներով, որոնք հայ ժողովուրդը, հայոց պետությունը և նրա առանձին հատվածներ մղել են օտարազգի նվաճողների ու քոչվորների ասպատակումների դեմ՝ նվիրյալ զավակների կյանքի գնով պաշտպանելով Հայոց ազգն ու Հայոց հողը[5]: Այդ

[4] Տես *А. Ф. Крот.* Современное состояние хронобиологии. «Военная медицина». БГМУ. Минск, 2012, № 4 (https://www.google.ru/url?sa=t&rct=j&q=&esrc=s&source=web&cd=&ved=2ahUKEwj7grbk0KP7AhXkQ_EDHVtSCu8QFnoECA4QAQ&url=https%3A%2F%2Fwww.bsmu.by%2Ffiles%2Fcbc333e6c0cf348e601608e3aeb43e4e%2F&usg=AOvVaw12xHotxpBUrlHOh_r6Y-Jo):

[5] Տես, օրինակ, «Հայոց պատմություն», 4 հատորով: Ե., 2010–2018:

պատերազմներում դրսևորվել են ոչ միայն հայ ժողովրդի հայրենասիրությունը, այլև հայ զորավարների հմտությունը՝ օգտագործելու լեռնային տեղանքի առանձնահատկություններն ի սպաս փոքրաթիվ ուժերով ստվար հորդաների դեմ հաջող մարտեր մղելու գործին:

Կարելի է հիշատակել նաև Կովկասյան լեռներում 1942–1943 թթ. նացիստական Գերմանիայի զորքերի դեմ մղված մարտերում Կարմիր բանակի տոնած հաղթանակը, որում մեծ ներդրում ունեցան Հայկական ազգային դիվիզիաները և այլ զորամիավորումների կազմերում կռվող հազարավոր հայեր[6]:

Հիշատակենք նաև 1953 թ. չինացիների՝ ներխուժումը Տիբեթ, 1953–1958 թթ. Քենիայի Աբերդարես լեռներում բրիտանական զորքերի կռիվը Մաու-մաու անջատողականների դեմ, 1962 թ. Չինաստանի և Հնդկաստանի պատերազմը Բութանին և Թիբեթին սահմանակից Հիմալայան լեռներում:

1992–1994 թթ. Արցախում հայկական ինքնապաշտպանական ուժերը բարեհաջող պատերազմեցին գերազանցող ադրբեջանական ուժերի դեմ և տարան փայլուն հաղթանակ: 1995–2000 թթ. Չեչնիայում ռուսաստանյան բանակի զորամասերն ու զորամիավորումները արյունահեղ մարտեր մղեցին չեչենական անջատողականների դեմ, 2008 թ. օգոստոսին ռուս-վրացական պատերազմում ևս լեռնային շրջաններում ձեռնարկվեցին լուրջ մարտական գործողություններ:

Տարբեր պետություններ, առանձնակի ուշադրություն դարձնելով լեռնային տարածքին հարմարվողականության հարցին, մշակել են հատուկ կարգեր: Պակիստանն իր ԶՈՒ-ի անձնակազմի կլիմայավարժեցումը կատարում է յոթ շաբաթվա ընթացքում[7]: Ընդսմին անձնակազմը 3 շաբաթ մնում է միջինը 3000 մետր բարձրության վրա, որտեղ ընտելանում է ցրտին և թթվածնի պակասին՝ այդ ժամանակ զբաղվելով ֆիզիկական պատրաստմամբ, ուսանելով լեռնագնացության, ժայռամագլցման ու լեռներում գոյատևման տարրերը, ապա 4 շաբաթվա ընթացքում յուրացնում է լեռնագնացության առաջավոր մեթոդները՝ այդ ժամանակ բարձրանալով 4000 և ավելի մետր բարձրություններ, այնուհետև վերադառնալով իր մշտական տեղաբաշխման վայր: Դրանից հետո կազմակերպվում են քայլարշավներ 5000 և ավելի մետր բարձրություն ունեցող լեռներ և վերջնական վերելքը կատարվում է մինչև 6000 մետր բարձրություն[8]:

Հնդկական բանակն իր անձնակազմի կլիմայավարժեցումը կազմակերպում է հաջորդաբար աճող բարձրությունների վրա 14 օրով՝ 6 օր, 4 օր,

[6] Տես, օրինակ, «Մեծ հաղթանակ 1941–1945»: «ՀԲ», 2005, հմ. 2–3 (հատուկ թողարկում), էջ 13–184, *Է. Գ. Միհասյան,* Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941–1945 թթ.): «ՀԲ», 2020, հմ. 1:

[7] Տես *Muhammad Asim Malik.* Mountain Warfare–the need for specialized training. “Military Review”, September–October 2004, Vol. 84, Issue 5:

[8] Տես նույն տեղում:

ապա ևս 4 օր ժամանակացույցով: Սովորաբար կազմակերպվում է ստորաբաժանման կազմով ռազմերթ դեպի նախանշանակված շրջան:

Բոլոր առաջատար բանակներում եկել են այն համոզման, որ հնարավոր չէ հասնել կլիմայավարժեցման 10 օրից պակաս ժամկետում[9]: Կոլորադո նահանգում 1940-ական թվականներին ԱՄՆ-ի 10-րդ լեռնային դիվիզիան եղանակի հետ կապված վնասվածքներից ավելի շատ կորուստներ է կրել, քան Իտալիայում իրական լեռնային մարտերում[10]: Նացիստական Գերմանիան իր հատուկ նախանշանակման «էդելվայս» լեռնահրաձգային դիվիզիայի համար զինծառայողներ ընտրել է Հարավային Գերմանիայի լեռնային շրջանների բնակավայրերից, մասնավորապես՝ Գարմիշ-Պարտենկիրխենից: Այդ դիվիզիայի ռազմիկներն ունեցել են լեռներում որս անելու և մարտ վարելու մեծ փորձ, հատկապես՝ առատ ձյան պայմաններում: Յուրաքանչյուր լեռնահրաձիգ հիմնավոր պատրաստություն է ստացել մարտական իրադրությանը հնարավորինս մոտ պայմաններում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության տարածքը գերազանցապես լեռնային է՝ մեծ ուղղաձիգ գոտիականությամբ: Սահմանի զգալի հատվածներ ևս անցնում են լեռնային տեղանքով: Միջազգային փորձի և գիտական մշակումների արդյունքների հաշվառմամբ՝ նման իրադրությունում կարևոր խնդիր է դառնում ՁՈՒ-ի մարտական պատրաստման գործում լեռնային պայմաններին անձնակազմի հարմարեցման ճիշտ կազմակերպումը: Անցյալ պատերազմների փորձը ցույց է տալիս, որ լեռներում փոքր ստորաբաժանումները և նույնիսկ անհատ զինծառայողները, որոնք տիրապետում են տարբեր լեռնային խոչընդոտներ հաղթահարելու հմտությանը, ունակ են հօգուտ իրենց օգտագործելու լեռնային տեղանքի բարդ առանձնահատկությունները և, ֆիզիկապես լավ պատրաստված լինելով, կարող են ոչնչացնել թվապես գերազանցող հակառակորդին: Դրա հետ մեկտեղ լեռներում վարվող մարտական գործողությունների համար պահանջվում են անձնակազմի հատուկ հանդերձավորում, սարքավորանք, զենք ու զինամթերք, այդ գործողությունների տեսությանն ու պրակտիկային զինծառայողների լավ ուսումնավարժվածություն: Առկա վտանգների և դրանցից խուսափելու եղանակների իմացությունը, լեռնային խոչընդոտներ հաղթահարելու ունակությունը, հատուկ տեխնիկան և համազգեստը օգտագործելու հմտությունը տարվա կամ օրվա ցանկացած պահի մարտական առաջադրանքի հաջող կատարման անհրաժեշտ պայմաններն են:

Այս առումով պետք է առաջնային համարել.

– **հատուկ լեռնային մարզումը,** որը ներառում է մի շարք գործողություններ, որոնք ուղղված են ընդհանուր ֆիզիկական պատրաստությանը և լեռ-

[9] Տես *Syed Ishfaq Ali.* Fangs of Ice: The Story of Siachen. Pak American Commercial, 1991:

[10] Տես *Մուհամմադ Ասիմ Մալիկ,* Նշ. աշխ.:

նային խոչընդոտների հաղթահարման տեխնիկայի յուրացմանը, լեռներում, հատկապես՝ գիշերը, մառախլապատ եղանակին, վատ տեսանելիության պայմաններում լավ կողմնորոշվելու կարողության ձևավորմանը, հեռավորությունների ճիշտ որոշման, վրանների տեղադրման և հանգստի կազմակերպման, ինչպես նաև ուժերի պահպանման կանոնների իմացությանը: Այս գործում զինծառայողների համար կենսական կարևորություն ունի լեռնագնացության հիմքային հմտությունների ձեռքբերումը, ինչի շնորհիվ զինծառայողը ձեռք կբերի նաև իր ուժերի նկատմամբ վստահություն, լեռներում գոյատևելու, ինչպես նաև մարտ վարելու կարողություն,

– **ֆիզիկական պատրաստումը**, որն առաջին նախադրյալն է լեռներում մարտական գործողություններին պատրաստ լինելու համար: Ըստ էության, սա ուղղակիորեն կապված է տվյալ տեղանքին և կլիմայական պայմաններին օրգանիզմի հարմարման հետ: Ակնհայտ տարբերություն կա կլիմայավարժեցում անցած և չանցած ստորաբաժանումների մարտական ցուցանիշներում,

– **առաջին օգնության ցուցաբերումը** կենսական անհրաժեշտություն է ցրտահարությունից, արևհարությունից վնասվածքները և լեռնային հիվանդությունը կանխելու համար:

Եվ այսպես. կատարելով արտասահմանյան տեսական մշակումների ու մոտեցումների, ինչպես նաև մարտական գործողությունների փորձի ուսումնասիրություն՝ գալիս ենք այն եզրակացության, որ լեռներում ստորաբաժանումների մարտական գործողություններն էապես տարբերվում են ցածրադիր վայրերում կատարվող գործողություններից: Մարտական խնդրի հաջող կատարումը ուղղակիորեն կախված է անձնակազմի մարտական պատրաստականության մակարդակից:

Կարծում ենք՝ նպատակահարմար է, որ ՀՀ ԶՈՒ-ի ղեկավար կազմը ևս առանձնահատուկ ուշադրություն դարձնի ռազմական լեռնագնացության զարգացման վրա: Մեր հանրապետության աշխարհագրական պայմաններն ամենայն խստությամբ պահանջում են, որ լեռնային պատրաստումը համարվի մարտական պատրաստման հիմնական առարկաներից մեկը: Որպես անհերքելի անհրաժեշտություն պետք է դիտվի նաև զորքերին լեռներում մարտեր վարելու համար նախատեսված հանդերձանքով, այդ թվում՝ թեթև ազատ, բայց շատ տաք հագուստով, զենքով, զինամթերքով ու սարքերով ապահովումը:

Կարմիր բանակը մինչև 1943 թ. թեև ուներ լեռնահրաձգային դիվիզիաներ կոչվող զորամիավորումներ, սակայն դրանք միայն անվանապես էին պատկանում այդ դասին, ինչը Կովկասի համար մղվող կռիվներում շատ թանկ նստեց մեզ վրա, այդ թվում՝ հայ ժողովրդի, որի հարյուրավոր զավակներ զոհվեցին միայն լեռներում մարտերի վարմանը մարտավարական ու ապահովումային անպատրաստության պատճառով: Կարծում ենք՝ անցյալի դասերը չի կարելի մոռացության տալ:

ВОЕННАЯ МЕДИЦИНА

НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ПОДГОТОВКИ ЛИЧНОГО СОСТАВА К ПРОХОЖДЕНИЮ СЛУЖБЫ В ГОРНЫХ УСЛОВИЯХ

С. А. ПАРЗЯН, майор запаса, лектор цикла общевойсковой подготовки военно-медицинского факультета ЕГМУ, А. Р. АМБАРЦУМЯН, подполковник м/с, старший лектор кафедры организации и тактики медицинской службы военно-медицинского факультета ЕГМУ, Л. Г. ОГАННИСЯН, майор м/с запаса, кандидат медицинских наук, лектор кафедры военно-полевой терапии факультета военной медицины ЕГМУ

РЕЗЮМЕ

Республика Армения является горной страной с резко выраженной вертикальной зональностью, простирающейся от 400 до 4090 метров. Значительные участки государственной границы РА проходят на значительной высоте, пролегая по хребтам и их отрогам.

Данные географические условия налагают дополнительные требования к организации военной службы в аспекте адаптации организма военнослужащих к средне- и высокогорью. Для правильной организации процесса акклиматизации необходимо хорошо знать механизмы воздействия горных условий на организм человека, изучить и приспособить к местным условиям опыт организации адаптационного процесса в ведущих в этом аспекте государств и их ВС.

Основными факторами, влияющими на состояние организма в горах, являются гипоксия (“кислородное голодание”), свойственные горным ландшафтам опасные природные явления, такие, как низкие температуры и морозы, туманы, обильные снегопады, камнепады, снежные лавины, оползни, сели и т. д.

Гипоксия (гипобарическая) связана с разреженностью воздуха и снижением парциального давления кислорода, что вызывает уменьшение количества кислорода в крови в результате снижения уровня его поглощения легкими. Это приводит к возникновению горной болезни, характеризуемой головокружением, тошнотой, рвотой, чувством дискомфорта, потерей аппетита, нарушением сна. Из-за недостаточного вывода из организма углекислого газа нарушается кислотно-щелочной баланс (pH), возникает дисфункция мышечной, сердечно-сосудистой, нервной и других систем органов организма. В случае продолжения подъема на высоты более 2500 м проявление этих симптомов усиливается и может привести к смерти.

Во избежание ухудшения здоровья при подъеме в горы применяется система адаптации организма к горным условиям (акклиматизация). Для этого на различных высотах (приблизительно через каждые 1000 м, начиная с 2000 – 2500 м) организуется перерыв на

несколько дней, в течение которых обеспечивается определенный режим питания, сна и физических нагрузок.

Для пребывания в горах производится специальный отбор по показателям здоровья. Исключаются лица, недавно перенесшие инфаркт сердца, инсульт, страдающие астмой и т. п. При этом учитывается тот факт, что организм можно адаптировать к гипоксии органов, но тканевая гипоксия является врожденной и подъем в горы таких людей воспрещен.

Кроме того, для боевых действий в горах личный состав обеспечивается специальной экипировкой (легкая теплая и свободная одежда (анораки, скины, ботинки со специальными шипами)), легкое вооружение (преимущественно с крутой траекторией), специальное питание, легкие, но теплые палатки и т. д.

Однако самыми важными мероприятиями являются: горная подготовка, физическая подготовка и медицинская подготовка в части оказания первой медицинской помощи.

MILITARY MEDICINE

SOME PECULIARITIES OF PERSONNEL TRAINING FOR MILITARY SERVICE IN MOUNTAINOUS CONDITIONS

S. A. PARZYAN, Major (Ret.), Lecturer, Combined Arms Training Cycle, Military Medical Department, YSMU, A. R. HAMBARDZUMYAN, Lieutenant Colonel of Medical Service, Senior Lecturer, Chair of Organization and Tactics of Medical Service, Military Medical Department, YSMU, L. G. HOVHANNISYAN, Major of Military Medicine (Ret.), PhD in Medicine, Lecturer, Chair of Battlefield Medicine, Department of Military Medicine, YSMU

SUMMARY

The Republic of Armenia is a mountainous country with a pronounced vertical zonality extending from 400 to 4090 meters. Sizeable sections of the RA state border extend at a considerable height, running along the ridges and their branches.

These geographical conditions impose additional requirements on the organization of military service in terms of the adaptation of the servicemen’s bodies to medium and highland terrains. For the correct organization of the acclimatization process, it is necessary to properly know the mechanisms of the impact of mountainous conditions on the human body, to study and adjust the experience of organizing the adaptation process in the leading states in this aspect and their Armed Forces to the local conditions.

The main factors affecting the state of the body in the mountains are hypoxia (“oxygen starvation”), hazardous natural phenomena peculiar to

mountainous landscapes, such as low temperatures and frosts, fogs, heavy snowfalls, rockfalls, snow avalanches, landslides, mudflows, etc.

Hypoxia (hypobaric) is associated with the rarefaction of air and the decrease in the partial oxygen pressure, which causes a reduction in the amount of oxygen in the blood because of a decrease in the level of its absorption by the lungs. This leads to the occurrence of altitude sickness, characterized by dizziness, nausea, vomiting, discomfort, lack of appetite, trouble sleeping. Due to insufficient removal of carbon dioxide from the body, the acid-base balance (pH) is disturbed, and the dysfunction of the muscular, cardiovascular, nervous, and other systems of body organs occurs. If one continues to ascend above 2500 m, the emergence of these symptoms intensifies and can lead to death.

In order to avoid the deterioration of health when ascending mountains, a system of body adaptation to mountainous conditions (acclimatization) is used. To do this, at various altitudes (approximately every 1000 m, starting from 2000 – 2500 m) a break is organized for several days during which a certain diet, sleep and physical activity are provided.

To stay in the mountains, a special sampling according to health indicators is made. Persons who have recently suffered a heart attack, stroke, asthma, etc., are excluded. This takes into account the fact that the body can be adapted to hypoxia of organs, but tissue hypoxia is congenital and ascending mountains is prohibited for such people.

In addition, for combat operations in the mountains, the personnel are provided with special equipment (light warm and loose clothing (anoraks, skins, boots with special crampons)), light weapon (mainly with a high-angle trajectory), special food, light but warm tents, etc.

However, the most important measures are mountain training, physical training, and medical training in terms of rendering first medical aid.

«ՍՊԱՐԱՊԵՏ» ԵՎ «ՀԱԶԱՐԱՊԵՏ» ԲԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ*

Ա. Ռ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու, Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բառապաշարի բառիմաստային տեղաշարժերի հիմքում մարդու ճանաչողական և խոսքային գործունեությունն է, ընդ որում դրանց միջև կապը խորքային է, աներևույթ: Մարդու ճանաչողական գործունեության այս քողարկված մեխանիզմներն էլ իրացվում են բառերի նոր նշանակություններում, դրանց իմաստային կառուցվածքում *ընդհանրացման* և *ճշգրտման* փոխադարձ հավասարակշռմամբ[1]: Այդ մեխանիզմների զարգացումը անվերապահորեն պայմանավորված է մարդու կենսագործունեության ընթացքում բառույթի** իմաստային կառուցվածքում շարունակ կուտակվող և փոփոխություններ «թելադրող» մշակութային էական տեղեկույթի ամրապնդմամբ, որն իրականացվում է ճանաչողական-իմաստաբանական մեխանիզմների՝ շարունակաբար «ծնվող ու մահացող» առարկաների ու երևույթների նկատմամբ լեզվի զարգացման ցանկացած ժամանակագրական հատվածում մարդու նորովի հայացքի միջոցով: Վերջինս երբեք չի կարող համարվել վերջնականապես ավարտուն, քանի որ նոր առարկա կամ երևույթ անվանելիս մարդու որոնող միտքը նախևառաջ ուղղված է նախորդ ժամանակահատվածի ճանաչողական կառուցվածքներին: Ասել է, թե կատարվում է շերտադրում. արդեն ձևավորված բառապատկերը «տեղավորվում է» նախկինում իրեն ոչ հարաբերակից շրջակա աշխարհի երևույթների վրա: Որպես բառույթների իմաստային զարգացման այս քողարկված ընթացքի արդյունք՝ բառերն իրացնում են նոր

* Հոդվածը նախնական տեսքով ներկայացվել է 14.11.2022: Հոդվածի գրախոսությունը ստացվել է 20.12.2022:

[1] Տես *Р. А. Будагов.* Что такое развитие и совершенствование языка? М., 2004:

** Բառույթ (лексема, lexeme). լայն իմաստով նշանակում է բառն իբրև ձևիմաստային միավորների (բառային իմաստի և բառափոխական ձևերի ամբողջություն), նեղ իմաստով՝ բառը վերցրած իր բոլոր բառափոխական ձևերի ամբողջության մեջ (տես *Հ. Զ. Պետրոսյան, Ս. Ա. Գալստյան, Թ. Ա. Ղարագյուլյան,* Լեզվաբանական բառարան: Ե., 1975):

նշանակություններ, փոխանվանական և փոխաբերական անցումների շնորհիվ դառնում բազմիմաստ, այնուհետև հող է նախապատրաստվում բառույթի իմաստային կառուցվածքից «հին» նշանակության լիակատար դուրսմղման համար: Այսպիսով՝ *մտքի նոր բովանդակության և այսպես կոչված հին նշանակության* միջև ծայր առած հակասությունը հանգեցնում է լեզվական նշանի իմաստի որակական փոփոխության: Եվ քանի որ վերջինիս իմաստափոխությունն ավելի արագ է ընթանում, քան մարդկային միտքը, սա հնարավորություն է ստեղծում, որ սերունդներն իրար հասկանան, մինչև քանակական փոփոխությունները կհանգեցնեն լեզվի համակարգում որակական փոփոխությունների՝ բառիմաստային նոր խմբերի առաջացմանը և հների մահացմանը:

Ասվածի համատեքստում մենք կատարել ենք ***«Անձերի անվանումներ»*** բառիմաստային դաշտում գործառող «Զինվորական կոչումներ և աստիճաններ» ենթաբազմության ***սպարապետ*** և ***հազարապետ*** բառույթների իմաստային-տարաժամանակյա ուսումնասիրություն.

ա) քննել ենք բառույթների իմաստային կառուցվածքի զարգացման բառարանագրական մշակումները ժամանակագրական կարգով՝ հինհայերենյան շրջանից մինչև մեր օրերը*,

* Դժբախտաբար, հայերենն արդեն կես դար է՝ չունի արդի հայերենի լիակատար բացատրական բառարան, և նորագույն շրջանի իմաստային տեղաշարժերը փաստող իրողությունների համար չկան բառարանային համապատասխան մշակումներ: Հայերենի՝ ավելի քան 1500-ամյա ընթացքն արտացոլող դեռևս չգերազանցված բառարանը եղել և մնում է Ստ. Մալխասյանցինը (անշուշտ՝ Հայկազյանից հետո), որում պատմական տվյալ շրջանի դրությամբ լավագույնս արտացոլված են բառի իմաստային կառուցվածքի նախընթաց փոփոխությունները, հավելյալ կերպով՝ նաև ծագումնաբանությունը, բառապաշարի այս կամ այն շերտին պատկանելը և ամենակարևորը՝ կենդանի խոսքում նրա իրացումը: 20-րդ դարի սկզբին ձեռնամուխ լինելով այս մեծակտավ աշխատությանը՝ Մալխասյանցը իրավացի մտահոգություն է հայտնում. «Թէպէտ բաւական թուով բառարաններ կան տպված հայերէն լեզուով կամ հայերէն ու մի օտար լեզուով՝ բայց ոչ մէկը նրանցից հայերէն լեզուի բառարան չէ, այս բառի ընդարձակ նշանակութեամբ: Հայերէն և մի օտար լեզուով բառարանները նպատակ ունին՝ որևէ օտար լեզու սովորեցնելու հային կամ հայերէն սովորեցնելու որևէ օտարի. սրանք կէս-հայերէն, կէս-օտարալեզու բառարաններ են և չեն ծառայում հային հայերէն սովորելու: Իսկ այն բառարանները, որոնք միայն հայերէն լեզուով են տպված՝ մասնակի հայերէն բառարաններ են, այսինքն պատկանում են հայերէն լեզուի զարգացման մի որոշ շրջանի: .... պարունակում են մեր լեզուի զարգացման գրաբարեան շրջանի բառերը և այս բառերի հին (գրաբար) նշանակութիւնները, բայց չունին ներկայ կենդանի հայերէն լեզուի տասնեակ հազարաւոր բառերը, ինչպէս և հին (գրաբարի) բառերի այժմեան կենդանի նշանակութիւնները» (տես *Ստ. Մալխասեանց,* Հայերէն բացատրական բառարան (այսուհետ՝ ՀԲԲ), 4 հատորով, հ.1: Ե., 1944, «Առաջաբան», էջ է): Այս մտահոգությունը կարելի է տարածել նաև հայերենի նոր և, հատկապես, նորագույն շրջանի բառարանագրության վրա: Բառարանագրական մշակումները ներկայացնելիս մինչև խորհրդային շրջան (1920) մենք առաջնորդվել ենք առավելապես Մալխասյանցով, սակայն գիտական պատշաճությունը պահպանելու մղումով հղել ենք նաև այն բառարանները, որոնցում քննվող բառույթի իմաստային կառուցվածքում առկա է նոր իմաստույթ՝ հիմնավորված կենդանի խոսքային իրացումներով:

բ) ի հայտ ենք բերել այդ հսկայական պատմական ժամանակահատվածում բառույթների կրած իմաստափոխությունների ճանաչողական-իմաստաբանական մեխանիզմներ,

գ) պարզել ենք բառույթների իմաստային անցումները այլ բառիմաստային խմբերում և ենթաբազմություններում:

ՍՊԱՐԱՊԵՏ[2]

- Հինհայերենյան շրջանում իրացվել է գոյականի արժեքով «սպայապետ, զորապետ» միջուկային իմաստույթը (հմմտ. «գ. իբր Սպայապետ. զօրապետ. զորավար մեծ կամ փոքր. առաջնորդ զօրու… [Մեռաւ սպարապետն ամենայն հայոց արտաւազդ մանդակունի. Ագաթ.»], ՆՀԲ[3], էջ 738, «գ. սպայից պետ, զօրավար», ԱԲՀԼ[4], էջ 731)[5]: Հինհայերենյան շրջանում բառույթն ընդլայնել է իր հոմանիշային շարքը հայերեն (հմմտ. *զօրավար, զօրագլուխ, զօրապետ*)[6] և փոխառյալ տերմիններով (հմմտ.

[2] Ըստ Հր. Աճառյանի՝ «…. «սպարապետ» կազմուած պիլ. spah «բանակ»+pat «պետ» բառերից: Արշակունեան շրջանին բառս տուել է հյ. **սպարապետ**, իսկ աւելի նոր սասանեան շրջանին՝ երկրորդ անգամ փոխ առնուելով՝ եղել **ասպահապետ**»: Աճառյանը մեկնում է նաև Հայկազյանով՝ «սպայապետ, կամ հայերեն **ասպար** բառից՝ **ասպ**՝ «ձի» բառից պրսկ. asabarapati և suwarbad «պետ հեծելազօրաց» (տես *Հր. Աճառեան,* Հայերէն արմատական բառարան (այսուհետ՝ ՀԱԲ): Ե, 1926, հ. 4, էջ 263, հմմտ. նաև՝ *Գ. Ջահուկյան,* Հայերեն ստուգաբանական բառարան (այսուհետ՝ ՀՍԲ): Ե., 2010, էջ 692:

[3] Տես *Հայր Գաբրիէլ Աւետիքեան, Հայր Խաչատուր Միրմէլեան, Հայր Մկրտիչ Աւգերեան,* Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետ՝ ՆՀԲ): Վենետիկ, 1836:

[4] Տես *Հայր Մկրտիչ Աւգերեան, Հայր Գրիգոր Ճէլալեան,* Առձեռն բառարան հայկազնեան լեզուի (այսուհետև՝ ԱԲՀԼ): Վենետիկ, «Սուրբ Ղազար», 1865:

[5] Ուշագրավ է, որ այս շրջանի մեկ այլ հայտնի բառարանի վկայությամբ բառույթն իրացրել է նաև «**կուսակալ**» (հմմտ. *Հայր Մանուէլ վարդապետ Ջախջախեան,* Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական (այսուհետ՝ ԲԲՀԻ): Վենետիկ, «Տպարան Սրբոյն Ղազարու», 1837, էջ 1266), իսկ նախախորհրդային շրջանի արևմտահայ մեկ այլ վկայությամբ՝ նաև «**պատերազմական նախարար**» ծայրամասային իմաստույթները (հմմտ. *Ս. Գաբամաճեան,* Նոր բառգիրք հայերէն լեզուի (այսուհետ՝ ՆԲՀԼ): Կ. Պոլիս, «Տպագրութիւն Ռ. Սագաեան», 1910, էջ 1208): Ի դեպ, միջինհայերենյան վկայությունները դուրս են մնացել մեր քննությունից, որովհետև միջին հայերենի միակ լիակատար բառարանում (տես *Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան,* Միջին հայերենի բառարան: Ե., 2009) ներկայացված է զուտ 12-16-րդ դարերի. բառամթերքը, որը ձևաիմաստային առումով բնորոշ չէ գրաբարին, ուստիև չի արտացոլում բառույթի իմաստային զարգացման գրաբար-միջին հայերեն ընթացքը: Վաղաշխարհաբարյան վկայություններում բառույթը հանդես է եկել **սպառապետ** բառակազմական տարբերակով (հմմտ. *«գ. Սպարապետ [Որք երբեմն թագադիրք լեալք Արշակունեաց եւ այժմ վերստին ստեղնեալ եւ պտղաբերեալ թագաւորութեամբն, զի այժմ սպառապետ կոչեցեալ (Մժ II, 336):]»*), տես *Ն. Պողոսյան,* Նորահայտ բառեր վաղաշխարհաբարյան աղբյուրներում: Ե., 2014, էջ 186:

[6] Տես և հմմտ. ՆՀԲ, հ. 1, էջ 755–756:

ամիրսպասալար[7], *սպասալար*[8], (հզվդ.)՝ *ասպահապետ, ասպարապետ, սպահապետ»),* միջին հայերենում հավելվել են փոխառյալ տերմիններ ֆրանսերենից (հմմտ. *գունդստաբլ*[9], *մարաջախտ*[10]) (հմմտ. ՀԼՀԲԲ[11], էջ 1016): Այս շրջանից ընդլայնվել է նաև բառույթի բաղադրական շարքը (հմմտ. *սպարապետութիւն, սպարապետական, ասպարապետ, ասպարապետութիւն*):

- Աշխարհաբարի խորհրդային շրջանի արևելահայ և արևմտահայ վկայություններում բառույթի հինհայերենյան «սպայապետ» միջուկային իմաստույթը չեզոքացվել է՝ դիտվել *մեռած կամ հազվադեպ* կիրառվող (վերջինս՝ միայն բարձր ոճերում), իսկ նույն շրջանի ծայրամասային իմաստույթների ընդհանրացմամբ (հմմտ. «զորավար մեծ կամ փոքր») ձևավորվել է *«բանակի/զորքի* գլխավոր հրամանատար» միջուկային իմաստույթը (հմմտ. «(հին պարսկ. *spadapati,* պահլ. *spadpat,* պարսկ. *sipahbad*), գ. Զօրաբանակի գլխաւոր հրամանատար, զօրավար: 2. (մեռ., հզվդպ.) Զինուորական մինիստր (Տաճկաստանում): Տ[ե՛ս]. և Ասպահապետ, որ նոյն բառի նորագոյն փոխառութիւնն է», ՀԲԲ, հ.4, էջ 255, տես և հմմտ. նաև «(մեռ.) ԱՍՊԱՀԱՊԵՏ (պահլ. spāhpāt), գ. Զօրավար (Պարսկաստանում): (Բառի հայացրած ձևն է Սպարապետ)», ն.տ. հ.1, էջ 236, «գ. 1. առաջին և ընդհանուր զօրավար բոլոր սպաներուն և բանակին. 2. մարաջախտ, գերագոյն հրամանատար», ՀԱԼԼԲ[12], էջ 1290, «գ.(պատմ.) Բանակի գլխավոր հրամանատար [Զորքերի *ընդհանուր սպարապետը ընտրվում էր Մամիկոնյան*

[7] Վկայվել է նաև հարադրական ձևով. **ամիր սպասալար**՝ «մեծ սպարապետ» (հմմտ. ՆՀԲ, հ. 1, էջ 71, նաև՝ ՀԱԲ, հ. 1, էջ 159):

[8] Ծագում է Սասանյան պահլավերենից՝ spāh «զօրք, բանակ» + sālār «սալար, զօրագլուխ» (հմմտ. ՀԱԲ, հ. 4, էջ 263). բացի «զօրագլուխ» իմաստույթից՝ իրացրել է «....լայնաբար՝ Սեպուհ զօրական. ընտիր այրուձի. ազատ [*Ամիր սպասալար շահնշահ զաքարիա*]» իմաստույթները (հմմտ. ՆՀԲ, հ. 2, էջ 737):

[9] Հին հայերենում վկայվել է նաև **գունդստապլ/գոնդստապլ** բառային տարբերակներով՝ «կոմս ախոռի, ախոռապետ» իմաստույթով՝ որպես ռոմանական լեզուներից (հմմտ. լատ. Comes stabuli > իտալ. Conestabile > իսպ. Condestable > հին ֆրանս. conestable, cunestable)բառացի թարգմանություն (հմմտ. ՆՀԲ, հ. 1, էջ 581): Կիլիկյան Հայաստանում ճանաչվել է որպես տիտղոս՝ արքունական պալատի բարձրագույն պաշտոնյա, վկայվել նաև **սպարապետ** ծայրամասային իմաստույթով (հմմտ. ՀԲԲ, հ. 1, էջ 469, նաև՝ ՀԱԲ, հ. 1, էջ 595):

[10] Ըստ Հր. Աճառյանի՝ փոխառվել է հին ֆրանսերեն mareschalt-ից՝ «իշխան զորավար» միջուկային իմաստույթով (հմմտ. ՀԱԲ, հ. 3, էջ 273, *նաև* ՆՀԲ, հ. 2, էջ 217). ստուգաբանորեն նշանակել է «ձիադարմանիչ, պայտառ», իսկ Ռուբինյանների ժամանակ իրացրել «բաձրագույն զինվորական աստիճանավոր, զորավար, մարշալ» իմաստույթը (հմմտ. ՀԲԲ, հ. 3, էջ 271):

[11] Տես *Ա. Սուքիասյան,* Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան (այսուհետ՝ ՀԼՀԲԲ): Ե., 2009:

[12] Տես *Պետրոս վարդ. Ճիզմէճեան,* Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան: Հալէպ, «Տպարան Անի», 1954):

նախարարությունից (Ր)»], ՀԼՆԲ[13], *հ. 2, էջ 832, ԺՀԼԲԲ*[14], *հ. 4, էջ* 325, «գ. (պատմ.) Պետության զորքերի ընդհանուր գերագույն հրամանատար», ԱՀԲԲ[15], հ. 2, էջ 1324):

- Նորագույն՝ Անկախության շրջանում իմաստի թարմացմամբ բառույթը հանդես է եկել բարձր ոճերում՝ «մեծ զորավար» ընդհանրական իմաստույթով (հմմտ. **Սպարապետ** Վազգեն Սարգսյան):

ՀԱԶԱՐԱՊԵՏ[16]

- Հինհայերենյան շրջանում հանդես է եկել հարուստ իմաստային կառուցվածքով՝ «զինվորական պաշտոնյա՝ հազար զինվորի հրամանատար» միջուկային իմաստույթով (հմմտ. «գ. 1. Պետ և գլուխ հազարաց՝ և զօրու. կամ ի կարգաւորեալ բազմուե։ 2. Իշխան հրամանատար, և հոգաբարձու. վերակացու. եպարքոս. դուքս. ոստիկան. նախարար։ 3. Տնտես. վերակացու տան արքայի, իշխանի ևն [*Մատակարար կամակոր, հազարապետ գողամիտ, Նար.*»], ՆՀԲ, հ. 2, էջ 3, նաև՝ «գ. 1. հազար զինուորի գլուխ. տ[ես] պին պաշը։ 2. իշխան, վերակացու. տ[ե՛ս] պէյ, փաշա, միւպաշիր։ 3. տնտես, գործակալ. տ[ե՛ս] քեահեա, վէքիլխարճ։ - տես և Տնտես, Կոնոմոս», ԱԲՀԼ, էջ 458), նաև՝ *հազարապետութիւն* բաղադրությամբ՝ որպես 1. «իշխանութիւն և պատիւ հազարապետի զօրուն», 2. «կուսակալութիւն, դքսութիւն, եպարքոսութիւն», 3. «տնտեսութիւն» (հմմտ. ՆՀԲ, և.տ., նաև՝ ԲԲՀԻ, էջ 814), նոր շրջանի վկայությամբ՝ «հազարապետի պաշտոնը» (հմմտ. ԱՀԲԲ, հ. 1, էջ 789):
- Աշխարհաբարի նախախորհրդային և խորհրդային շրջանների արևելահայ և արևմտահայ վկայություններում բառույթը վկայվել է *հին* կամ *պատմաբան* նշումով (հմմտ. «գ. հազար զինուորի գլուխ. իշխան. վերակացու. տնտես. գործակալ. մատակարար [*Մեծ հազարապետ*]. առաջին պաշտօնեայ տէրութեան», ՆԲՀԼ, էջ 757, «գ. (հին) 1. Իբրև զինուորական պաշտօնեայ՝ հազարի պետ, հազար զինուորի հրամանատար *[Յիսնապետներ, հարիւրապետներ, հազարապետներ]*։ 2. (հին) Սասանեանների ժամանակ՝ Հայաստանում արքունի գործակալ, որ երկրի հարկը հաւաքում էր և Պարսկաստան ուղարկում, ընդհանրապէս երկրի

[13] Տես *Գնէլ արք. Ճէրէճեան, Փ. Կ. Տօնիկեան,* Հայոց լեզուի նոր բառարան։ Պէյրութ, «Կ. Տօնիկեան եւ Որդիք», 1992):

[14] «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան» (այսուհետ՝ ԺՀԼԲԲ)։ Հր. Աճառյանի անվան Լեզվի ինստիտուտ։ Ե., 1969։

[15] Տես *Էդ. Աղայան,* Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետ՝ ԱՀԲԲ)։ Ե., 1976։

[16] Ըստ Հր. Աճառյանի՝ փոխառություն է պահլավերենի hazārapat ձևից. «....Հին Պարսից մէջ **հազարապետը** բարձրագոյն տիտղոսներից մէկն էր. այսպէս էին կոչւում Բիւրուց Անմահից գնդի 10 հրամանատարները, որոնց իւրաքանչիւրը 1000 զինուոր ունէր։ Սրանք էին նաև արքունիքի հետ եղած յարաբերութեանց հսկիչը, մեծ դահճապետ, հրամանատար արքայի ևն» (հմմտ. ՀԱԲ, հ. 3, էջ 6–7, նաև՝ ՀՍԲ, էջ 437)։

տնտեսական կեանքի վրայ հսկող: 3. (հին) Արքունական տան ելևմուտքը կառավարող, տնտես, էկոնոմոս կ[ա]մ կոնոմոս [*Մեծ հազարապետ կ[ա]մ Հազարապետ Արեաց (և Անարեաց)*], Սասանեանների ժամանակ Պարսկաստանում բարձրագոյն պաշտօնեան, թագաւորի մերձաւոր խորհրդականը, որ վարում էր երկրի ներքին և արտաքին քաղաքականութիւնը [*Միհրներսեհ մեծ հազարապետ*]», ՀԲԲ, հ. 3, էջ 9, տե՛ս և հմմտ. նաև՝ ԺՀԼԲԲ, էջ 253, ԱՀԲԲ, էջ 789:

- Անկախության շրջանի հոմանիշների հայտնի համահավաք բառարանում արդեն բառույթի իմաստային կառուցվածքը «սեղմվել է». հինհայերենյան ծայրամասային իմաստույթը (հմմտ. «տնտես, վերակացու տան արքայի, իշխանի») վերածվել է միջուկայինի, իսկ «զինվորական պաշտոնյա՝ հազար զինվորի հրամանատար» միջուկայինը՝ անցել նույն՝ «Անձերի անվանումներ» բառիմաստային դաշտի մեկ այլ՝ «Զինվորական աստիճաններ և կոչումներ» նշանակող բառիմաստային ենթաբազմության (միկրոհամակարգի) տիրույթ (հմմտ. «գ. (պատմ.) 1. Հանդերձապետ (սասանյան դարաշրջանում արքունի գործակալ, տնտեսական գործերի կառավարիչ): 2. Տես Գնդապետ», ՀԼՀԲԲ, էջ 564):
- Հայերենի տարբեր գոյավիճակներում բառույթի իմաստային կառուցվածքում աստիճանավորման (միջուկից ծայրամաս և հակառակը, միջուկային և ծայրամասային իմաստույթների չեզոքացում կամ հնացում, ծայրամասայինների քանակական աճ, փոխաբերացում, տերմինացում ևն) նկատվել են զգալի տեղաշարժեր, որոնք տվել են իրենց ածանցյալները «Անձերի անվանումներ» բառիմաստային դաշտի այլ բառիմաստային ենթաբազմություններում և խմբերում: Այսպես. հայերենի զարգացման տարբեր գոյավիճակներում այլ բառիմաստային ենթաբազմության կամ բառիմաստային խմբի տիրույթում այլ իմաստային կառուցվածքով ակտիվորեն գործառել են **հազարապետ** բառույթի հինհայերենյան ծայրամասային իմաստույթները՝ *դաշտի* մյուս անդամների հետ ձևավորելով *առնչակից հարաբերություններ*, հանդես գալով բառապաշարի տարբեր շերտերում և ոճերում, ինչպես՝ *«ըստ պարտավորության, պայմանագրի, հանձնառության, խնամատարության, ժառանգորդության»*[*] (հմմտ. **հոգաբարձու**), «ըստ դատական մարմիններում, վարչաիրավական *հաստատություններում ծառայելու հանգամանքի*»[**]

[*] Այս բառիմաստային խմբում գործառում են նաև **երաշխավոր** (գրք.), վստահորդ (պաշտ.), **կտակակատար** (հնց.)/ **կտակարար** (իրավ.), **պարտապան** (իրավ.), **ժառանգորդ** (հտկ.), **խնամարկու, պատրոն** (Պատրիկ-հովանավոր Հին Հռոմում, որը դատարանում պաշտպանում էր իր ճորտերին ու պլեբեյներին), **հավատարմատար** (գրք.), **հանձնակատար** (պաշտ.), **իրավահաջորդ** (հտկ.), **որդեգիր** (պաշտ.) և այլ բառույթներ:

[**] Այս բառիմաստային խմբում գործառում են նաև փաստաբան, իրավարար (արբիտր, միջնորդ դատավոր), **աուդիտ, նոտար, մեղադրող** (իրավ.), **դատավոր** և այլն, նաև՝ ոճական նշույթավորմամբ՝ բացասական երանգավորմամբ «*բանտային ծառա-*

(հմմտ. (հնց.) **վերակացու**), «*ըստ որոշակի պաշտոնի, գործառույթի*»* (հմմտ. **ոստիկան**), նաև փոխառյալ բառույթներ՝ «*ըստ պետական բարձրագույն պաշտոնատար անձ լինելու հանգամանքի*»** (հմմտ. **եպարքոս**), «*ըստ ազնվականական տիտղոսներ, աստիճաններ ունենալու հանգամանքի*»*** (հմմտ. **դուքս**):

ԱՅՍՊԻՍՈՎ՝

«Անձերի անվանումներ» բառիմաստային դաշտի շրջանակում «Զինվորական կոչումներ և աստիճաններ» նշանակող բառիմաստային խմբում ներկայացված **սպարապետ** և **հազարապետ** բառույթների իմաստային կառուցվածքի զարգացման բառարանագրական մշակումներից կարելի է եզրակացնել.

- հինհայերենյան շրջանում **սպարապետ** բառույթի իմաստային իրացումները պահպանվել են «Զինվորական կոչումներ և աստիճաններ» նշանակող բառիմաստային խմբի տիրույթում՝ «*զորքի հրամանատար*» միջուկային գերիմաստույթով (архисема) (հմմտ. *սպայապետ, զօրապետ*), իսկ նույն շրջանի մեկ այլ վկայությամբ՝ նաև *կուսակալ* ծայրամասային իմաստույթով: Այս շրջանում բառույթն ընդլայնել է իր հոմանիշային շարքը հայերեն (հմմտ. *զօրավար, զօրագլուխ, զօրապետ*) և փոխառյալ ձևերով (հմմտ. *ամիրսպասալար, սպասալար, ասպահապետ, ասպարապետ, սպահապետ*), իսկ միջին հայերենում հավելվել են *գունդստաբլն* ու *մարաջախտը*, որոնք հանդես գալով արդեն կազմավորված պետական համակարգում, ճշգրտել են *սպարապետ* բառույթի նախորդ՝ «*զորքի կողքին անմիջականորեն կռվող հրամանատար*» ընդհանրական իմաստույթը՝ իրացնելով «*արքունի*

յողներ, մահապատիժ իրականացնողներ» նշանակող բառույթներ, ինչպես՝ **դահիճ, բանտապան, էկզեկուտոր** (հնց.) և այլ բառույթներ:

* Այս բառիմաստային խմբում գործառում են նաև **ատաման**, (գումարտակի/ դասակի/ գնդի/ բրիգադի ևն) ≈ **հրամանատար, գերագույն հրամանատար, պարետ, կոմիսար, ոստիկանապետ, գնդապետ, հարյուրապետ, նախարար** (հնց.), և այլ բառույթներ: Ի դեպ, **նախարար**-ը անկախության շրջանում իմաստի թարմացում է ապրել (տես **մինիստր**):

** Այս բառիմաստային խմբում գործառում են նաև **բուրգոմիստր** (քաղաքապետ), (փոխ-) **նահանգապետ**, (փոխ-) **նախագահ**, (փոխ-) **վարչապետ**, **գեներալ-նահանգապետ** (հնց.), **կուսակալ/տեղապահ** (հնց.), **դոժ** (Հանրապետության ղեկավար միջնադարյան Վենետիկում և Ջենովայում), **հյուպատոս, մարշալ** (Լեհաստանում՝ Սեյմի մարշալ), **ժողկոմ** (հնց.), **պրոկուրատոր** (կայսեր կալվածքների կառավարիչ Հին Հռոմում), **ռայխսկանցլեր** (հնց.), **կանցլեր**, **սատրապ** (շահի կուսակալ հին Պարսկաստանում), **խոսնակ** (տես սպիկեր), **ավագանի** և այլ բառույթներ:

*** Այս բառիմաստային խմբում գործառում են նաև **բարոն**(-ուհի), **բեյ/բեկ**, **գրանդ** (հնց.- Իսպանիայում), **կոմս** (հնց.), **դյուկ** (հնց.- Ֆրանսիայում), **իշխան** (հնց.), **լորդ, վիկոնտ** (հնց.), **մարկիզ** (հնց.), **պեր** (հնց.), **սըր**, (բարձր) **գերազանցություն/ պայծառափայլություն**, **բարձր բարեծննդություն** (հնց.), **բարձր սրբազնություն** և այլ բառույթներ:

բարձրագույն զինվորական պաշտոնյա» միջուկային, իսկ ծայրամասայինում՝ *«սպարապետ, զորավար»* իմաստությունները:

- Աշխարհաբարի նախախորհրդային և խորհրդային շրջանի արևելահայ և արևմտահայ վկայություններում բառույթի հինհայերենյան «սպայապետ» միջուկային իմաստույթը չեզոքացվել է՝ դիտվել *մեռած* կամ *հազվադեպ* կիրառվող, իսկ նույն շրջանի ծայրամասային իմաստույթների ընդհանրացմամբ վկայվել որպես *պատմաբառ:* Նորագույն՝ անկախության շրջանից իմաստի թարմացմամբ բառույթը հանդես է եկել բարձր ոճերում՝ «*մեծ զորավար»* ընդհանրական իմաստույթով:
- **Հազարապետ**-ի հինհայերենյան իմաստային կառուցվածքը հարուստ է եղել. իրացրել է «*զինվորական պաշտոնյա՝ հազար զինվորի հրամանատար*» միջուկային և մի շարք ծայրամասային իմաստույթներ:
- Հայերենի զարգացման տարբեր գոյավիճակներում բառույթի իմաստային կառուցվածքում նկատվել են *աստիճանավորման* զգալի տեղաշարժեր. բառույթի ծայրամասային իմաստույթները տվել են իրենց ածանցյալները «Անձերի անվանումներ» բառիմաստային դաշտի **այլ** բառիմաստային ենթաբազմություններում և խմբերում՝ գործառելով բառապաշարի տարբեր շերտերում և ոճերում:

Այսպիսով՝ լեզվի զարգացման տարբեր գոյավիճակներում փոփոխվում է ոչ թե բառիմաստային դաշտ-համակարգը, այլ նրա ներսում առկա որոշ հատվածներ և հարաբերությունները նրանց միջև, որովհետև **ԴԱՇՏ**-ում գործառող ցանկացած ենթաբազմության կամ խմբի անդամ բազում իմաստային թելերով՝ հարաբերություններով, կապված է ամբողջ համակարգում գործառող մյուս անդամների հետ, իսկ վերջիններիս ամեն մի փոփոխություն հանգեցնում է լեզվի բառային կազմի որակական տեղաշարժի:

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈԿ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով (առավելագույնը 20000 նիշ՝ ներառյալ բացատները), հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները ոչ ավելի, քան 1 (մեկ) էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

Военно-научный журнал Национального исследовательского университета обороны МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала (максимально 20000 знаков, включая пробелы), с приложением резюме на русском и английском языках объемом не более одной страницы.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of National Defense Research University of the Ministry of Defense of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length (maximum 20000 characters with spaces). Provide Russian and English summaries (no more tham 1 page long).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Զ. Դ. Ասատրյան*
Պատասխանատու քարտուղար՝ *Ա. Ա. Խաչատրյան*
Լեզվական խմբագրման խմբի պետ՝ *Ք. Վ. Փիրոյան*
Տեխնիկական բաժանմունքի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*

Պատասխանատու խմբագիր՝ *Գ. Շ. Հարությունյան*

Տեխնիկական խմբագրումը՝ *Ս. Ռ. Հակոբջանյանի*

Թարգմանիչներ՝ *Ա. Ա. Մարտիրոսյան, Ն. Ս. Մկրտչյան, Թ. Դ. Չիլինգարյան*

Համակարգչային ապահովումը՝ *Վ. Ռ. Խալաֆյանի, Լ. Հ. Պապիկյանի, Տ. Մ. Տիրացույանի*

Ձևավորող նկարիչ՝ *Գ. Վ. Իսկանդարյան*

Սրբագրումը՝ *Ն. Հ. Բաղդասարյանի*

Լուսանկարչական ապահովումը՝ *Գ. Վ. Իսկանդարյանի և համացանցային*

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. Ռիլնեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25
Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ http://www.mil.am/arm/index.php?page=105
Պաշտոնական բլոգ-կայքը՝ http://razmavaraget.wordpress.com
Էլ. հասցեն՝ haykakanbanakmod@gmail.com

© ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի
«Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2022 թ.

Ստորագրվել է տպագրության 30.12.2022:
Թուղթը՝ օֆսեթային: Չևաչափը՝ 70x100 1/16:
Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր:
Պայմանական տպագրական 10,5 մամուլ:
Տպաքանակը՝ 400: Տառատեսակները՝ «Arial», «Arial Unicode», «GHEA Grapalat», «Russian Baltica», «Times»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «ԼԻՄՈՒՇ» տպարանում

Սարդարապատի ճակատամարտի քարտեզը՝
կազմված մարշալ Բաղրամյանի ձեռքով
(ակադեմիկոս Գ. Ղարիբջանյանի անձնական արխիվից,
առաջին անգամ հրատարակվել է հանդեսի 1997 թ. 4-րդ համարում)

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

АЙКАКАН БАНАК HAIKAKAN BANAK 4 (114). 2022